

# ՄԵՐ ԵՐԱԶԱԾ ՀԱՄԱՑԱՆՑԸ

ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ և ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

PUBLISHED BY European Schoolnet 2017

# Հատուկ շնորհակալություն.

- Insafe ցանցի անդամներին , երեխաներին և երիտասարդներին առցանց տեխնոլոգիաներից օգտվելու մասին համապատասխան խորհրդատվություն տրամադրելու համար,
- Եվրոպական հանձնաժողովին, Insafe ցանցին և eTwinning ծրագրին՝ ցուցաբերած աջակցության համար: Ձեռնարկը երկու ծրագրի պատասխանատու անձանց համագործակցության արդյունք է և ներառում է հիշյալ երկու ցանցի նյութերը,
- **Google-ին** և **Liberty Global-ին՝** սույն ձեռնարկն իրականություն դարձնելու համար,
- Բազում, այդ թվում՝ eTwinning ցանցի ուսուցիչներին, ովքեր ներդրում են ունեցել և փորձարկել են ձեռնարկի առաջադրած յուրաքանչյուր գործողություն,
- Եվրոպական դպրոցական ցանցի թիմին և ներգրավված կրթության նախարարներին՝ համագործակցության, առցանց տեխնոլոգիաներն ուսման մեջ կիրառելու միջոցով կրթության որակը վերափոխելու համար,
- «Մեդիակրթության կենտրոնին», որն «Ապահով համացանց» ծրագրի շրջանակներում նախաձեռնեց և ստեղծեց «Մեր երազած համացանցը» գրքի հայերեն տարբերակը:

# Նախաբան

21-րդ դարում շատ երիտասարդների համար սոցիալական ցանցերում առցանց շփումները և որպես անհատ ներկայանալը նույնքան կարևոր են, որքան կյանքի այլ կարևորագույն երևույթները: Հետևաբար ուսուցիչները պետք է օգնեն երիտասարդներին առավելագույնս օգտվելու առցանց տեխնոլոգիաների և սոցիալական մեդիաների ընձեռած հնարավորություններից՝ զարգացնելով բազային հմտությունները, թերևս ավելի կարևոր է, որ ուսուցիչներն օգնեն երիտասարդներին՝ դառնալու քննադատորեն մտածող և պատասխանատու քաղաքացիներ:

«Մեր երազած համացանցը.պատանիների համար» ձեռնարկը ստեղծել է INSAFE ցանցը և լույս է տեսել 2013 թ.-ի փետրվարին՝ Ապահով համացանցի օրը:

Ձեռնարկի ստեղծման նպատակն է՝ ուսումնասիրել իրավունքներն ու պարտականությունները, սովորեցնել երիտասարդներին հետևելու իրենց և հասակակիցների առցանց վարքագծին:

«Մեր երազած համացանցը. ուսուցիչների համար» գիրքը մշակել են դասավանդողները՝ Եվրոպայի և աշխարհի տարբեր երկրների դասավանդողների համար:

Դասապլաններն առաջարկում են գաղափարներ, որոնք կօգնեն զարգացնել պատանիների ստեղծագործական և քննադատական կարողությունները : Այս ուղեցույցն օգնում է ուսուցիչներին դասընթացի ինտերակտիվ դասապլանների եւ գործնական պարապմունքների միջոցով խտեգրել երիտասարդների առցանց գործունեությանը վերաբերող խնդիրները:

Ձեռնարկից դյուրին օգտվելու համար Թեմաերն ու խնդիրները ներկայացված են ինդեքսով:

Ձեռնարկը կօգնի.

- ընկալել համացանցի օգտագործմամբ պայմանավորված մարտահրավերներն ու ծանոթանալ նորանոր հնարավորությունների.
- ձեռք բերել հաջողության հասնելու եւ կյանքի համար անհրաժեշտ հմտություններ:

Բոլոր դասապլանները հարմարեցված են էլ.կարողությունների եվրոպական շրջանակի հետ, որը նկարագրում է ՏՂՏ կարողությունները և մեթոդական ուղեցույցներ է տալիս՝ըստ եվրոպական որակավորման: Դասապլանների վերաբերյալ առաջարկներով կարող եք մեզ դիմել

infowww@eun.org հասցեով:

* Insafe- ի մասին

Insafe-ը Եվրահանձնաժողովից ֆինանսավորվող ապահով համացանցի իրազեկման եվրոպական ցանց է, որն ընդգրկում է Եվրամիության եւ նրա սահմաններից դուրս ազգային տեղեկատվական կենտրոններ, թեժ գծեր եւ երիտասարդական համաժողովներ, որոնք համակարգում է Եվրոպական դպրոցական ցանցը: Insafe-ը նպատակ ունի օգտվողներին սովորեցնել օգտվել համացանցի դրական կողմերից՝ խուսափելով ռիսկերից:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել

www.saferinternet.org or contact info-insafe@eun.org.

1http://www.ecompetences.eu/site/objects/download/4062_EUeCompFWexpertGuidelines.pdf



# Հեղինակների խոսք



«Որպես պատմության ուսուցիչ, սիրում եմ օգտագործել ՏՀՏ-ները իմ աշակերտների հետ: Տեխնոլոգիաների շնորհիվ աշակերտներին հասանելի են դառնում շատ տեղեկություններ և գործիքներ: Դրանք թույլ են տալիս մեզ անկախ աշխատել, խորությամբ ուսումնասիրել նյութը և միաժամանակ ավելի հետաքրքիր դարձնել ուսումնական գործընթացը: Այս գիրքը շատ օգտակար կլինի մեզ համար, քանի որ այն կօգնի ավելի լավ յուրացնել ՏՀՏ-ները»

*Մաքսիմ Դրուե, Ֆրանսիա*

«21րդ դարի մաթեմատիկական կարողությունները չեն ենթադրում միայն կրթական ծրագրի յուրացում, հաշվելու ունակություն և մաթեմատիկական կարողություններ, այլ նաև տարբեր թվային և ցանցային գործիքների կիրառում՝ խնդիրների լուծման համար համագործակցային աշխատանքի միջոցով, ինֆորմացիայի ապահով որոնում և տարածում: Գործիքը սովորելու լավագույն եղանակը դրանով աշխատելն է»

*Իրինա Վասիլեսկու, Ռումինիա*





«Համացանցը կարծես ծով լինի – գրեթե անվերջ, գեղեցիկ և հետաքրքիր, վայրի և վտանգավոր. Դու կարող ես շատ բաներ գտնել այնտեղ կամ կորել»

*Մարտինա Կուպիլիկովա, Չեխիա*

«Այսօրվա երիտասարդները չեն պատկերացնում իրենց կյանքը առանց Համացանցի. այն չափազանց շատ հրաշալի հնարավորություններ է առաջարկում: Միաժամանակ մարդիկ ուզում են իրենց ապահով զգալ: Ապահով լինելու գործոններից մեկը անձնական կյանքի գաղտնիությունն է: Յուրաքանչյուր մարդ պետք է իմանա ինչպես գրել համացանցում, ինչպես տարածել գրածը և ինչպես գործել պատասխանատու կերպով»

*Եվանգելիա Կոնտոպիդի, Հունաստան*





«Մեր երազած համացանցը” լրացնում է գիտելիքների այն պակասը, որն ունեն Համացանցը պատշաճ կերպով օգտագործելու դասեր անցկացնող ուսուցիչները, և ովքեր մշտապես փնտրում են օգտակար գործիքներ»

*Դրյու Բադի, Միացյալ Թագավորություն*

«Այս ձեռնարկը կարող է օգնել ուսուցիչներին նոր մոտեցումներ կիրառել ոչ միայն Ապահով համացանցին նվիրված դասընթացին, այլև այլ առարկաների դասավանդման ընթացքում: Գիրքը կօգնի նորարար մոտեցումներ կիրառել, համագործակցելով այն ուսուցիչների հետ, ովքեր ձգտում են ուսումնական գործընթացը դարձնել ավելի հետքրքիր և ուրախ»

*Միգելա Ֆերնանդես, Պորտուգալիա*





«Եղի՛ր ստեղծարար: Գտի՛ր քո միջի արտիստին»

*Ֆրանս Նյուվենհույզեն, Նիդեռլանդներ*

«Աշակերտների անվտանգությունը Համացանցում պետք է լինի դաստիարակությամբ և կրթությամբ զբաղվող բոլոր կազմակերպությունների կարևորագույն առաջնահերթությունը. Միայն ընդհանուր ջանքերով կարելի է հասնել հաջողության»

*Ադամ Ստեպինսկի, Լեհաստան*





«Ճանաչի՛ր քո և մյուսների իրավունքները և գործի՛ր պատասխանատու համացանցում»

*Կարստեն Գրյոնե, Գերմանիա*

«Համացանցը ավելի ապահով և ավելի ազնիվ կերպով օգտագործելու և նյութեր տարածելու մասին երեխաներին սովորեցնելը շատ հետքաքրքիր աշխատանք է, բայց նաև պատասխանատվություն»

*Անժելա Լյուչիա Կապեզուտո, Իտալիա*





«Մենք կարող ենք և պարտավոր ենք օգտագործել ՏՀՏ-ները, ռիսկերը նվազեցնելու և Համացանցի դրական կողմերից օգտվելու համար՝ օգնելով զարգացնել աշակերտների կարողությունները իրենց ապագա պրոֆեսիոնալ գործունեության համար»

*Ֆեռնանդո Ռուի Կամպոս, Պորտուգալիա*

«Պատկերացրեք աշխարհը ձեր ձեռքերում: Այժմ պիտի հասկանաք, թե ինչ կարող եք անել դրա հետ: Ինտերնետը հենց դա է: Օրինակ՝ ձեր հեռախոսում: Այսպիսով, ուսուցիչների առջև այսօր մեծագույն մարտահրավեր է չմնալ հետևում, այլ սովորել, որպեսզի օգնել աշակերտներին արդյունավետ օգտագործել Համացանցը»

*Յեզուս Մելգար Տիտո, Իսպանիա*





«Մեր երազած համացանցը պարտադիր գործիք է պատանիների, դասավանդողների և ծնողների համար, այն տրամադրում է ինֆորմացիայի ամենօրյա աղբյուր և խորհուրդներ Համացանցը ապահով և պատասխանատու կերպով օգտագործելու համար՝ դասարանում և դասարանից դուրս: Այն ունի հրաշալի կառուցվածք, և իր ժամանակակից բովանդակությունը ուղեցույց է ծառայում Համացանցի օվկիանոսում»

*Արիս Լուվրիս, Հունաստան*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բարդության մակարդակը նշված է որպես Ցածր ★ Միջին ★★ Բարձր ★★★

Ուշադրություն. Բոլոր դասապլանները ներառում են հիմնական կարողությունները. 1. հաղորդակցություն մայրենի լեզվով և 4, թվային կարողություններ: Հետևաբար, միայն լրացուցիչ կարողություններն են ստորև նշված աղյուսակում: Մեկ դասաժամի տևողությունը 45 րոպե է:

Հաշվի առնել այն հանգամանքը, որ դասապլաններից մի քանիսը հղում են կատարում արտաքին ռեսուրսների, նաև այն, որ գրանցում պետք չէ այդ ռեսուրսներ մուտք ունենալու համար, եթե այլ բան նշված չէ: YouTube-ի ռեսուրսներից օգտվելիս, խնդրում եմ համոզվեք, որ իրավունք ունեք օգտվելու այդ ռեսուրսներից և նյութերից ձեր երկրում: Ինչ վերաբերում է բոլոր այլ արտաքին ռեսուրսների օգտագործմանը, օգտատերերը պետք է հանգամանալից ստուգեն և համոզվեն, որ տեղական կանոնները պահպանված են:

| Մեր երազած համացանցը - դասապլաններ | Կարողություններ | Տևողություն | Առաջադրանքի թերթիկ | Հեղինակ |
|---|---|---|---|---|
| Նախապատ-րաստական փուլ | ինչպես նշվում է դասապլաններում | առավելագույնը 5 րոպե տևողությամբ | | Արիս Լուվրիս, Հունաստան |
| **Իմ առցանց իրավունքներն ու պարտականությունները** | | | | |
| Հիմնական համացանցային իրավունքներ ** | Սովորում ենք սովորել/ Հասարակական և քաղաքացիական կարողություններ / քննադատական մտածողություն | Մեկ դասաժամ | 1.1 Եթե կարողանայի անել այն ամենն, ինչ ցանկանում եմ | Կարստեն Գրյոնե Գերմանիա |
| Իրավունքներն ընդդեմ պարտականու-թյունների | Սովորում ենք սովորել/ Հասարակական և քաղաքացիական կարողություններ / քննադատական մտածողություն | Մեկ դասաժամ | | Դրյու Բադի, ՄԹ |
| Նույն մետաղադրամի երկու կողմը I** | Սովորում ենք սովորել/ Հասարակական և քաղաքացիական կարողություններ / քննադատական մտածողություն | Մեկ դասաժամ | 1.2 Երկու կողմ, մեկ մետաղադրամ I | Կարստեն Գրյոնե Գերմանիա |
| Երկու կողմ, մեկ մետաղադրամ II*** | Սովորում ենք սովորել/ Հասարակական և քաղաքացիական կարողություններ / քննադատական մտածողություն | Մեկ դասաժամ | 1.3 Երկու կողմ, մեկ մետաղադրամ II | Կարստեն Գրյոնե Գերմանիա |
| **«Տեղեկությունը գիտելիք չէ», Ալբերտ Էյնշտեյն** | | | | |
| Մտեք, ստեղծեք և տարածեք*** | Հաղորդակցություն օտար լեզուներով | 3-4 դասաժամերի շարք | 2.1 Գործիքներ և տեխնոլոգիաներ մանկավարժների համար | Ֆեռնանդո Կամպոս, Պորտուգալիա |
| Նկարների վերլուծություն *-** | Հաղորդակցություն օտար լեզուներով | Երեք դասաժամանոց շարք | | Մաքսիմ Դրուե, Ֆրանսիա |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Մասնակցություն Համացանցում** | | | | |
| Գնացինք գնումների *-** | Մաթեմատիկական և բազային կարողություններ գիտության ու տեխնոլոգիաների բնագավառում | Երկու դասաժամանոց շարք | | Յեզուս Մելգար Տիտո, Իսպանիա |
| Սովորում ենք մաթեմատիկա 2.0*** | Մաթեմատիկական և բազային կարողություններ գիտության ու տեխնոլոգիաների բնագավառում | Երկու դասաժամանոց շարք | 3.1 համացանցային գործիքներ մաթեմատիկական վարժությունների համար<br>3.2 Ուժեղ գաղտնաբառի որոշում<br>3.3 Բլոգերը/վիկիները Մաթեմատիկայում<br>3.4 Ֆեյսբուքը և մաթեմատիկական վարժությունները | Իրինա Վասիլեսկու, Ռումինիա |
| Պատշաճ վարքագիծ*** | Սովորում ենք սովորել / Հասարակական և քաղաքացիական կարողություններ / քննադատական մտածողություն | Մեկ դասաժամաժամ | | Դյրու Բադի, ՄԹ |
| **Ձևավորեք ձեր ինքնությունը** | | | | |
| Իմ (իրական) ինքնությունը** | Նախաձեռնողականություն և ձեռներեցություն | Երեք դասաժամանոց շարք | 4.1. Որտե՞ղ է ճշմարտությունը: | Մարտինա Կուպիլիկովա, Չեխիայ |
| Արդյոք մենք ունե՞նք բազմակի ինքնություն: ** | Նախաձեռնողականություն և ձեռներեցություն | Երկու դասաժամանոց շարք | | Ադամ Ստեպինսկի, Լեհաստան |
| **Անձնական կյանքի գաղտնիությունն իմ ամենաթանկ ունեցվածքն է** | | | | |
| «Դուք չեք կարող ամեն ինչ ասել ամեն մեկին»*-**Պյութագորաս Սամոսացի<br>570-500 մ.թ.ա | Հասարակական և քաղաքացիական կարողություններ | 2-3 դասաժամանոց շարք | | Էվանգելիա Կոնտոպիդի, Հունաստան |
| Անձնական կյանք և տեսնել (Priva-See)*-** | Հասարակական և քաղաքացիական կարողություններ | Մեկ դասաժամաժամ | | Միգելա Ֆեռնանդես, Պորտուգալիա |
| Ես ձեզ դիտում եմ! *-** | Հասարակական և քաղաքացիական կարողություններ /<br>Հաղորդակցություն օտար լեզվով | Մեկ դասաժամաժամ | 5.1 Մայքլ Ջեքսոն «Անձնական կյանքի գաղտնիություն» | Միգելա Ֆեռնանդես, Պորտուգալիա |
| **Արվեստագետը քո մեջ** | | | | |
| Պաշտպանում ենք այն, ինչ մերն է ** | Սովորում ենք սովորել / Հասարակական և քաղաքացիական կարողություններ / քննադատական մտածողություն | Մեկ դասաժամաժամ | | Դյրու Բադի, ՄԹ |
| «Ռեպավորեք այն» ** | Մշակութային տեղեկացվածություն և արտահայտություն | Երկու դասաժամանոց շարք | 6.1 Ռեպավորեք այն | Անգելա Կապեզուտո, Իտալիա |
| Արվեստագետը ձեր մեջ! ** | Մշակութային տեղեկացվածություն և արտահայտություն | Երկու դասաժամանոց շարք | 6.2 Ձեր միջի բոլոր արվեստագետները | Ֆրանս Նյուվենհույզեն, Նիդեռլանդներ |

| Ընդհանուր պլան | Նախապատրաստական փուլ |
|---|---|
| **Հեղինակ** | Արիս Լուվրիս, Հունաստան |
| **Թեմա** | Բուլորը |
| **Կարողություններ** | Նշված է յուրաքանչյուր դասապլանում |
| **Մակարդակ** | ☑ Ցածր ☐ Միջին ☐ Բարձր |
| **Տարիքային խումբ** | Ըստ անհրաժեշտության |
| **Տևողություն** | Առավելագույնը 5 րոպե |
| **Դասընթացի նպատակը** | • Աշակերտներին ներկայացնել «Մեր երազած համացանցը» գիրքը:<br>• Աշակերտներին հետաքրքրաշարժ ձևով նախնական պատկերացում տալ «Մեր երազած համացանցը» գրքի համար նախատեսված դասապլանների մասին: |
| **Գործիքներ** | Առաջադրանքի թերթիկներ, տեսանյութեր (նախընտրելի է՝ ոչ համացանցային), ինֆոգրաֆիկա, հարցումներ, փոքր խաղեր<br>(< 5 րոպե), նախկին գիտելիքի վրա հիմնված հարցեր և պատասխաններ, մտագրոհ և այլն: |
| **Դասընթաց** | |
| **Քայլ 1 - (2 րոպե)** | Յուրաքանչյուր հաջորդ դասապլանի վրա հիմնվելով՝ փորձեք գրավել աշակերտների ուշադրությունը վերոհիշյալ գործիքներից մեկով, օրինակ՝ ցուցադրելով խնդիր պարունակող տեսանյութ՝ խթանել աշակերտների հետաքրքրությունը:<br>Օրինակ՝ 1 րոպե տևողությամբ տեսանյութ (ԵՄ բոլոր լեզուներով) ԵՄ արդարադատության և սպառողների YouTube-ի ալիքով (տես հղումը ստորև): |
| **Քայլ 2 - (2 րոպե)** | Հարցրեք աշակերտներին, թե ինչպես են նրանք ընկալում այդ գործիքի միջոցով մատուցված տեղեկությունները և քննարկեք թեման՝ աշակերտների ուշադրությունն ուղղելով հաջորդիվ ներկայացվող թեմային: |
| **Քայլ 3 - (1 րոպե)** | (1 րոպե) Տեղեկացրեք աշակերտներին, թե ինչ են նրանք սովորելու դասի ընթացքում: Հակիրճ բացատրեք դասի նպատակները: |
| **Օգտակար հուշումներ.** | Տեսանյութերը երեք րոպեից ավելի չպետք է տևեն: Նախընտրելի է տեսանյութերը ցուցադրել ոչ համացանցից, որպեսզի խուսափեք համացանցի արագությանը կամ միացմանն առնչվող խնդիրներից:<br>Հարցումները պետք է հիմնվեն արդյունքների վրա, հակառակ դեպքում պետք է կատարել  մի պարզ սոցիալական հարցում՝ ներկայացնելով տվյալ հարցի վերաբերյալվիճակագրական տվյալներ:<br>Ինֆոգրաֆիկան պետք է համապատասխանի աշակերտների իմացության մակարդակին (չպետք է լինի բարդ և շատ երկար): |
| **Հղում(ներ)** | անձնական կյանքի գաղտնիության մասին օրինակ՝<br>http://goo.gl/LdFsZ |

| Գործնական աշխատանք | WWW հիմնական իրավունքներ |
|---|---|
| **Հեղինակ** | Կարստեն Գրյոնե, Գերմանիա |
| **Թեմա** | Իմ իրավունքները և պարտականությունները |
| **Կարողություններ** | Սովորում ենք սովորել / Հասարակական և քաղաքացիական կարողություններ / Հաղորդակցվում ենք մայրենի լեզվով / Թվային կարողություններ / Քննադատական մտածողություն |
| **Մակարդակ** | ☐ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 14-15 տարեկան |
| **Տևողություն** | 45 րոպե |
| **Դասընթացի նպատակը** | • Ներկայացրեք «Մեր երազած համացանցը» գիրքը:<br>• Ներկայացրեք համացանցային հիմնական իրավունքներն՝ ըստ ԵՄ խարտիայի: |
| **Ներածական.** | Ծաղրանկար տեսահենության մասին<br>http://goo.gl/jRGTfl |
| **Գործիքներ** | Առաջադրանքի թերթիկ 1.1: «Եթե կարողանայի անել այն ամենն, ինչ ցանկանում եմ» |
| **Դասընթաց** | |
| **Քայլ 1 - (**7 րոպե**)** | Ենթատեքստին չվերաբերող վարժություն.<br>Օգտվելով 1.1առաջադրանքի թերթիկից՝ աշակերտներին առաջարկել, որպեսզի պատկերացնեն, թե ինչ կարող են անել առանց սահմանափակումների, և թե ինչ կարող է դա նշանակել այլ անձանց և/կամ նրանց ընկերների համար: Խնդրեք, որպեսզի նրանք փոքր խմբերով համեմատեն իրենց մտահղացումները |
| **Քայլ 2 - (**15 րոպե**)** | Օգտվելով 1.1առաջադրանքի թերթիկից՝խնդրեք աշակերտներին ԵՄ հիմնարար իրավունքների խարտիայի 1-ին՝«Արժանապատվությունը» գլխում մատնանշել այն հոդվածները, որոնք առնչվում են համացանցից օգտվելուն, օրինակ՝ անհատական տվյալների պաշտպանությանը (տես 1.1առաջադրանքի թերթիկը): |
| **Քայլ 3 - (**7 րոպե**)** | Առաջարկեք աշակերտներին ծանոթանալ և/կամ վերանայել տեքստը թռուցիկ ընթերցման մեթոդով (scan) (տես ստորև հղումը նաև 1.1 առաջադրանքի թերթիկում): |
| **Քայլ 4 - (**15 րոպե**)** | (15 րոպե) Որպես հրապարակման նախաբան, որը տվյալ դասի հիմքն է, առաջարկեք, որպեսզի աշակերտները թռուցիկ ընթերցեն «Մերերազած համացանցը» պատանիների համար ձեռնարկը և գտնել եզակի իրավունքներ կոնկրետ գլուխներում: Առաջարկեք նրանց լրացնել աղյուսակը և համեմատություններ անել լսարանում: |

| | |
|---|---|
| **Լրացուցիչ տարբերակներ.** | Տնային հանձնարարություն. օգտվելով 1.3աղյուսակով առաջադրանքի թերթիկից՝ աշակերտներին հանձնարարեք ԵՄ խարտիայից ընտրված համացանցային չորս կարևոր իրավունքներից մեկը:<br>Աշակերտները պետք է համացանցում ներպետական օրենքներ որոնեն, որպեսզի գտնեն առանձին իրավունքների վերաբերող պարբերություններ: Քանի որ այս մասը բավական բարդ է, կարող եք աշակերտներին տրամադրել համացանցի հղումներ, որոնք վերաբերում են առաջադրանքի թերթիկում ներառված օրենքների բաժիններին: |
| **Հղումներ** | http://www.europarl.europa.eu/charter/<br>http://www.aacc.edu/tutoring/file/skimming.pdf |

| Գործնական աշխատանք | Իրավունքներն ընդդեմ պարտականությունների |
|---|---|
| Հեղինակ | Դրյու Բադդի, Միավորված Թագավորություն |
| Թեմա | Իմ իրավունքներն ու պարտականությունները |
| Կարողություններ | Սովորում ենք սովորել/Հասարակական և քաղաքացիական կարողություններ/ Հաղոր-դակցություն մայրենի լեզվով/ Թվային կարողություններ/քննադատական մտածողություն |
| Մակարդակ | ☐ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| Տարիքային խումբ | 14 -15 տարեկան |
| Տևողություն | 45-60 րոպե տևողությամբ մեկ կամ երկու դասաժամ |
| Դասընթացի նպատակը | • Քննարկել, թե ինչ է իրավունքը, համեմատել պարտականության հետ::<br>• Սովորել փաստերը ստուգել՝ օգտվելով իրավաբանական փաստաթղթերից:<br>• Մտորել գրաքննություն և ինքնաքննադատություն հասկացությունների մասին:: |
| Ներածական. | Համացանցը, թեև, մարդկանց իրենց տեսակետները համաշխարհային լսարանին ներկայացնելու հնարավորություններ է տալիս, միթե սա նշանակում է, որ «ինչ էլ ներկայացնում են, լավ է»:<br>Կոնկրետ ինչ է նշանակում ինչ-որ բան անելու իրավունք, ինչպե՞ս է դա համեմատվում պարտականության հետ: Քանի որ համացանցը որևէ պետության կամ նահանգի սեփականությունը չէ և հիմնված է խոսքի ազատության թույլատրելիության նախադրյալի վրա, ինչպե՞ս կարող է լավ քաղաքացին հավասարակշռել իրավունքը և պարտականությունը: |
| Գործիքներ | Համացանց, հիմնարար իրավունքների ԵՄ խարտիան,<br>bubbl.us (https://bubbl.us/), Tagxedo և Powtoon. |
| Դասընթաց | |
| Քայլ 1 – (20 րոպե) | Քննարկեք աշակերտների հետ. ո՞րն է իրավունքի և պարտականության տարբերությունը:<br>Աշակերտներին ցուցադրեք հետևյալ տեսանյութերը՝<br>http://youtu.be/AUjyy4eh_LE<br>http://youtu.be/VHamPKNdI7o<br>Կատարեք 1.1-րդ վարժությունը «Մեր երազած համացանցը» պատանիների համար ձեռնարկի 6-րդ էջից: |
| Քայլ 2 – (30 րոպե) | Առաջարկեք աշակերտներին ներբեռնել կամ տպել հիմնարար իրավունքների ԵՄ խարտիան:<br>Դասարանային քննարկման միջոցով դիտարկեք յուրաքանչյուր հոդվածը՝ հասկանալու համար, թե յուրաքանչյուր իրավունքից ինչ պարտականություններ են բխում:<br>Ինչպե՞ս արագ արդյունքներ ստանալ այսքան տեքստից: Աշակերտներին բաժանեք փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբին հանձնարարեք ստեղծել մտքի քարտեզ՝ օգտվելով bubbl.us-ից, որպեսզի ցույց տան յուրաքանչյուր հոդված իրեն վերաբերող պարտականությունների հետ: |

| | |
|---|---|
| **Քայլ 3 – (**15 րոպե**)** | Ուսումնասիրեք Աշխատողների իրավունքներն ու պարտականությունները (ԱԻՊ)  առաջադրանքի թերթիկը, կիրառեք «գտնել» հրահանգը (CTRL+F), որպեսզի նրանք կարողանան գտնել, թե քանի անգամ են կրկնվում «իրավունքներ» և «պարտականություններ» բառերը: Օգտվեք ԱԻՊ առաջադրանքի թերթիկի տեքստից և տեղադրեք այն Tagxedo-ում՝ ստեղծելու համար բառային ամպ, որպեսզի  ընդգծեք «իրավունքներ»և «պարտականություններ» բառերի կիրառումը: |
| **Քայլ 4 – (**20 րոպե**)** | Օգտվելով Powtoon.com-ից (http://www.powtoon.com/)՝ յուրաքանչյուր խումբ պետք է ստեղծի գովազդային տեսահոլովակ, որի միջոցովպետք է բացատրի այն բոլոր կետերը, որ նախորդ քայլի ընթացքում նրանք մանրամասնել էին իրենց մտքի քարտեզում: |
| **Քայլ 5 – (**20 րոպե**)** | Առանձին խմբերում կամ լսարանումաշակերտների հետ քննարկեք, թե ինչ է իրականում ինքնաքննադատությունը. ինչու՞ է այս հմտությունը կարևոր համացանցում որևէ նյութ հրապարակելիս: |
| **Լրացուցիչ տարբերակներ.** | Սահմանեք  գրաքննության և ինքնաքննադատության տարբերությունը:: |
| **Հղում(ներ)** | Հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիան՝ http://goo.gl/Vqyghj<br>Աշխատողների իրավունքներն ու պարտականությունները(ԱԻՊ) առաջադրանքի թերթիկ: http://goo.gl/W9DUAW<br>http://bubbl.us<br>http://tagxedo.com<br>www.powtoon.com (անհրաժեշտ է  գրանցվել)<br>Սույն վարժության մեջ օգտագործվող համացանցային բոլոր կիրառական ծրագրերն անվճար են և գրանցում չեն պահանջում, բացառությամբ Powtoon-ի: |

| Գործնական աշխատանք | Իրավունքներ և պարտականություններ - Նույն մետաղադրամի երկու կողմը I |
|---|---|
| **Հեղինակ** | Կարստեն Գրյոնե, Գերմանիա |
| **Թեմա** | ԻՄ իրավունքներն ու պարտականությունները |
| **Կարողություններ** | Սովորում ենք սովորել/ Հասարակական և քաղաքացիական կարողություններ / Հաղորդակցություն մայրենի լեզվով/ Թվային կարողություններ / քննադատական մտածողություն |
| **Մակարդակ** | ☐ Ցածր ☐ Միջին ☑ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 14-15 տարեկան |
| **Տևողություն** | 45 րոպե |
| **Դասընթացի նպատակը** | • Տեղեկանալ իրավունքների և պարտականությունների փոխկապակցության մասին: <br>• Տեղեկանալ ներպետական օրենսդրությամբ ամրագրված համացանցային իրավունքների մասին: |
| **Ներածական.** | Ծաղրանկար տեսահենության մասին <br>http://goo.gl/yGzEU6 |
| **Գործիքներ** | Առաջադրանքի թերթիկ 1.2: «Երկու կողմ, մեկ մետաղադրամ I»; Համացանցի քննարկում |
| **Դասընթաց** | |
| **Քայլ 1 –** (15 րոպե) | համատեքստով հարուստ վարժություն. Աշակերտները վեր են հանում ԵՄ խարտիայի հիմնարար իրավունքների հակասությունները (տես 1.2 առաջադրանքի թերթիկը): |
| **Քայլ 2 –** (5 րոպե) | Աշակերտներին հարկ է հիշեցնել, որ ԵՄ բոլոր հիմնարար օրենքները, այդ թվում՝ համացանցի կիրառությանը վերաբերող ամրագրված են ներպետական տարբեր օրենքներում: |
| **Քայլ 3 –** (20 րոպե) | (20 րոպե) Օգտվելով տնային հանձնարարությունից՝ աշակերտներն աշխատում են խմբերով, որպեսզի լրացնեն ներպետական օրենսդրությամբ ամրագրված իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ 1.2. առաջադրանքի աղյուսակը: **Ծանոթագրություն.** Քանի որ աշակերտների տնային աշխատանքի արդյունքներն ինչ-որ առումով անորոշ են, գուցե օգտակար լինի դիտարկել նախորդը՝ որպես նախապատրաստական վարժություն և հանձնարարել, որպեսզի դասի ընթացքում աշակերտները կազմեն աղյուսակի վերջնական տարբերակը: |
| **Հղում(ներ)** | http://www.europarl.europa.eu/charter/ |

| Գործնական աշխատանք | Իրավունքներ ու պարտականություններ - Նույն մետաղադրամի երկու կողմը II |
|---|---|
| **Հեղինակ** | Կարստեն Գրյոնե, Գերմանիա |
| **Թեմա** | Իմ իրավունքներն ու պարտականությունները |
| **Կարողություններ** | Սովորում ենք սովորել/ Հասարակական և քաղաքացիական կարողություններ / Հաղորդակցություն մայրենի լեզվով/ Թվային կարողություններ / քննադատական մտածողություն |
| **Մակարդակ** | ☐ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 14-15 տարեկան |
| **Տևողություն** | 45 րոպե |
| **Դասընթացի նպատակը** | • Ներկայացնել աշակերտների առօրյա կյանքին առնչվող համացանցային իրավունքների մասին տեսությունը:<br>• Հանձնարարել աշակերտներին վերլուծել իրենց առօրյա կյանքին վերաբերող համացանցային իրավունքները |
| **Ներածական.** | Ներկայացնել համացանցային խարդախության օրինակ մի պատանու առօրյայից:<br>Դեպքը վերլուծելուց հետո հանձնարարեք աշակերտներին պարզել, թե համացանցային որ իրավունքներն են խախտվել: |
| **Գործիքներ** | Առաջադրանքների թերթիկ 1.3: «Երկու կողմ, մեկ մետաղադրամ II», Համացանցի քննարկում |
| **Դասընթաց** | |
| **Քայլ 1 –** (15 րոպե) | Խմբային աշխատանք<br>Աշակերտներն իրենց համադասարանցիներին ներկայացնում են պետական օրենսդրության մեջ ԵՄ իրավունքներին վերաբերող նախորդ դասի արդյունքները: |
| **Քայլ 2 –** (12 րոպե) | Աշակերտները օրենսդրության հիման վրա վեր են հանում հիմնարար իրավունքների հավանական խախտումները: |
| **Քայլ 3 –** (12 րոպե) | Յուրաքանչյուր խումբ ստեղծում է իրավիճակներ կամ մասնավոր դեպքի ուսումնասիրություն, որտեղ իրավունքներից մեկը հավանաբար խախտվել է: Մասնավոր դեպքերի այս ուսումնասիրությունները հանձնարարվում են մեկ այլ խմբի, որը զբաղվել է մեկ այլ իրավունքով:<br>Խաղընկեր խմբերով աշակերտները վերլուծում են դեպքերը՝ հիմնվելով այն տեղեկությունների վրա, որ ստացել են իրենց համադասարանցիներից: |
| **Քայլ 3 –** (7 րոպե) | Արդյունքները ներկայացնում են լսարանում, յուրաքանչյուր իրավունքի խախտման վերաբերյալ մեկ կամ երկու դեպք: |
| **Լրացուցիչ տարբերակներ.** | Մտապահեք «սովորելով սովորել» ենթաթեման, կարելի է իրավական տեքստերով (դժվարություն, շարժառիթ և այլն)աշխատանքը գնահատել: |

# «Տեղեկությունը գիտելիք չէ», Ալբերտ Էյնշտեյն

## 2.1 Մտեք, ստեղծեք և տարածեք խելացի ձևով

| Գործնական աշխատանք | Մտեք, ստեղծեք և տարածեք խելացի ձևով |
|---|---|
| Հեղինակ | Ֆեռնանդո Ռուի Կամպոս, Պորտուգալիա |
| Թեմա | Տեղեկությունը գիտելիք չէ |
| Կարողություններ | Հաղորդակցություն օտար լեզուներով / Հաղորդակցություն մայրենի լեզվով / Թվային կարողություններ |
| Մակարդակ | ☐ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| Տարիքային խումբ | 14-15 տարեկան |
| Տևողություն | 3-4 դասաժամանոց շարք, յուրաքանչյուր դասը՝ մոտ 45 րոպե |
| Դասընթացի նպատակը | • Սովորեցրեք աշակերտներին սոցիալական ցանցերում տեղեկատվություն տեղադրելու գաղտնիքները։<br>• Նկարագրեք, թե ինչպես կարելի է գտնել վերաբերելի և որակյալ ռեսուրսներ դպրոցական վարժությունների համար։<br>• Ցուցադրեք, թե ինչպես կարող են պաշտպանվել համացանցում կատարվող խարդախություններից։<br>• Զարգացրեք թվային կարողությունները և 21-րդ դարի այլ հմտություններ:: |
| Ներածություն. | Այս դասապլանները ներառում են իրար հաջորդող առաջադրանքներ և կիրառում թվային այնպիսի գործիքներ, որոնք անհրաժեշտ են 21-րդ դարի հմտությունների զարգացման համար։<br>Նախատեսված նյութն ու վարժությունները քաջալերում են ՏՀՏ գործիքների կիրառումը՝ սովորելու, հաղորդակցվելու, համագործակցելու և գիտելիքի պաշարն ավելացնելու նպատակով։<br>Դասերը ուսուցողական վարժությունների հաջորդական քայլերով(LAs) են։ (Դաս 1 – երազեք և հետազոտեք;<br>Դաս 2 – քարտեզագրեք, հարցրեք և համագործակցեք;<br>Դաս 3-ստեղծեք,<br>Դաս 4 - ցուցադրեք)։<br>Մանրամասն տեղեկությունների համար տես՝ http://fcl.eun.org/toolset4.<br>Դասապլանի նախագիծը վերցված է մանկավարժական ուսուցողական այն նախօրինակից, որն առաջարկվել է Ապագայի լսարանի գործիքակազմում (ԱԼԳ)՝ http://fcl.eun.org/toolkit: Դասերը կարելի է համապատասխանեցնել մեկ դպրոցում կիրառելու, կամ մեկ երկրի, գուցեև տարբեր երկրների տարբեր դպրոցների համագործակցության համար։ Վերջնարդյունքը կարող է լինել մեկ թվային արդյունք (կայք, ձայնագրություն, բլոգ, տեսանյութ)՝օտար լեզվով թեմաներից մեկի մասին։<br>Գնահատումը ձևավորում է ուսուցչի խրախուսական պատասխան կարծիքներով, կամ աշակերտների գրառումներով։ |
| Գործիքներ | Team Up - http://teamup.aalto.fi/ (անհրաժեշտ է գրանցվել)<br>Audacity - http://audacity.sourceforge.net/<br>Google Hangouts - http://www.google.com/+/learnmore/hangouts/ (անհրաժեշտ է գրանցվել)<br>Մտավոր քարտեզներ - http://popplet.com/ (անհրաժեշտ է գրանցվել)<br>Պատասխան կարծիքներ, ձայն, համագործակցություն - http://voicethread.com/products/k12/ (անհրաժեշտ է գրանցվել)<br>Google Docs - https://docs.google.com/ or titanPad - https://titanpad.com/ (անհրաժեշտ է գրանցվել)<br>Ապագայի լսարանի գործիքակազմ - http://fcl.eun.org/toolkit<br>Սցենարների մշակման միջավայր http://www.itec-sde.net/ |

| | |
|---|---|
| **Դասընթաց** | **Դասերի ընթացքում ուսումնասիրվում են չորս տարբեր թեմաներ.**<br>Խմբային թեմա #1 –Դպրոցական հանձնարարությունները կատարելու համար համացանցում առկա տեղեկություններից, համացանցից օգտվելու կարողությունները.<br>Խմբային թեմա #2 – Կեղծ կայքեր, համացանցի արժանահավատությունը և դրականորեն օգտագործումը.<br>Խմբային թեմա #3 – Անձնական տվյալների որս (ֆիշինգ), անվտանգ ճամփորդություն համացանցում.<br>Խմբային թեմա #4 – Մտածեք նախքան տեղադրելը, սոցիալական ցանցերը և դրոշմելը, անձնական տվյալների գաղտնիությունը:<br>Կազմակերպեք աշակերտների փոքր խմբեր (առավելագույնը հինգ աշակերտ յուրաքանչյուր խմբում):<br>Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք չորս թեմայից մեկը: TeamUp (http://teamup.aalto.fi/) գործիքը կարող է օգտակար լինել հմտությունների և հետաքրքրությունների համապատասխան խմբեր կազմելու հարցում:<br>TeamUp-ը և VoiceThread-ը բավական օգտակար գործիքներ են աշակերտների համար, որպեսզի յուրաքանչյուր դասից հետո նրանք գրառեն իրենց մտորումները և կիսեն դրանք ընկերների հետ: Այս դասերի նպատակներից է արդյունք ստեղծելը (աշակերտները՝ որպես բովանդակություն ստեղծողներ): Վերջնական արդյունքը կարող է լինել խմբերի թեմաներից մեկի վերաբերյալ կարճ տեսանյութը կամ բեմականացումը, այդ թվում՝ աշակերտների դիտողությունները մայրենի կամ օտար լեզվով:<br>Դուք, գուցե, ցանկանաք ուղղորդել աշակերտական խմբերին՝ օտվելով Սցենարների մշակման միջավայրից (SDE) (http://www.itec-sde.net/en) կամ թեմատիկ կայքերից, ինչպիսիք են վիրտուալ ազգային թանգարանները կամ եվրոպական գլխավոր մուտքը: Սրանք կարող են հիմք դառնալ կեղծ կայքերի կամ ոչ հավաստի տեղեկություններ պարունակող կայքերի հետ համեմատությունների համար: Մտորումների վարժությունն արվում է ողջ գործընթացում և ուղղորդում աշակերտներին դեպի վերջնանպատակ: Աշակերտները և ուսուցիչները կարող են գրի առնել, հրապարակել մեկնաբանություններ և կիսել իրենց մտքերը ծրագրի վերաբերյալ՝ օգտվելով թվային գործիքներից և կարծիք հայտնելու հնարավորությունից: Համագործակցությունը դասի անբաժանելի մասն է. աշակերտներն աշխատում են խմբերով իրենց երկրում կամ այլ երկրների իրենց հասակակիցների հետ: Օրինակ՝ մի երկրի աշակերտներին կարող են ուսուցանել այլ երկրի աշակերտները՝ ուսուցողական առաջադրանք-վարժությունների ընթացքում օգտվելով իրենց մայրենի լեզվից: |
| **Քայլ 1 –** (45 րոպե) | **Նախապատրաստական առաջադրանքներ**–TeamUp-ում ստեղծեք լսարան և հղումն ուղարկեք աշակերտներին՝օգտագործելով նաև լուսանկարչական ռեգիստրը TeamUp-ում: Առաջին դասի սկզբում համաձայնության եկեք աշակերտների հետ գնահատման չափանիշների շուրջ:<br>**Երազեք**– Ներկայացրեք դասերի թեմատիկ կազմակերպման ուրվագիծը, թե ինչպես են դրանք համապատասխանում ուսումնական ծրագրին և օտար լեզվով լսելիս, խոսելիս, կարդալիս և գրելիս ինչ է ակնկալվում աշակերտներից առաջխաղացման համար: Աշակերտները պետք է տեղեկացված լինեն նաև համագործակցությունից ակնկալվող արդյունքների, իրենց և խմբի ուսումնառության գործընթացի ինքնավարության և պատասխանատվության մասին:<br>**Խմբային ծրագրերի օրինակներ յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ.**<br>**Թեմա 1** –Համագործակցելով ստեղծել կայք կամ բլոգ այն ամենի օգնությամբ, ինչն աշակերտները համարում են լավագույն կայքեր և շտեմարաններ իրենց տնային աշխատանքների, այդ թվում՝ լեզու սովորելու, վիրտուալ թանգարանների, ֆիզիկայի և այլնի համար:<br>**Թեմա 2** – Համագործակցելով ստեղծեք կայք կամ բլոգ այն չափանիշներին համապատասխան, որոնք հնարավորություն են տալիս տարբերել կեղծ կայքը արժանահավատից:<br>**Թեմա 3** – Համագործակցելով ստեղծեք կայք կամ բլոգ՝ նկարագրելով այն միջոցառումներն ու գործիքները, որոնց օգնությամբ կարող ենք համացանցում խուսափել ածնական տվյալների որսից: |

**Թեմա 4** –Համագործակցելով ստեղծեք այնպիսի կայք կամ բլոգ, որը կներկայացնի ծրագիր այն մասին, թե ինչպես բարելավել առցանց հեղինակությունը, այդ թվում՝ այն չափանիշները և/կամ գործողությունները, որոնք հարկ է ձեռնարկել համացանցում իրենց «թվային հարաբերությունների» շրջանակներում: Ծահագրգռեք աշակերտներին, որպեսզի լավագույնս իրենց դրսևորեն և խոսեք նրանց հետ համագործակցության կարևորության, ՏՀՏ գործիքների մասին, նաև ներկայացրեք այն չափանիշները, որոնք թույլ կտան նրանց օտար լեզվով տեքստերի կամ ձայնագրությունների միջոցով իրենց կարծիքները համացանցում տեղադրելիս հարգեն այլոց:

**Ուսումնասիրեք**–Վերլուծեք տարբեր աղբյուրներիտվյալներն օգտվելով համագործակցային գործիքներից, ինչպիսիք են Google Docs-ը կամ TitanPad-ը: Աշակերտներն, ըստ իրենց գիտելիքների, գուցե կարիք ունենան կատարելու որոշակի հետազոտական աշխատանք՝ օգտվելով համագործակցության գործիքներից: Ահա այն մտքերը, որոնց շուրջ նրանք կցանկանան մտորել յուրաքանչյուր թեման քննարկելիս:
**Թեմա 1** –Ինչպես օգտվել համացանցում առկա տեղեկություններից, համացանցի օգտագործումը  տնային հանձնարարությունները կատարելիս:
Համացանցի մասին.
1. Համացանցում առկա բոլոր տեղեկությունները արժանահավատ են և ճշմարիտ՝ անկախ այն բանից, թե որ կայքում են դրանք ներկայացված:
2. Հատուկ տարրական և միջնակարգ դպրոցների աշակերտների համար կան ռեսուրսներ կամ միջոցներ:
3. Ես չպետք է տեսանյութեր վերբեռնեմ համացանցում, որովհետև չեմ ցանկանում, որ ինձ բացահայտեն:
**Թեմա 2** –Կեղծ կայքեր, արժանահավատություն և համացանցի դրականորեն օգտագործում:
Ես չեմ օգտվում Գուտենբերգի ծրագրի գրքերից, որովհետև.
1. Հեղինակային իրավունքի վերաբերյալ խնդիրները թույլ չեն տալիս ինձ օգտվել էլեկտրոնային գրքերից.
2. Կայքը գրավիչ չէ.
3. Ինձ հասանելի գրքերը բոլորն էլ հին են:
**Թեմա 3** –Անձնական տվյալների որս, անվտանգ ճամփորդություն համացանցում: Աշակերտները պետք է լրացնեն հետևյալ հարցարանը՝
https://www.phish-no-phish.com/staying-safe-online/quiz/
**Թեմա 4** – Մտածեք նախքան տեղադրելը, սոցիալական ցանցերը և դրոշմելը, անձնական տվյալների գաղտնիությունը:
Ես ընկերներիս հետ մի երեկույթի ընթացքում լուսանկարվում եմ և տեղադրում սոցիալական ցանցում:
Առհասարակ խնդիր չէ.
1. սոցիալական ցանցում նկար տեղադրելը,
2. լուսանկարում իմ բոլոր ընկերներին դրոշմելը,
3. նկարի վերաբերյալ մեկնաբանություններ անելը,
4. երեկույթի վայրի մասին տեղեկություններ տարածելը:
**Նախնական քննարկումներից հետո**
Թեմաներից յուրաքանչյուրի մասին մի քանի լեզվով ռեսուրսներ են առկա՝ http://lreforschools.eun.org/web/guest/insafe.
**Որոշ ոգեշնչող ռեսուրսներ՝ ըստ թեմաների.**
**Թեմա 1** –Ինչպես օգտվել համացանցում առկա տեղեկություններից, համացանցի օգտագործումն ուսումնական առաջադրանքների համար:
http://goo.gl/FBQxRL
**Թեմա 2** –Կեղծ կայքեր, արժանահավատություն և համացանցի դրական օգտագործում՝ http://goo.gl/qwl19F:

| | |
|---|---|
| | **Թեմա 3** – Անձնական տվյալների որս, անվտանգ ճամփորդություն համացանցում:<br>http://goo.gl/llhlmx<br>http://goo.gl/TZ6nrS<br>**Թեմա 4** – Մտածեք նախքան տեղադրելը, սոցիալական ցանցեր և դրոշմներ, անձնական տվյալների գաղտնիություն:<br>http://youtu.be/zlM-YuUQ3Ms<br>Խրախուսեք աշակերտներին, որպեսզի նրանք աշխատեն իրենց թեմայի վրա ուսումնական հաստատությունից դուրս (տանը,հեռահար հաղորդակցության միջոցով):<br>Աշակերտները պետք է գրի առնեն իրենց մտքերը զարգացնող աշխատանքի ամեն փուլի ավարտին՝ օգտվելով TeamUp-ից կամ Audacity-ից (հետագայում նյութեր տեղադրեն Blogger-ում կամ կայքում): Ծրագրի շրջանակում իրենց առաջընթացի, իրենց հանդիպած մարտահրավերների և հաջորդ քայլերի մասին աշակերտները կարող են նաև հրապարակել և տարածել տեսաձայնային մտքեր և մեկնաբանություններ: Ծրագրի ուսուցիչները համագործակցելով սոցիալական ցանցերի միջոցով, կարող են զարգացնել իրենց  թվային և Web 2.0 գործիքների ոլորտի գրագիտությունը և  հաղորդակցության հմտությունները:<br>**Խորհրդածություն**<br>Աշակերտների յուրաքանչյուր խումբ պետք է պատասխանի հետևյալ հարցերին օտար լեզվով (օգտվելով TeamUp-ից).<br>Ինչ աշխատանք են կատարել առայսօր,<br>ինչ են որոշել անել և չանել,<br>արդյոք ինչ-որ բան սխալ է ստացվել,<br>ինչն է լավ ստացվել,<br>ինչ են նրանք ծրագրել հաջորդ դասաժամին անելու:<br>Ամեն դասաժամին նշումներ կատարեք յուրաքանչյուր խմբի պատասխանի մասին: |
| **Քայլ 2 –** (45 րոպե) | **Քարտեզ**– խմբերից յուրաքանչյուրը պետք է ստեղծի մտքի քարտեզ իրենց ընտրած թեմայի վերաբերյալ: Ուսուցչի օժանդակությամբ խմբերը կվերլուծեն և ի մի կբերեն իրենց գաղափարները,ստացած տեղեկությունները՝ օգտվելով մտքի քարտեզների գործիքներից, ինչպիսիք են Popplet-ը, FreeMind-ը կամ CMap-ը: Նրանք պետք է մատնանշեն օրինակների և/կամ հետազոտման փուլում հավաքած մուլտիմեդիա ֆայլերի նմանությունները և տարբերությունները:<br>**Համագործակցություն**–Աշակերտները խմբային աշխատանքի և տեղեկությունների շարունակական տարածման ու փոխանակման շնորհիվ նպաստում են համագործակցության խթանմանն այնպիսի գործիքների միջոցով, ինչպիսիք են՝ տեքստի համար Google Docs-ը, TitanPad-ը, իսկ ձայնագրությունների համար Google Hangouts-ը: Համագործակցության համացանցային գործիքները ներառում են վիկիները, բլոգերը և այլն, իսկ համագործակցությունը խթանվում է ուսումնառության քարտեզագրեք, ստեղծեք և ցուցադրեք (Mapping, Make and Show) վարժությունների շնորհիվ:<br>**Խնդրեք**, որպեսզի աշակերտները կապվեն դպրոցից դուրս իրենց հասակակիցների հետ (կարող եք համագործակցել այլ դպրոցների ուսուցիչների հետ՝ ստուգելու համար այս մոտեցման արդյունավետությունը): Մանկավարժական կադրերի զարգացման կազմակերպության (SDE) փորձագետներին կարող եք խնդրել, որպեսզի օգնեն վերլուծելու և մեկնաբանելու աշակերտների կազմած նյութի ուժեղ և թույլ կողմերը:<br>**Խորհրդածություն**<br>Քարտեզագրման վարժությունների վերաբերյալ արձագանքող կարծիքների, եթե հնարավոր է, արտաքին փորձագետների և/կամ ուսուցիչների արտահայտած կարծիքների օգնությամբ: |

| | |
|---|---|
| **Քայլ 3 –** (30 րոպե) | **Ստեղծել**–Աշակերտները՝ որպես բովանդակություն ստեղծողներ՝ պետք է իմանան հեղինակային իրավունքի մասին սահմանված կարգը, հարկ է առաջարկել, որ փնտրեն Creative Commons-ը՝ իրենց առաջադրանքներում հեղինակային իրավունքով չպաշտպանված այլ նյութեր և ռեսուրսներ օգտագործելու համար: Աշակերտները, հիմնվելով իրենց հետազոտությունների արդյունքների, հայեցակարգային քարտեզներում ստեղծած գաղափարների և մտորումների վրա, սկսում են կառուցել իրենց վերջնարդյունքի առաջին տարբերակը: Աշակերտները նախ՝ պետք է ստեղծեն քննարկումների ուրվագիծ իրենց խմբում, եթե հնարավոր է, այլ դպրոցների կամ երկրների աշակերտների հետ՝ ուշադրություն դարձնելով հանդիպող խնդիրների և մարտահրավերների լուծմանը:<br>Շատ կարևոր է ուսումնառության վարժություններով և նախագծման գործընթացում աշակերտներին հոգատարությամբ ուղղորդելը՝ չմոռանալով ուսումնական ծրագրի բովանդակությունը:<br>**Խորհրդածություններ**<br>Պատասխան կարծիք ներկայացնել բոլոր խմբերին իրենց արդյունքների (կայքեր, ձայնագրություններ և այլն) մասին: |
| **Քայլ 4 –** (30 րոպե) | **Ցուցադրություն**–Աշակերտները ներկայացնում են իրենց աշխատանքը՝ ընտրելով տեղական և պատշաճ գործիքներ ու ռեսուրսներ (դպրոցական կայքից, գրադարանից կամ դպրոցից դուրս այլ տեղերից), ցուցադրում իրենց ծրագրերի արդյունքները, նյութերը և նախագծման գործընթացները,  տեղեկություններ հաղորդում ստացած գիտելիքի վերաբերյալ:<br>**Խորհրդածություն**<br>Պատասխան կարծիք տրամադրել բոլոր խմբերին իրենց արդյունքների (կայքեր, ձայնագրություններ և այլն) վերաբերյալ: |
| **Օժանդակ տարբերակներ.** | Ինչպե՞ս կարող եմ ես իմ տնային աշխատանքի համար գտնել այնպիսի ռեսուրսներ, որ կարողանամ դրանք տարածել համացանցում:<br>Տարածման ենթակա ռեսուրսների մի զգալի մասը կարելի է գտնել վիրտուալ գիտական թանգարաններում կամ Creative Commons կազմակերպության միջոցով՝<br>http://goo.gl/xnYj3c<br>Ինչպե՞ս կարող եմ գտնել այնպիսի չափանիշներ, որպեսզի հասկանամ, թե ինչն է դրական բովանդակությունը համացանցում:<br>«Դրական բովանդակության չափանիշներն» այն առանցքային տեսակետներն են, որոնք պետք է հաշվի առնել երեխաների համար առցանց բովանդակություն կամ ծառայություններ ստեղծելիս. թիրախային խումբ և տարիքային համապատասխանություն, գրավչություն, օգտագործելիություն, վստահելիություն, անվտանգություն և անձնական տվյալների գաղտնիության հարցեր: Չափանիշների մասին փաստաթուղթը մատչելի է 13 լեզվով հետևյալ հղումով՝<br>http://www.positivecontent.eu/<br>Որոնք են այն հիմնական կանոնները, որոնց պետք է հետևեմ համացանցով հաղորդակցվելիս:<br>Այն, թե ինչպես ենք մենք հաղորդակցվում առցանց, ազդում է մեր թվային կյանքի վրա, ստորև ներկայացվող կայքը կարևոր աղբյուր է, որը ներկայացնում է օգտակար կանոններ, որոնք արժե մտապահել.<br>http://www.bbc.co.uk/webwise/guides/about-netiquette |

| | |
|---|---|
| **Հղում(ներ)** | **Լրացուցիչ ռեսուրսներ**<br>Դրոշմ պատանիների համար–մտածեք նախքան տեղադրելը<br>http://www.cybersmart.gov.au/tagged/<br>Անձնական տվյալների գաղտնիություն<br>http://www.dubestemmer.no/en/13-17-ar/privacy (անհրաժեշտ է գրանցվել)<br>Դրվագ՝ առցանց նյութ տեղադրելու մասին<br>http://goo.gl/K552rH (The Telegraph)<br>https://www.getsafeonline.org/protecting-your-computer/safe-internet-use/<br>Որոնելով Creative Commons-ի ռեսուրսները<br>http://search.creativecommons.org/<br>Գտնել մարդկանց և ռեսուրսներ SDE-ի (http://www.itec-sde.net/) կամ այնպիսի թեմատիկ աղբյուրների միջոցով, ինչպիսիք են ազգային վիրտուալ թանգարանները: |

| Գործնական աշխատանք | Վերլուծել նկարները |
|---|---|
| **Հեղինակ** | Մաքսիմ Դրուե, Ֆրանսիա |
| **Թեմա** | Տեղեկությունները գիտելիք չեն |
| **Կարողություններ** | Հաղորդակցություն օտար լեզուներով / հաղորդակցություն մայրենի լեզվով / թվային կարողություններ |
| **Մակարդակ** | ☑ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 13-15 տարեկան |
| **Տևողություն** | Երկուական դասաժամ, յուրաքանչյուրը՝ մոտ 50 րոպե |
| **Դասընթացի նպատակը** | Հասկանալ, որ նկարները չեն արտացոլում իրականությունը.<br>• ունակ լինել ճանաչելու կեղծ նկարները.<br>• զարգացնել ՏՀՏ հմտությունները.<br>• կատարելագործել օտար լեզվի իմացությունը: |
| **Ներածական.** | Մեր աշակերտներն իրենց ամենօրյա կյանքում նկարներ են տեսնում հեռուստատեսությամբ, ամսագրերում, գովազդներում և համացանցում: Նրանք հաճախ չեն էլ կասկածում, որ այդ նկարներն իրականությունը չեն պատկերում:<br>Սույն վարժության նպատակն է մեծացնել աշակերտների քննադատական մտածողությունը նկարների առնչությամբ: Այս դասը կարելի է հեշտորեն օգտագործել eTwinning ծրագրով: Վարժություններն այնուհետև կարվեն եվրոպական թիմերի համագործակցությամբ և ներդասարանային խմբերով: |
| **Գործիքներ** | Հարցարաններ ստեղծելու համար՝ http://www.socrative.com (անհրաժեշտ է գրանցվել)<br>Գրատախտակներ ստեղծելու և այնտեղ փաստաթղթեր ավելացնելու համար՝ http://padlet.com<br>Դինամիկ սլայդներ ստեղծելու համար՝ http://www.prezi.com<br>Նմանատիպ նկարներ գտնելու համար՝ http://www.tineye.com և https://images.google.com/<br>JPEGsnoop: Խմբագրված լուսանկարներ գտնելու (անվճար ծրագրեր)<br>Ձեր ձայնը ձայնագրելու և mp3 ստեղծելու համար՝ http://vocaroo.com<br>Համագործակցել՝ ինչ-որ բան գրելու համար՝ https://titanpad.com |
| **Դասընթաց** | Նախքան նկարների մասին ձեր աշակերտների գիտելիքներնու հմտություններն ստուգելը, ստեղծեք հարցարան հետևյալ գործիքի միջոցով՝ http://www.socrative.com/ (անհրաժեշտ է գրանցվել):<br>Ուսուցիչը պահում է բոլոր հարցերը վերջին դասի համար: Ահա, մի քանի հարց, որ կարող եք տալ.<br>• Կնոջ նկար.արդյոք այն մշակված է:<br>• Նկար նորություններից. արդյոք այն մշակված է:<br>• Մի մարդու լուսանկար. ձեր կարծիքով, ի՞նչ է անում այդ մարդը:<br>• Ինչպե՞ս կարող եք իմանալ, հենց նոր տեսած նկարները մշակված են, թե ոչ:<br>• Նախքան համակարգիչների ի հայտ գալը հնարավո՞ր է եղել, արդյոք, ձևափոխել լուսանկարները, օրինակ՝ 1950-ականներին: |
| **Դաս 1** | **Ձևափոխե՞լ լուսանկարը: Շատ հեշտ է (2 x 50 րոպե)** |

**Քայլ 1 –** (50 րոպե)

- օգտվելով http://padlet.com/-ից կամ այլ նման գործիքից՝ առցանց վերբեռնեք մի քանի փաստաթուղթ, օրինակ՝ լուսանկարներ առցանց թերթից, առցանց գովազդներից կամ կայքի գլխավոր էջից: Այս փաստաթղթերը կօգնեն ձեզ ցույց տալու, թե ինչպես կարելի է, մեքենայություններ կատարել, փոփոխել կամ աղավաղել լուսանկարները:
  Փաստաթղթերի օրինակներ՝
- «Al-Ahram թերթը պաշտպանում է Հոսնի Մուբարաքի մշակված լուսանկարը The Guardian- ում», սեպտեմբերի 17, 2010թ.: http://goo.gl/culwNG (The Guardian):
- «Միշել Օբամայի Օսկարի մրցանակաբաշխությանը հագած զգեստը շատ բաց է Իրանի լրատվամիջոցների համար», theguardian.com, փետրվարի 25, 2013թ.: http://goo.gl/KYM0zl (The Guardian)
- «Մանիպուլացնելով ճշմարտությունը, կորցնելով վստահությունը», Ֆրանկ Վան Ռայփեր, The Washington Post: http://goo.gl/0w5efl (The Washington Post)
- «Դեմի Մուրը ապավինում է Թվիթերին՝ հակադարձելու աէրոգրաֆիայի մասին մեղադրանքներին,» Daily Mail Reporter-ից, նոյեմբերի 20, 2009թ.: http://goo.gl/R4mVgd (The Daily Mail)
- «Հայտնիների ֆոտոշոփի 9 ամենից ոչ պետքական օրինակները», Լորեն Դյուկա,The Huffington Post, հոկտեմբերի 17, 2013թ.: http://goo.gl/VaLoAw (հատկապես Բեյոնսեի նկարով շապիկը) (The Huffington Post)
- «Նոր հարված. արդյոք նոր մոտեցումները և կարգավորող վերահսկողությունը կանդրադառնա տպագիր գովազդների մշակմանը» Ջեսիկա Սիգել, Adweek. com, մայիսի 29, 2012թ.: http://goo.gl/1Kw60V (Adweek)
- Աղավնու գովազդը որպես«Էվոլյուցիա», 2006թ. : http://goo.gl/e9uxhr
- «Մատարական հետհաշիվ» Pixus retouch, 2009թ.: http://goo.gl/2yCQqn

Այլ գաղափարներ կարելի է գտնել այստեղ.

- http://www.arretsurimages.net/dossier.php?id=204 (ֆրանսերեն)
- http://www.fourandsix.com/photo-tampering-history/ (անգլերեն)

**Գործնական վարժություն.** Աշակերտներին հանձնարարվում է ստեղծել պարզ սլայդների ցուցադրություն՝ տարրական դպրոցի երեխաների հետ երևակայական դաս անցկացնելու նպատակով: Պետք է ներկայացնեն, թե ինչու նրանք իրենց տեսած բոլոր պատկերները չպետք է համարեն «Ճշմարիտ» կամ «իրական»: Նրանք կարող են օգտվել www.prezi.com - ից (անհրաժեշտ է գրանցում) կամ այլ ծրագրաշարից, համացանցային կայքից, սակայն սլայդների ցուցադրումը պետք է ներառի.

- մշակված նկարի երկու օրինակ Պադլետ-ից,
- բացատրություն այն մասին, թե ինչն է սարքված,
- մի շարք պատճառներ, թե ինչու են նրանք կարծում, թե պատկերը ձևափոխված է և ձևափոխման նպատակները,
- այն խնդիրների կամ վտանգների ցանկը, որոնք կարող են առաջանալ նկարները փոփոխելուց:

| | |
|---|---|
| **Քայլ 2 –** (50 րոպե) | **Ներկայացնել արդյունքները**<br>Յուրաքանչյուր խումբ ցուցադրում է իր սլայդները դասարանի մյուս մասին՝ քննարկման և մեկնաբանությունների համար: Աշակերտներնայդ գործողություններն իրականացնում են անգլերենով կամ այն լեզվով, որ սովորում են:<br>Աշակերտները կարող են գրի առնել իրենց ներկայացման գնահատականը՝ օգտվելով http://vocaroo.com/-hg: Ի՞նչ սովորեցին: Ի՞նչ են նրանք մտածում հիմա պատկերներ փոփոխելու մասին: Արդյոք ունե՞ն այլ հարցեր:<br>Բացատրեք, որ նկարների մշակումը նոր բան չէ, օգտվեք լրագրողական հետևյալ հոդվածներից.<br>«Հին փոտոշոփը.առաջին ձևափոխված պատկերները» Լի Մորան, dailymail.co.uk,  փետրվարի 28,2012թ.: http://goo.gl/2osiBw (Dailymail)<br>Ուսուցիչը որոշ խորհուրդներ է տալիս, թե ինչպես պարզել, արդյոք նկարը փոփոխված է.<br>• մանրամասն ուսումնասիրեք մասնիկները, մեծացրեք նկարը:<br>• Օգտագործեք այնպիսի կայքեր, ինչպիսիք են http://www.tineye.com/ պարզելու համար արդյոք ձեր նկարն օգտագործվել է համացանցում, որտեղից է այն վերցված, ամսաթիվը, նկարագիրը և այլն:<br>• JPEGsnoop-ը մեկ այլ անվճար ծրագրաշար է, որը բացահայտում է խմբագրված լուսանկարները՝ http://goo.gl/bLwEVB<br>• Սլաքը դրեք նկարի վրա, սեղմեք աջ բանալին, մտեք Properties, հետո՝ Details-ը, այդպիսով դուք շատ տեղեկություններ կստանաք ձեր նկարի մասին: Եթե տեսնում եք «Photoshop», ապամեծ է հավանականությունը, որ նկարը փոփոխված է:<br>**Տնային հանձնարարություն.**<br>**Ճիշտ է, թե՞ սխալ:**<br>Մեկական նկար տվեք յուրաքանչյուր աշակերտի: Նրանք, օգտվելով նախորդ խորհուրդներից, պետք է փորձեն պարզել, արդյոք այն ճիշտ է, թե կեղծ: Աշակերտներն իրենց պատասխաններն էլ. փոստով ուղարկում եմ ուսուցչին՝ բացատրելով, թե ինչու են այդ կարծիքին հանգել, նաև այլ տեղեկություններ են հաղորդում նկարի մասին, եթե ունենում են:<br>*Խորհուրդ.համացանցում նկար և դրա մասին  տեղեկություններ գտնելը պետք է հեշտ լինի;* |
| **Դաս 2** | **Մի փոքր փոփոխություն... և իմաստը լրիվ փոխվում է (50 րոպե)** |
| **Քայլ 1 –** (5 րոպե) | Նախքան սկսելն ամփոփեք նախորդ դասի բոլոր գրառումները և պատասխանեք բոլոր հարցերին: |
| **Քայլ 2 –** (20 րոպե) | **Նույնը... բայց՝ տարբեր:**<br>Նախապես ընտրեք նկար, որի վրա պետք է աշխատեք: Դասարանի կեսին տվեք այդ նկարը՝ ուսուցչի հորինած վերնագրերով: Մյուս կեսը ևս ունի նույն նկարը, բայց այլ վերնագրերով:<br>Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է բացատրի իր նկարը (վերնագրի մասին չխոսելով)՝ ասելով, թե ինչ է մտածում դրա մասին, ինչ է զգում: Նրանք իրենց ձայնագրում են՝ http://vocaroo.com/ - ով անգլերենով կամ իրենց լեզվով: |

| | |
|---|---|
| **Քայլ 3 –** (25 րոպե) | **Գնահատում**<br>Ծավալեք քննարկում հետևյալ թեմայով. Ինչու են  նույն նկարի մասին այդքան տարբեր կարծիքներ ստեղծվում:<br>Բացատրեք, որ վերնագիրը կարող է հանգեցնել տարբեր մեկնաբանությունների: Սա մեկ այլ ձև է, որով նկարը կարող է ձևափոխվել այլ իմաստ արտահայտելու նպատակով: |
| | Եզրափակելով բացատրեք, որ իրենց անհրաժեշտ նկարն ընտրելու համար անհրաժեշտ է գտնել նկարի աղբյուրը, ամսաթիվը և այլ տեղեկություններ նկարի մասին:<br>**Տնային հանձնարարություն.** Մենք կարող են ստիպել նկարին, որ ասի ամեն բան:<br>Մի նկար տրամադրեք դասարանին: Աշակերտներն ստեղծում են վերնագիր, որը պետք է արժանահավատ լինի: Նրանք կարող են ավարտել հանձնարարությունն անգլերենով կամ այլ լեզվով և վերբեռնել իրենց աշխատանքը դպրոցի աշխատանքների տիրույթում: Այնուհետև օգտվելով https://titanpad.com/ -ից, աշակերտները բացատրում են,  թե նույն նկարի մասին ինչու էին այդքան տարբեր մեկնաբանությունները և թե ինչ խնդիրների դա կարող է հանգեցնել: |
| **Լրացուցիչ տարբերակներ.** | Աշակերտները մեկ անգամ ևս պատասխանում են հարցարանին, որին պատասխանել էին ներածության ժամանակ հետևյալ կայքում՝ http://www.socrative.com (անհրաժեշտ է  գրանցվել):<br>Նրանք կարող են օգտվել այն գործիքներից, որոնց մասին սովորել են դասարանում տարբեր դասերի ժամանակ: Կարող են համեմատել իրենց արդյունքները և քննարկել, թե ինչ առաջադիմություն են ունեցել,դասի ո՞ր մասի վրա պետք է ավելի շատ աշխատեն: |

| Գործնական աշխատանք | Գնանք գնումների |
|---|---|
| **Հեղինակ** | Յեզուս Մելգար Տիտո, Իսպանիա |
| **Թեմա** | Մասնակցություն համացանցում |
| **Կարողություններ** | Մաթեմատիկական և բազային կարողություններ գիտության ու տեխնոլոգիաների բնագավառում / Հաղորդակցություն մայրենի լեզվով / թվային կարողություններ |
| **Մակարդակ** | ☑ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 13-15 տարեկան |
| **Տևողություն** | Երկու դաս |
| **Դասընթացի նպատակը** | • Աշակերտներին ներկայացնել նախնական տվյալներ էլեկտրոնային առևտրի մասին.<br>• Առաջարկել աշակերտներին մտածել առցանց գնումների առավելությունների և թերությունների մասին.<br>• Համեմատել առցանց գնումները և ավանդական գնումները: |
| **Ներածական.** | Ձեր կարծիքով, ո՞վ էր առաջին էլեկտրոնային գնորդը.մարդ, ով լավ տեխնոլոգիական հմտություննե՞ր ուներ, ով համակարգչային գիտությամբ էր զբաղվել: Դուք շատ կզարմանաք, որ ներկայացնենք Ձեյն Սնոուբոլին, ով 1984թ. մայիսին օգտագործեց իր հեռուստացույցն առցանց գնում կատարելու նպատակով: Նա պարզապես պատվիրեց կարագ, հատիկեղեն և ձվեր մոտակա սուպերմարկետից: |
| **Գործիքներ** | Համակարգիչներ, որոնք միացած են համացանցին, պրոեկտոր, ֆլիփչարթ:. |
| **Դասընթաց** | |
| **Դաս 1** | **Բնութագիրը** |
| **Քայլ 1 –** (5 րոպե) | Փնտրեք տեղեկություններ այսօրվա էլեկտրոնային գնորդների նկարագրի մասին (տարիք, սեռ, նախասիրություն և այլն): Արդյոք տիկին Սնոուբոլը համապատասխանու՞մ է այս բնութագրին:<br>Էլեկտրոնային առևտուրը թվերով::<br><br><br>Աղբյուրը՝ Ecommerce Europe<br>*http://www.ecommerce-europe.eu/home* |

**Քայլ 2 –** (20 րոպե)

(աշխատանք խմբերի հետ) Վերլուծեք վերոգրյալ տեղեկացուցակում (ինֆոգրաֆիկայում) առկա տեղեկությունները եվրոպացի էլեկտրոնային գնորդների մասին: Բնակիչների քանի՞ տոկոսն է առցանց գնումներ կատարում: Արդյոք նույն պատկե՞րն է ձեր ծանոթների կամ ընկերների շրջանում: Հանձնարարեք աշակերտներին տեղեկություններ հավաքել իրենց դասընկերների մասին և պատասխանել հետևյալ հարցերին.

- հաշվել դասարանում էլեկտրոնային գնորդների տոկոսը,
- դիտարկել յուրաքանչյուր գնորդի միջին ծախսերի մասին տվյալները:

Արդյոք համարո՞ւմ եք, որ ձեր դասարանն արտացոլում է միջին թիվը: Մեծ տարբերություն կա Եվրոպայի արևմուտքի և այլ տեղանքների միջև: Ինչն է դրա պատճառը:

**Քայլ 3 –** (20 րոպե)

Միշտ այդպես չի եղել: Տեղեկություններ փնտրեք և ստեղծեք գծապատկեր՝նշելով վերջին հինգ տարում բնակիչների թիվը, համացանցից օգտվողների թիվը և էլեկտրոնային գնորդների թիվը: Արդյոք գնորդների աճն ամեն տարի համաչա՞փ է եղել: Կանխատեսեք, թե ինչ տեղի կունենա հաջորդ հինգ տարում:
Պատկերում կան թվեր էլեկտրոնային առևտրի ոլորտի աշխատողների քանակի մասին: Ի՞նչ կարծիք ունեք այս մասին: Արդյոք էլեկտրոնային առևտրի աճն ազդու՞մ է ավանդական խանութների վրա:

## Դաս 2 — Ավանդական գնումներն ընդդեմ համացանցայինի

**Քայլ 1 –** (10 րոպե)

Համեմատեք առցանց գնումներն ավանդական գնումների հետ:
Արդյոք երբևէ որևէ բան գնե՞լ եք առցանց: Ինչո՞ւ եք առցանց գնումներ կատարել, ձեր քաղաքում գտնվող ավանդական խանութ գնալու փոխարեն:
Ինչ վերաբերում է մեր իրավունքներին.արդյոք նույնն են սպառողներիս իրավունքներն առցանց և ավանդական խանութներից գնումներ կատարելիս:
Մտածեք ձեր տան մոտ գտնվող խանութի մասին:
Ինչպե՞ս կարող են նրանք իրենց ապրանքները վաճառել առցանց:

**Քայլ 2 –** (10 րոպե)

Լրացրեք հետևյալ աղյուսակը՝ առցանց գնումների առավելությունների և թերությունների մասին:

| **Առավելություններ** | **Թերություններ** |
|---|---|
| 1. Գնել ինչ-որ տիպական բան այլ վայրից: | 1. Չգիտեմ, արդյոք գնածս հագուստը կլինի հագիս: |
| | |
| | |
| | |
| | |

Ի՞նչ ենք գնում:
Առցանց գնված և վաճառված ամենատարօրինակ գնումների շարքում տեսնում ենք, որ ինչ-որ մեկը $28,000 ԱՄՆ դոլար է վճարել Սուրբ Մարիամի պատկերով սենդվիչի համար և $14,000 ԱՄՆ դոլար Բրիթնի Սպիրսի ծամած ծամոնի համար: Մեկ այլ դեպքում մոտ 24,000 մարդ մասնակցել է կնոջ մարմնի վրա իրենց գովազդը տեղադրելու մրցույթին: Ի վերջո goldenpalace.com-ը վճարել է $37,375 ԱՄՆ դոլար, որպեսզի իրենց լոգոն դաջվի Կարի Սմիթի ճակատին:

| | |
|---|---|
| **Քայլ 3 –** (10 րոպե) | Արդյոք երբևէ փորձե՞լ եք վաճառել ձեր հին վիդեոխաղերը, որոնք այսօր այլևս չեք օգտագործում: Արդյոք ամեն մարդ կարո՞ղ է այսօր առցանց վաճառել, թե կարծում եք, որ դրա համար անհրաժեշտ է ընկերություն ունենալ: Ձեր կարծիքով, որն է առցանց ամենալավ վաճառվող ապրանքը: Ձեր դասընկերների հետ քննարկեք՝ արդյոք առցանց կարելի՞ է ամեն ինչ վաճառել, թե՞ կան սահմանափակումներ, ի՞նչ սահմանափակումներ կան և ո՞վ է դրանք որոշում: |
| **Քայլ 4 –** (10 րոպե) | Վճարման  տարբեր ձևեր կան առցանց գնումներ կատարելիս՝ կանխիկ՝ առաքման պահին, վարկային քարտերով կամ բանկային փոխանցումներով: Ձեռք բերեք տեղեկություններ վճարման եղանակների մասին (Paypal, Google Wallet և այլն): Ի՞նչ են դրանք և որո՞նք են դրանցից օգտվելու առավելությունները: Բացի այդ մեթոդներից, կան նաև մի շարք այլ կիրառական ծրագրեր՝ պլանշետների և սմարթֆոնների համար, որոնք թույլ են տալիս անվտանգ առցանց գնումներ կատարել: Որոնեք այդ կիրառական ծրագրերից մի քանիսը: Արդյոք աշխարհին այսօր կարո՞ղ է գոյություն ունենալ առանց կանխիկ դրամի: |
| **Քայլ 5 –** (5 րոպե) | Պատկերացրեք, որ ձեր ընկերներից մեկն առցանց գնում է ամեն ինչ, այդ թվում՝ կիրառական ծրագրեր, երաժշտության ներբեռնումներ և ծրագրաշար: Հաշվի առնելով նախորդ դասը, ի՞նչ կարող եք հաղորդել ձեր ընկերներին առցանց գնումների մասին: Ձեր ընկերներին խորհուրդ կտայի՞ք գնելուց առաջ մտածել, նախքան ինչ-որ բան գնելը, ծնողների հետ խորհրդակցել. ինչո՞ւ: |

| Գործնական աշխատանք | Սովորում ենք մաթեմատիկա |
|---|---|
| **Հեղինակ** | Իրինա Վասիլեսկու, Ռումինիա |
| **Թեմա** | Մասնակցություն Համացանցում |
| **Կարողություններ** | Գիտության և տեխնոլոգիաների բնագավառում մաթեմատիկական և բազային կարողություններ / Հաղորդակցություն մայրենի լեզվով / թվային կարողություններ |
| **Մակարդակ** | ☑ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 13-14 տարեկան |
| **Տևողություն** | 40 րոպե |
| **Դասընթացի նպատակը** | Ներկայացրեք տարբեր եղանակներ, որոնց միջոցով մաթեմատիկան կարող է օգտակար լինել համացանցում:<br>• Խրախուսեք աշակերտներին, որպեսզի աշխատեն համագործակցելով:<br>• Հնարավորություն տվեք աշակերտներին բացահայտելուհամացանցի առավելություններն ու թերությունները մաթեմատիկական վարժությունների համար:<br>• Ներկայացրեք, թե ինչպես պետք է ստեղծել հաստատուն գաղտնաբառեր մաթեմատիկայի օգնությամբ: |
| **Ներածական.** | **ուսուցիչների համար -** Դասը կենտրոնանում է այն եղանակների վրա, որոնց միջոցով կարելի է պատասխանատու կերպով օգտագործել համացանցը մաթեմատիկայի դասերի, ծրագրային աշխատանքի և տնային հանձնարարությունների համար:<br>• Այն քննարկում է մի քանի գործիք, որոնք կարելի է օգտագործել մաթեմատիկայում, օրինակ՝ ինչպես ստեղծել հաստատուն գաղտնաբառ, խաղերի և բլոգների/վիկիների օգտագործումը մաթեմատիկա սովորելիս, Ֆեյսբուքյան խմբերի կիրառումը համագործակցության համար, ընդգծելով առավելություններն ու ռիսկերը:<br>• Աշակերտներին հանձնարարվում է մեկնաբանել տվյալները և ստեղծել գծապատկեր, համեմատել գործիքները, լուծել որոշ պարզ հավանականություններ և/կամ գործառույթների վերաբերյալ հանձնարարություններ, ստեղծել հարցում և մեկնաբանել այն վիճակագրական տեսանկյունից՝ ձևավորելու մաթեմատիկական հմտություններ, տրամաբանական մտածողություն, խնդիրների լուծման հմտություններ, միևնույն ժամանակ սովորելով համացանցն օգտագործել անվտանգ կերպով:<br>**Աշակերտների համար -**Մաթեմատիկական վարժությունները կարող են շատ ավելի զվարճալի լինել,<br>եթե կատարվեն համագործակցության միջոցով, իսկ համացանցն առաջարկում է բազում գործիքներ: Սակայն համագործակցությամբ աշխատելու համար մենք պետք է անվտանգ և արդյունավետ համագործակցելու և հաղորդակցվելու ուղիներ գտնենք: Այս դասին մենք կփորձենք քննարկել մի քանի եղանակ: |
| **Գործիքներ** | Համացանցին միացած համակարգիչներ, պրոյեկտոր, ֆլիփչարթ |
| **Դասընթաց** | |
| **Աշակերտներին նախապատրաստող վարժություն - (2 րոպե)** | Դիտեք http://goo.gl/bcVT8r -ի գծապատկերը: Սահմանեք, թե քանի մարդ է այսօր օգտվում համացանցից: |

| | |
|---|---|
| **Քայլ 1 –** (5 րոպե) | **Համացանցային գործիքներ մաթեմատիկական վարժությունների համար**<br>**Հարցեր աշակերտներին.**<br>1. հետևյալ գործիքներից որո՞նք կարող են օգտակար լինել մաթեմատիկական վարժությունների համար՝<br>• բլոգները,<br>• վիկիները,<br>• խաղերը,<br>• թվիթերը,<br>• էլ. փոստը,<br>• Ֆեյսբուքը,<br>• զրուցարանը և նման կիրառական ծրագրերը,<br>• որոնման համակարգերը,<br>• Google Drive-ը:<br>2. Կարո՞ղ եք թվել, թե որոնք են այս գործիքներից օգտվելու առավելությունները: Կարո՞ղ եք ասել, թե ինչ առավելություններ ունեն այս գործիքները մաթեմատիկական վարժությունների համար՝ համեմատած դեմառդեմ շփման հետ: Օրինակ՝ ամաչկոտ աշակերտը կարող է ավելի հեշտությամբ արտահայտել իր կարծիքը համացանցում, քան դասարանում:<br>3. Հետևյալ հատկանիշներից որո՞նք կարող են լինել առավելություններ (Ա)/ թերություններ (Թ)համացանցը մաթեմատիկայի դասերի և վարժութունների համար օգտագործելիս.<br>• տեղեկությունների ակնթարթային մատչելիությունը,<br>• հեռահար հաղորդակցությունը,<br>• վիրուսներ/փոստաղբ ստանալը,<br>• կեղծ օգտատերերի անձնական էջերը,<br>• մեծաքանակ կրթական ռեսուրսները,<br>• ավելի հեշտ հաղորդակցություն ուսուցչի հետ,<br>• գովազդ,<br>• առցանց թարգմանչական գործիքներ,<br>• ներսում շատ ժամանակ անցկացնելը,<br>• ժամանակի ինքնուրույն տնօրինումը,<br>• ավելի մեծ տեսանելիություն,<br>• հաղորդակցության/բովանդակության ընկալում:<br>4. Հաշվեք յուրաքանչյուր խումբը և հաշվարկեք Ա/Թ համամասնությունը: Արդյոք այն 1-ից մեծ կամ փոքր է: Ինչպե՞ս  եք մեկնաբանում դա: |
| **Քայլ 2 –** (5 րոպե) | **Ձևավորել հաստատուն գաղտնաբառ**<br>Առցանց գործիքներից շատերը պահանջում են գրանցում: Մենք շատ հաճախ ենք գաղտնաբառ ստեղծում, արդյոք լավ մտածո՞ւմ ենք դա անելիս:<br>Հաստատուն գաղտնաբառը պետք է.<br>• լինի առնվազն ութ նիշից կազմված,<br>• չներառի ձեր իսկական անունը,<br>• չլինի ամբողջական բառ,<br>• էականորեն տարբերվի ձեր մյուս գաղտնաբառերից,<br>• ներառի առնվազն մեկ մեծատառ, մեկ փոքրատառ, մի թիվ և ստեղնաշարի մի խորհրդանիշ:<br>Վերցրեք մեկ բառ և փոխարինեք որոշ տառեր թվերով կամ նշաններով, օրինակ՝ «p1n@pp!E» («pineapple»)բառից: Ստուգեք https://howsecureismypassword.net/ -ում՝ համոզվելու համար, թե որքան հաստատուն և անկոտրում է ձեր ստեղծած գաղտնաբառը: Զգուշացրեք աշակերտներին, որ չստուգեն իրենց իրական գաղտնաբառերը՝ հաշվի առնելով գաղտնաբառերի ստուգման գործիքների սահմանափակ լինելը (հաքերային հարձակումների հավանականություն, գնահատման ոչ թափանցիկ ալգորիթմներ և այլն): |

| | |
|---|---|
| | **Հարցեր.**<br>1. Քանի՞ տարբեր գաղտնաբառ կարող եք ստեղծել միևնույն ութ նիշերով:<br>2. Եթե երկու աշակերտ օգտագործեն միևնույն ութ նիշերը, հավանակա՞ն է, արդյոք, որ նրանք կունենան միևնույն գաղտնաբառը:<br>Հանձնարարեք աշակերտներին դիտել նոր գաղտնաբառ ստեղծելու մասին հետևյալ ինֆոգրաֆիկան՝ http://goo.gl/fgblHH, և մտածեք, թե որ խորհուրդներն են նրանց համար նորություն: Նրանք կարող են օգտվել նաև Wolfram Alpha մաթեմատիկական հաշվարկների համակարգից (www.wolframalpha.com/)՝ հաստատուն գաղտնաբառեր ստեղծելու համար, ինչպես ներկայացվում է այս հոդվածում՝ http://goo.gl/Ak08cK: |
| **Քայլ 3 -** (8 րոպե) | Խաղերը մաթեմատիկայում.<br>Քննարկել այն հիմնական առավելությունները, որ խաղերը (հատկապես՝ տրամաբանական և ստրատեգիական, օրինակ՝Minecraft-ը) տալիս են մաթեմատիկա սովորողներին: Առաջարկություններ.<br>• օգտատերերը զարգացնում են խնդիրներ լուծելու և դատողություններ անելու հմտություններ, ստրատեգիաներ և արձագանքներ,<br>• ստանում են առաջընթացի մասին հստակ պատկերացում,<br>• սովորում են ռիսկի գնալ, ավելի մեծ մասնակցություն ունենալ և այլն:<br>Նաև քննարկեք խաղերի ռիսկերը՝ կախվածություն, ագրեսիվություն, կեղծ ինքնություն, վատ լեզու, գովազդ, կիբեռհետապնդումներ, ժամանակի օգտագործում, այլ իրականության կյանք, տեսողական խնդիրներ և այլն:<br><br>**Հարցեր աշակերտների համար.**<br>1. Դիտեք էլ.ուսումնառության «խաղայնացման» մասին ինֆոգրաֆիկան՝ http://goo.gl/gPnjuQ և ստեղծեք գծապատկեր հետևյալ պարբերությունից. «Ուսումնառուները հիշում են իրենց կարդացածի միայն 10 տոկոսը և լսածի միայն 20 տոկոսը: Եթե կան պատկերներ, որոնք ուղեկցում են բանավոր խոսքին, ապա հիշում են 30 տոկոսը, իսկ երբ դիտարկում են, որ բացատրողը պատկերավոր է ներկայացնում իր խոսքը, ապա հիշողության մեջ մնում է 50 տոկոսը: Սակայն ուսումնառուներն 90 տոկոսով հիշում են, «եթե ինքնուրույն են աշխատում, նույնիսկ եթե դա բեմականացում է»:<br>2. Արդյոք համարո՞ւմ եք, որ տարբեր խաղընկերների համար նախատեսված առցանց խաղերը (MMO կամ MO խաղեր) նույնպես ունեն ռիսկեր: Եթե այո, բերեք օրինակներ:<br>3. Ո՞րն է եղել անխոհեմ վարքագծի պատճառով ձեր ամենավատ փորձառությունն առցանց խաղերի ընթացքում:Ի՞նչ կարող էիք անել, դրանից խուսափելու համար:<br>4. Եթե առցանց խաղի խաղընկերները ձեզ խնդրեն հանդիպել իրական կյանքում կամ տալ իրենց անձնական բնույթի տեղեկություններ, ապա ի՞նչ կանեիք: |

**Քայլ 4 -** (10 րոպե)

**Բլոգները/վիկիները մաթեմատիկայում**
Խնդրեք աշակերտներին սանդղակով գնահատել բլոգի օգտագործումը մաթեմատիկական վարժություններում, որտեղ 1-ը ոչ օգտակարն է, իսկ 10՝ ամենաօգտակարը.

- Հասկացությունների բացատրություն/մասնագիտական տերմինների բառարան
- Դասարանային նշումների տեղադրում
- PowerPoints և այլ ռեսուրսների տեղադրում
- Հայտարարություններ
- Խնդիրների լուծում
- Համագործակցային/ծրագրային աշխատանք դասընկերների կամ այլ դպրոցների հետ
- Մասնավոր դեպքերի ուսումնասիրություն
- Իրական կյանքի մաթեմատիկա
- «Ամենաթույլի խնդիրը»
- Վերանայում

**Կանոններ՝ բլոգներից օգտվելու համար.**

1. Երբեք ձեր բլոգում և անձնական էջին անձնական տվյալներ կամ նկարներ մի տեղադրեք:
2. Երբեք մի մոռացեք հեղինակային իրավունքի կանոնների մասին:
3. Հիշեք, որ այն, ինչ տեղադրում եք, հանրային է, տեսանելի ուսուցիչների ու ծնողների համար և կարող է տարածվել:
4. Ընտրեք մեկնաբանությունների այնպիսի կարգավորումներ, որոնց համար կպահանջվի ձեր վարումը նախքան դրանց հրապարակումը:
5. Բլոգում նյութ, նկար կամ մեկնաբանություն տեղադրելուց առաջ լավ մտածեք:
6. Իմացեք, թե ինչպես պետք է որևէ բան հաղորդել և արգելափակել անցանկալի օգտատերերին:
7. Ձեր որակավորումների մասին տեղեկություններ մի տարածեք:
8. 8. Եթե հրավիրեք ձեր բլոգում այլ գրառումներ կատարողների, նրանց վերապահեք միայն իրենց դերին համապատասխան իրավունքներ:
9. Պատասխան արձագանք ներկայացնելիս եղեք նույնքան քաղաքավարի, որքան դասարանում եք: Այդ արձագանքը դարձրեք օգտակար և արդարացի:
10. Եթե անթույլատրելի կամ անցանկալի բան եք տեսնում ձեր էկրանին, ապա անմիջապես հայտնեք այդ մասին ձեր ուսուցչին կամ ծնողներին:

**Վարժություն.** Հանձնարարեք, որպեսզի ձեր աշակերտներն աշխատեն զույգերով և հորինեն այլ կանոններ և գրառեն դրանք ֆլիփչարթի վրա: Այնուհետև ընտրեք դրանցից 10 առավել օգտակար կանոնները և ստեղծեք «Բլոգերի տասը պատվիրանները»:

**Քայլ 5 –** (10 րոպե)

**Ֆեյսբուքը և մաթեմատիկական վարժությունները**

**Վարժություն.**Ենթադրենք, որ վիճակագրության համաձայն՝ Ֆեյսբուքի օգտատերերի տարիքային խմբերը հետևյալն են.

| Տարիքը | Տոկոսը |
|---|---|
| 13-17 | 14.8% |
| 18-24 | 32.3% |
| 25-34 | 26.6% |
| 35-44 | 13.2% |
| 44-54 | 7.2% |
| 55-64 | 3.5% |
| 64+ | 2.4% |

Ստեղծեք  գծապատկեր՝ դրանք նկարագրելու համար:

**Հարցեր աշակերտների համար**

1. Ի՞նչ հաճախականությամբ եք ստուգում ձեր Ֆեյսբուքի լրատուն:
2. Ինչի՞ համար եք օգտագործում Ֆեյսբուքը՝ զրույցների, լուսանկարներ տեղադրելու, ընկերների հետ կապի մեջ մնալու, կյանքի կարևոր իրադարձությունների մասին գրելու, լուսանկարներ վերբեռնելու և այլնի:
3. Նշեք հինգ տվյալ ձեր մասին, որոնք չպետք է տեղ գտնեն ձեր անձնական էջում:
4. Արդյոք երբևէ օգտվե՞լ եք Ֆեյսբուքից՝ դպրոցական վարժություններ կատարելու համար:
5. Կարծո՞ւմ եք, որ այն կարելի է օգտագործել դրա համար: Ինչպե՞ս:
6. Ընտրեք երեք լավագույն տարբերակները, որ կարող եք օգտագործել Ֆեյսբուքը մաթեմատիկական վարժությունների համար հետևյալ ցանկից՝
   - դասարանային խումբ՝ տեղեկություններ տարածելու և հանձնարարությունները կատարելու համար,
   - միջոցառումներ ծրագրելու համար,
   - խմբերով աշխատելու համար,
   - գրառումներ տեղադրելու այն աշակերտների համար, ովքեր բացակայել են դասից,
   - մուլտիմեդիա ռեսուրսներ տարածելու համար,
   - ամաչկոտ աշակերտներին ներգրավելու համար,
   - մոտալուտ վերջնաժամկետների մասին հիշեցումների, հայտարարությունների համար,
   - ուսուցողական կիրառական ծրագրեր օգտագործելու համար,
   - աշակերտների ավելի սերտ շփմանն օգնելու համար,
   - այլ դպրոցների հետ համագործակցելու համար,
   - հարցումներ անցկացնելու համար:

Արդյոք գիտե՞ք մաթեմատիկային վերաբերող Ֆեյսբուքյան էջեր:

Հանձնարարեք աշակերտներին աշխատել չորս հոգանոց խմբերով, որպեսզի ստեղծեն էթիկետի և անվտանգության հինգ կանոն մաթեմատիկայի Ֆեյսբուքյան խմբի համար: Նրանք կարող են օրինակներ գտնել հետևյալ հղումով՝http://goo.gl/JHqYiA, ստուգել տեղական ուղենիշները սոցիալական մեդիաների մասին: Հանձնարարեք, որ խուսափեն copy-paste-ի միջոցով արտատպելուց: Նրանք կարող են նաև արագ փնտրել, թե դպրոցի կայքն ունի՞ արդյոք սոցիալական մեդիաների և օգտագործման ընդունելի քաղաքականություն:

| | |
|---|---|
| **Լրացուցիչ տարբերակներ.** | **Լրացուցիչ տարբերակ 1:** Ստեղծեք Google Form ձեր դասընկերների համար՝ այս դասում հիշատակված համացանցային գործիքներից մեկի վերաբերյալ, դրա լավագույն կիրառությունը մաթեմատիկայում, առավելությունները, ռիսկերը և այլն: Ուղարկեք այդ Google Form-ը ձեր դասընկերներին և խնդրեք, որ պատասխանեն:<br>Այնուհետև տարածեք կուտակված տվյալները և կազմեք վիճակագրական տվյալների ամփոփում-մեկնաբանություն:<br>**Լրացուցիչ տարբերակ 2:** Խաղացեք Մեծ ուղեղ վարժությունը http://vsav.webducation.info/ (հնարավոր է, որ անհրաժեշտ լինի գրանցվել): |
| **Հղում(ներ)** | http://stats.areppim.com/stats/stats_internetxfcstx2010.htm<br>http://bit.ly/1CtKGQW<br>http://bit.ly/1xaFlg0<br>http://www.wolframalpha.com/<br>http://bit.ly/1wBuxFO<br>http://elearninginfographics.com/gamification-in-elearning-infographic/<br>http://www.edudemic.com/school-social-media-policy/<br>http://vsav.webducation.info/ / (հնարավոր է, որ անհրաժեշտ լինի գրանցվել): |

| Գործնական աշխատանք | Պատշաճ վարքագիծ |
|---|---|
| **Հեղինակ** | Դրյու Բադի, Միացյալ Թագավորություն |
| **Թեմա** | Իմ իրավունքներն ու պարտականությունները և Մասնակցությունը համացանցում |
| **Կարողություններ** | Սովորում ենք սովորել / Հասարակական և քաղաքացիական կարողություններ / թվային կարողություններ/քննադատական մտածողություն |
| **Մակարդակ** | ☐ Ցածր ☐ Միջին ☑ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 14-15 տարեկան |
| **Տևողություն** | 45 – 60 րոպե |
| **Դասընթացի նպատակը** | • Վերլուծել «մարդու իրավունքներ», «արտահայտվելու ազատություն», «գրաքննություն և ինքնագրաքննություն» հասկացությունները:<br>• Վարեք դասի այս հատվածն այնպես, որ աշակերտները մտորեն իրենց առցանց գործունեության մասին:<br>• Վարժվեք հարցազրույց վարելու մեթոդների ոլորտում:<br>ԵՄ հիմնարար իրավունքների մասին խարտիան, «Մեր երազած համացանցը» պատանիների համար ձեռնարկը |
| **Ներածական.** | Քանի որ համացանցը մեզ հնարավորություն է ընձեռել նյութեր հրապարակելու համաշխարհային լսարանի համար, մենք պետք է հասկանանք ինքնագրաքննության կարևորությունը և համեմատենք դա ավելի տարածված գրաքննության հետ: |
| **Գործիքներ** | Համացանց, ձայնագրող սարք և ձայնագրությունների մոնտաժման ծրագրաշար: |
| **Դասընթաց** | |
| **Քայլ 1 –** (10 րոպե) | Դասարանային քննարկում. Ի՞նչ է գրաքննությունը: Կարո՞ղ եք մտածել, թե ձեր ամենօրյա կյանքում ինչն է գրաքննության ենթարկվում:<br>Աշակերտների հետ գրեք այն պատճառները, թե ԻՆՉՈ՞Ւ են այդ բաները գրաքննության ենթարկվում: Գրաքննության արժանացած նյութերի պարագայում, արդյոք, նշանակություն ունի՞, թե որ պետությունում եք ապրում:<br>Հանձնարարեք աշակերտներին աչքի անցկացնել Հիմնարար իրավունքների ԵՄ խարտիան և մատնանշել այն հոդվածները, որոնց վրա ազդում է գրաքննությունը: Քննարկեք նրանց պատասխանները դասարանի կամ խմբի հետ: |
| **Քայլ 2 –** (10 րոպե) | Աշակերտների հետ քննարկում սկսեք հետևյալի վերաբերյալ. գրաքննությանն ավելի ծավալուն անդրադարձ կատարելուց հետո, այժմ դիտարկենք ինքնագրաքննությունը: Ի՞նչ տարբերություն կա այս երկու եզրերի միջև:<br>Ի՞նչի պատճառով դուք ձեզ կգրաքննեիք:<br>Ի՞նչի առնչությամբ դուք ձեզ կգրաքննեիք:<br>Նշանակություն ունի՞, թե ինչ լսարան ունեք:<br>Եթե դուք նյութ եք գրում, որը հայտնվելու է համացանցում, ինչու է կարևոր, արդյոք ձեր լսարանն ընկերներն են, թե՝ ոչ, տարբերություն կա՞ այս հարցում, թե՝ ոչ: Տարբերություն կա՞, արդյոք, որ ձեր լսարանում կան անծանոթներ:<br>Տպեք «Մեր երազած համացանցը» պատանիների համար ձեռնարկի 1.3.-րդ բաժինը: Հանձնարարեք աշակերտներին, որ այդ բաժնում նախատեսված վարժությունները լրացնեն կարմիր գրիչով: |

| | |
|---|---|
| **Քայլ 3 –** (10 րոպե) | Հրավիրեք աշակերտներին՝ քննարկելու այն պատասխանների արդյունքները, որ նրանք տվել են դասընկերոջ հետ:<br>Եթե արդյունքները տարբեր են, ապա հանձնարարեք, որպեսզի իրենց թղթի վրակապույտ գրիչով նշեն նոր մտքերը: |
| **Քայլ 4 –** (15 րոպե) | Հանձնարարեք աշակերտներին, որպեսզի զույգ-զույգ օգտվելով ձայնագրիչից (եթե կա, կամ եթե աշակերտներն օգտվում են իրենց սմարթֆոնների ձայնագրիչից), մի կարճ հարցազրույց ձայնագրեն իրենց համար ցանկալի դասընկերոջ հետ, ով կպատմի Թվիթերի սխալ օգտագործման դեպքերի մասին: |
| **Քայլ 5 –** (15 րոպե) | Աշակերտները միմյանց ներկայացնում են իրենց հարցազրույցները: |
| **Լրացուցիչ տարբերակներ.** | Դիտարկեք ձեր օգտագործած որևէ կայքի պայմաններն ու կանոնները:<br>Ո՞րն է պայմանների ու նորմերի գոյության նպատակը:<br>Ի՞նչ է նշանակում մտավոր սեփականություն եզրույթը: |
| **Հղում(ներ)** | Խնդրում ենք հաշվի առնել, որ սույն վարժության համար օգտագործվող համացանցային կիրառական բոլոր ծրագրերն անվճար են և դրանց օգտագործման համար անհրաժեշտ չէ օգտատիրոջ գրանցումը: |

| Գործնական աշխատանք | Իմ (իրական) ինքնությունը |
|---|---|
| Հեղինակ | Մարտինա Կուպիլիկովա, Չեխիայի Հանրապետություն |
| Թեմա | Զևավորեք ձեր ինքնությունը |
| Կարողություններ | Նախաձեռնողականություն և ձեռներեցություն / Հաղորդակցություն մայրենի լեզվով / թվային կարողություններ |
| Մակարդակ | ☐ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| Տարիքային խումբ | 13-15 տարեկան |
| Տևողություն | Երեք դաս, յուրաքանչյուրը՝ 40 րոպե |
| Դասընթացի նպատակը | Ուսուցանել աշակերտներին, թե ինչպես պետք է ձևավորել իրենց ինքնությունը:<br>• Հիշեցրեք աշակերտներին ճշմարիտ ինքնություն ստեղծելու մասին:<br>• Համեմատեք առցանց և իրական ինքնությունները: |
| Ներածական. | Սկսեք հետևյալ կարևոր հարցերից.<br>• Ի՞նչ է ինքնությունը:Արդյոք կարևո՞ր է մեզ համար:<br>• Իրական և առցանց ինքնություն.արդյոք նույն բա՞նն են:<br>• Արդյոք ստո՞ւմ եք առցանց:<br>• Ինչի՞ մասին եք ստում:<br>• Իմ հատկանիշները և իմ անձնական էջը:<br>• Ո՞վ եմ ես առցանց:<br>• Ո՞վ եմ ես համացանցից դուրս:<br>• Ինչպիսի՞ն եմ ցանկանում դառնալ:<br>• Հատկանիշները ճշմարիտ կամ կեղծ |
| Գործիքներ | Համակարգչային լաբորատորիա կամ համակարգիչներ դասարանում: |
| **Դաս 1** | **1 Ի՞նչ է ինքնությունը: Արդյոք կարևո՞ր է մեզ համար:** |
| **Քայլ 1 –** (15 րոպե) | Աշակերտներն աշխատում են փոքր խմբերով, յուրաքանչյուր խումբ ստեղծում է իր սեփական բառային ամպ՝ օգտագործելով www.wordle.net, http://www.tagcrowd.com, http://www.worditout.com/ և http://www.wordfoto.com/:<br>Սկսեք քննարկումներնաշակերտներին հարցնելով, թե ինչ բառեր են ծագում նրանց մտքում, երբ հիշում են «ինքնություն» եզրույթը: Աշակերտների խմբերն ստեղծում են բազմավոր կարճ ելույթ՝ ցույց տալու համար, թե ինչպես են որոշել լուծել խնդիրը: Այդ ելույթների նպատակն է քննարկում սկսել աշակերտների շրջանում՝ տարբեր հնարավորությունների մասին: Կարևոր է, որ աշակերտները կարողանան վերարտադրել իրենց մտքերը դասարանի առջև և քննարկեն իրենց լուծումները: Աշակերտները խոսում են իրենց ամպերում ներառված բառերի մասին: Այնուհետև նրանք քննարկում են, թե ինչու պետք է այլ բառեր ևս ներառել ամպի մեջ, ո՞ր բառերն են պակասում այնտեղ: Արդյոք մեր ինքնությունը կարևո՞ր է մեզ համար: Ինչո՞ւ և ինչո՞ւ ոչ: |

| | |
|---|---|
| **Քայլ 2 –** (15 րոպե) | Աշակերտները բաժանված են երկու խմբի: Երկու խմբերն էլ ունեն նմանատիպ հանձնարարություն: Առաջին խումբը նախապատրաստում է իր գաղափարներն այն մասին, թե ինչու է կարևոր մեր ինքնությունը մեզ համար և թե ինչու այն պետք է լինի կայուն: Երկրորդ խումբը ընդդիմանում է այս տեսակետին: Նրանք ևս դիտարկում են ինքնությունը, սակայն նրանց առանցքային հարցերն են. Ի՞նչ դրական բան կա մեր ինքնությունը փոխելու մեջ: Ե՞րբ է ճիշտ ինքնություն փոխելը: Արդյոք մենք միշտ կարո՞ղ ենք տարբերել իրական ինքնությունը կեղծից, ինչո՞ւ և ե՞րբ: Հետո երկու խմբերը քննարկում են իրենց գաղափարները: |
| **Քայլ 3 –** (10 րոպե) | Աշակերտները կատարում են հանձնարարություն, որը վերաբերում է իրենց ինքնությանը: Ինքնությունը որոշվում է հատկանիշների մի երկար ցանկով: Աշակերտներին առաջարկում եք մատնանշել այն մի քանի տեսակետները, որոնք ձևավորում են իրենց ինքնությունն իրական կյանքում: Նրանք պետք է մտածեն իրենց առանձնահատուկ հատկանիշների մասին, իրենց հետաքրքրությունների, ձգտումների և այլնի մասին: |
| **Դաս 2** | **Իրական ինքնությունը համեմատած առցանց ինքնության հետ: Արդյոք դրանք նույն բա՞նն են:** |
| **Քայլ 1 –** (20 րոպե) | Աշակերտները ձևավորում են իրենց առցանց ինքնությունը, երբ ակտիվ են համացանցում: Նրանց ինքնությունը ձևավորվում է մի շարք տարբեր տեսակետների միջոցով: Հանձնարարեք աշակերտներին բարձրաձայնել այդ տեսակետներից մի քանիսը (լուսանկարներ, մականուն, կարգավիճակ և այլն):<br>Այդուհանդերձ, այն տեղեկությունները, որ մարդիկ կարող են գտնել համացանցում, կարող են սխալ ներկայացնել նրանց: Դա կարող է լինել նրանց անձնական էջի լուսանկարի, կարգավիճակի մասին գրառման, կարծիքի և այլնի պատճառով: Արդյոք դա իրականում տեղի՞ է ունեցել: Արդյոք առաջին տպավորություննե՞րն են ճիշտ, ինչո՞ւ և ինչո՞ւ ոչ: |
| **Քայլ 2 –** (20 րոպե) | Աշակերտները բաժանվում են փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբի տրվում է մի նկար, որում պատկերված է այլ տիպի անձ.<br>1. Կոստյումով տղամարդ<br>2. Զգեստով երիտասարդ աղջիկ՝ մեջքի պայուսակով և ձեռքերում՝ գրքեր:<br>3. Ակնոցով և գլխարկով տղա<br>4. Պարանաձև հյուսերով տղամարդ<br>Աշակերտներին հանձնարարվում է համապատասխանեցնել իրենց տրված նկարը համապատասխան անձնական էջին (այն է հատկանիշներ վերագրել անձին) և հետո գրել իրենց մոտ եղած նկարում անձի կարճ նկարագիրը, որը նրանք ներկայացնում են բանավոր:<br>ա. պատասխանատու<br>բ. խելացի<br>գ. ազատ<br>դ. պարկեշտ<br>ե. սիրալիր<br>զ. համեստ<br>է. բարեխիղճ<br>ը. ինքնավստահ<br>թ. աշխատասեր<br>ժ. լուրջ<br>Քննարկում. Արդյոք առաջին տպավորությունները ճի՞շտ են: Ի՞նչ տպավորություն են հաղորդում այս պատկերները: Արդյոք մանրամասները կարևո՞ր են: |

| Դաս 3 | Երբ հանդիպում են ճշմարիտն ու կեղծը.... |
| --- | --- |
| **Քայլ 1 –** (15 րոպե) | Աշակերտները կարող են աշխատել առանձին-առանձին կամ խմբերով: Ի՞նչ է նշանակում «ինքնության խաբկանք»: Որտե՞ղ է սահմանագիծը ինքնության գիտակից ձևավորման և ինքնության խաբկանքի միջև: Հանձնարարեք աշակերտներին գրի առնել իրենց գաղափարները Google փաստաթղթում: Առանցքային հարցեր. արդյոք ստո՞ւմ եք, երբ համացանցում եք: Ինչի՞ մասին են մարդիկ ստում: http://goo.gl/p9tBGV   |
| **Քայլ 2 –** (15 րոպե) | **Ճշմարտությունը կամ սուտը**<br><br>Աշակերտները կարող են աշխատել առանձին-առանձին, որպեսզի ստեղծեն իրենց սեփական ավատարը հետևյալ կայքում՝http://www.voki.com/create.php, որն ուսումնառության անվճար գործիք է՝ համապատասխանեցված խոսող հերոսներ ստեղծելու համար: Ավելի արդյունավետ է ներգրավել աշակերտներին ինտերակտիվ դասերի՝տեխնոլոգիաները ներկայացնելով զվարճալի եղանակով՝ խորացնելու համար նրանց լեզվական հմտությունները և ապահովելու համար հետաքրքիր տնային ծրագրերով: Աշակերտներն ստեղծում են ավատար իրենց մասին:Նրանք կարող են ստեղծել ավատարներ, որոնք խաբեբաներ են, բայց ասում են ճշմարտությունը կամ անում են երկուսն էլ: Հարց տվեք այլ աշակերտների, թե ո՞ր ավատարն է խաբեբան: |
| **Քայլ 3 –** (10 րոպե) | **Իմ հատկանիշները և իմ անձնական էջը**<br>Աշակերտներն ստեղծում են իրենց սեփական անձնական էջը: Նրանք գրում են հետևյալ հարցերի պատասխանները՝ գունավորելով պատասխանները, որոնք կարող են հայտնել բոլորին, միայն ընկերներին կամ միայն ծնողներին (բոլորին = կանաչ, ընկերներին = դեղին, ծնողներին = կարմիր).<br>ի՞նչ է ձեր անունը,<br>քանի՞ տարեկան եք,<br>որտե՞ղ եք ապրում,<br>որտե՞ղ եք հաճախում դպրոց,<br>ո՞վ է ձեր լավագույն ընկերը,<br>որո՞նք են ձեր սիրած զբաղմունքները,<br>ո՞րն է ձեր հեռախոսահամարը,<br>ո՞րն է ձեր էլ. փոստի հասցեն,<br>ի՞նչ երազանք ունեք:<br>Առանցքային հարց.կարո՞ղ եմ ես ինչ-որ կարևոր բան թաքցնել իմ ինքնության մասին իմ ծնողներից կամ իմ ընկերներից: |
| **Լրացուցիչ տարբերակներ.** | **Խորհրդածության համար**<br>Դիտարկեք առաջադրանքի թերթիկ 4.1.-ը «Ո՞րն է ճշմարտությունը»: |

| Գործնական աշխատանք | Արդյոք մենք ունե՞նք բազմակի ինքնություն |
|---|---|
| **Հեղինակ** | Ադամ Ստեպինսկի, Լեհաստան |
| **Թեմա** | Ձևավորեք ձեր ինքնությունը |
| **Կարողություններ** | Նախաձեռնողականություն և ձեռներեցություն / Հաղորդակցություն մայրենի լեզվով / թվային կարողություններ |
| **Մակարդակ** | ☐ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 13-15 տարեկան |
| **Տևողություն** | 45-60 րոպեանոց երկու դասաժամ |
| **Դասընթացի նպատակը** | • Օգնեք աշակերտներին հասկանալ, որ ինքնությունն ու առցանց ինքնությունը բարդ հարցեր են, որոնք բազում անդրադարձներ ունեն մասնագիտական և անձնական կյանքում:<br>• Զարգացրեք աշակերտների տեսահորիզոնը և անհատների ու ավելի մեծ համայնքների միջև փոխազդեցությունների ընկալումն իրական կյանքում և առցանց:<br>• Զարգացրեք աշակերտների առաջնորդելու կարողությունները (համագործակցային գործողություններ խթանելու և ուղղորդելու ունակությունը):<br>• Զարգացրեք էթիկական վարքագիծ ունենալու, պատասխանատվության, կարեկցանքի և այլոց նկատմամբ հարգանքի զգացումները:<br>• Զարգացրեք աշակերտների ստեղծագործական, քննադատական մտածողության, վերլուծական կարողությունների, անկախ մտածողության և ուսումնառության ճանաչողական հմտությունները: |
| **Ներածական.** | Անհրաժեշտ է ծանոթանալ երկու առցանց գործիքներին, նախքան այս դասերն անցկացնելը (գործիքները՝ ստորև): Անհրաժեշտ է ներկայացնել նաև այս գործիքներն աշակերտներին՝ նախապատրաստելովհարցերի միջոցով երկու մտագրոհ, տալով աշակերտներին այդ հանձնարարությունների հղումները և միասին մտածել որոշ գաղափարներ: Պատասխանի պարտեզի հանձնարարության համար սկսեք հետևյալ հարցից. «Ինչի՞ հետ եք ասոցացնում… Ի՞նչ բառեր են գալիս ձեր միտքը: Իսկ  Tricider-ի համար՝«Որո՞նք են …. Առավելություններն ու թերությունները…»:: |
| **Գործիքներ** | • Պատասխան պարտեզ (http://answergarden.ch/about-AnswerGarden/ և կարճ դասընթաց http://goo.gl/n5wy8f)<br>• Tricider ( Tricider-ի վիդեո ներկայացում՝ http://youtu.be/dvLuwL9Quzw և կարճ դասընթաց http://goo.gl/gy0K0G): |
| **Դասընթաց** | |

| Դաս 1 | Ինքնություն – Ի՞նչ է ինքնությունը: Արդյոք այն կարևո՞ր է մեզ համար: |
|---|---|
| **Քայլ 1 –** (5 րոպե) | Սույն հանձնարարությունն մտագրոհի վարժություն է, որը պետք է կատարվի հետևյալ կայքում՝ http://answergarden.ch. Այս հանձնարարությամբ աշակերտները պատասխանում են հետևյալ հարցին. Ի՞նչ բառեր են ծագում ձեր մտքում, երբ լսում եք «ինքնություն» եզրույթը: Սա կարող է տրվել որպես տնային հանձնարարություն կամ համակարգիչներով, պլանշետներով անցկացնել մտագրոհ 2-3-րոպե տևողությամբ: Որքան ավելի հաճախ է բառը հայտնվում աշակերտների պատասխաններում, այնքան ավելի մեծ է դառնում այն պատասխանների պարտեզում:<br>Թույլ տվեք, որ աշակերտները մեկնաբանեն վերջնական արդյունքները: Հետո ավելացրեք (եթե չլինեն աշակերտների պատասխաններում) ինքնության հետևյալ տեսակները՝ էթնիկ, կրոնական, լեզվական, ազգային, շրջանային, գենդերային, սոցիալական, դասային, սեռական, սերնդային: |
| **Քայլ 2 –** (20 րոպե) | Բաժանեք աշակերտներին չորս խմբի և յուրաքանչյուր խմբին տվեք մի նկար, որը ցույց է տալիս նրանց բնութագիրը (հռոմեացի փիլիսոփա, միջնադարյան փիլիսոփա, ժամանակակից պատանի աֆրիկյան ցեղախմբից, ժամանակակից եվրոպացի/ամերիկացի պատանի):<br><br>Աղբյուրը՝Անհայտ«Relief in the city of Trier»*http://commons.wikimedia.org/wiki/File:Harvester.jpg (հանրային տիրույթ)*<br><br>Աղբյուրը՝Սուրբ Թովմա Աքվինացի, Կարլո Կրիվելի, 15րդ դար*http://commons.wikimedia.org/wiki/File:St-thomas-aquinas.jpg (հանրային տիրույթ)*<br><br>Աղբյուրը՝ «Ֆուլանի կին Նիգերիայից» Սթիվ Էվանս, արտոնագրվածCC BY 2.0 (http://creativecommons.org/licenses/by/2.0/deed.en) *http://commons.wikimedia.org/wiki/File:Fulani_Woman_from_Niger.jpg* |



Աղբյուրը՝«The line for the launch of the iPad 2 at Crabtree Valley Mall in Raleigh, NC«by Mike P., licensed under CC BY 2.0 *(http://creativecommons.org/licenses/by/2.0/deed.en) http://commons.wikimedia.org/wiki/File:IPad_2_launch_queue_Raleigh_North_Carolina.jpg*

Խմբերը պետք է ներկայացնեն իրենց հերոսի ինքնության կարճ նկարագրությունը: Հիշեցրեք նրանց մտածել այն գործոնների մասին, որոնց առնչությամբ մտագրոհ են ունեցել 1-ինհանձնարարությունը կատարելիս:
Հանձնարարեք աշակերտներին պատկերացնել, իբր իրենք նկարում ցուցադրված անձինք են: Հետո խմբերի առաջատարները ներկայացնում են իրենց խմբերի ելույթները (խնդրեք նրանց սկսել հետևյալ արտահայտությամբ՝«Իմ անունը ...»):
Որպես այս առաջադրանքի ամփոփում՝ անցկացրեք կարճ քննարկում ներկայացված հերոսների նմանությունների/տարբերությունների վերաբերյալ՝ կատարելով այլ դիտարկումներ:

**Քայլ 3 –** (10 րոպե)

Հարցրեք աշակերտներին, արդյոք նրանք համաձայն են «Մեր երազած համացանցը» ձեռնարկի 4-րդ գլխի առաջին էջում ներկայացված «ինքնություն» բառի սահմանման հետ:
Արդյոք համապատասխանում է 1-ին և 2-րդ հանձնարարություններից ձևավորված իրենց գաղափարներին: Այնուհետև խնդրեք աշակերտներին հանձնարարությունները կատարել այս էջում: Ասացեք նրանց, որ հատուկ ուշադրություն դարձնեն իրենց առցանց ինքնությունն ստեղծելու վարժության վրա:

Ողջ դասարանով լսեք աշակերտների պատասխանները, թույլ տվեք, որ մեկնաբանեն և ներկայացնեն լրացուցիչ գաղափարներ:

**Քայլ 4 –** (5 րոպե)

Հիշեցրեք աշակերտներին իրենց տնային հանձնարարությունը հետևյալ կայքով՝ www.tricider.com և խնդրեք նրանց պատասխանել հետևյալ հարցին. ինչպե՞ս կարող ենք ձևավորել մեր առցանց ինքնությունը:Ի՞նչ քայլեր/գործողություններ կարող են մեզ օգնել մեր ապագա մասնագիտական և անձնական կյանքում: Ի՞նչը կարող է խանգարել: Տվեք մեկ շաբաթ, որպեսզի գաղափարներ ծնվեն: Հանձնարարեք, որ մեկնաբանեն այլ աշակերտների առաջարկությունները և քվեարկեն, իրենց կարծիքով, ամենալավ գաղափարների օգտին:

**Դաս 2**

**Քայլ 1 –** (5 րոպե)

Tricider-ի տնային հանձնարարության արդյունքները քննարկեք ձեր աշակերտների հետ: Սկզբում փորձեք մեկնաբանել դրական փաստարկները: Այնուհետև անցեք բացասականներին: Ամփոփեք ձեր քննարկումը՝ ասելով, որ այս ամենն ազդում են մեր առցանց հեղինակության վրա, և երբ մենք մի բան ենք անում առցանց (օրինակ՝տեղադրում լուսանկար, մեկնաբանություն գրում որևէ բլոգում, մասնակցում քվեարկությանը), այն մնում է երկար ժամանակ, և համացանցի այլ օգտատերեր դրա հիման վրա իրենց կարծիքն են կազմում մեր մասին::

| | |
|---|---|
| **Քայլ 2 –** (7 րոպե) | Հարցրեք աշակերտներին, արդյոք նրանք համաձայն են Դանիել Սուլովի կարծիքի հետ, որը ներկայացված է«Մեր երազած համացանցը» ձեռնարկի 30-րդ էջում: Հետո դասարանում բարձրաձայն կարդացեք առցանց հեղինակության մասին տեքստը և պարզաբանեք լրացուցիչ մեկնաբանությունները/մտքերը: Ասացեք աշակերտներին, որ հայացք գցեն երեք պատանու լուսանկարներին և հանձնարարեք աշխատել խմբերով, գրի առնել այս պատկերներից ստացած տպավորությունները:<br>Դասարանում համեմատեք աշակերտների գաղափարները: |
| **Քայլ 3 –** (5 րոպե) | Հանձնարարեք աշակերտներին կարդալ «Մեր երազած համացանցը» ձեռնարկի 30-րդ էջի ներքևում ներկայացված երկու կարծիքները և իրենց մտքերն արտահայտելվերջին հարցի վերաբերյալ, այն է. «Արդյոք կան այլ իրավիճակներ, երբ համացանցայինձեր անձնական էջը կարող է դրականորեն օգտագործվել»:<br>Անշուշտ,պատասխաններից մի քանիսը կապված կլինեն նախաձեռնողականության և ձեռներեցության հետ՝ որպես գործոններ, որոնք մեծ դերակատարում ունեն մեր առցանց ինքնության կերտման գործում: |
| **Քայլ 4 –** (20 րոպե) | Ներկայացրեք այս առաջադրանքն՝ ասելով, որ ինքնությունը շատ լայն հասկացություն է: Այն ներառում է ոչ միայն մեծ հարցեր (ինչպիսիք են՝ լեզուն, գենդերը, ազգությունը և այլն), այլև՝ ձեր կարծիքներն ու մոտեցումները: Բաժանեք ձեր աշակերտներին հինգ խմբի և յուրաքանչյուրին տվեք մի թուղթ հետևյալ հարցերով.<br>1. Արդյոք հե՞շտ է մտքերը վերածել գործողությունների: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ոչ:<br>2. Արդյոք համարո՞ւմ եք, որ ժամանակակից պատանիները ստեղծագործ և նորարար են: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ոչ:<br>3. Արդյոք գտնո՞ւմ եք, որ պատանիները պատրաստ են ռիսկի դիմելու իրենց սեփական ծրագրերն իրականացնելիս: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ոչ:<br>4. Արդյոք կարծո՞ւմ եք, որ երիտասարդների համար բարդ է պլանավորել և կառավարել իրենց սեփական ծրագիրը/նախաձեռնությունը: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ոչ:<br>5. Արդյոք կարծո՞ւմ եք, որ մեր սեփական ծրագիրը/նախաձեռնությունն իրագործելու արդյունքում մենք պետք է ուշադրություն դարձնենք բարոյագիտական արժեքներին: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ոչ:<br>Հանձնարարեք աշակերտներին թղթի վրա կազմել երկու սյունակ և վերնագրել՝ԱՅՈ և ՈՉ:<br>Այժմ հանձնարարեք աշակերտներին ներկայացնել իրենց ընտրությունը հիմնավորող գաղափարներ և նշում կկատարել ճիշտ սյունակում: Առաջարկեք աշակերտներին հաշվել, թե քանի հոգի քվեարկեցին ԱՅՈ-ի, իսկ քանիսը՝ ՈՉ-ի օգտին:<br>Հաջորդիվ խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է իր կարծիքը: Ավարտելով հարցրեք մյուս աշակերտներին, թե նրանք կցանկանան ավելացնել նոր փաստարկներ/կետեր և քվեարկել ԱՅՈ/ՈՉ տարբերակների օգտին: Այս կերպ դուք կհավաքեք բոլոր կարծիքները և կստանաք դասարանի ընդհանուր պատկերը: Որպես վերջնական նկատառում՝ասացեք աշակերտներին, որ սա կարող է կոչվել «խմբային ինքնություն»:<br>Եթեժամանակ ունեք,կարող եք բացատրել, թե ինչ է «միախառնված ինքնությունը»: Այս եզրույթը նկարագրում է մի իրավիճակ, երբ մարդիկ, ովքեր իրար գիտեն միայն առցանց, մի օր հանդիպում են համացանցից դուրս: |
| **Քայլ 5 –** (3 րոպե) | Հարցրեք աշակերտներին երկու դասի թեմայի «Արդյոք մենք ունե՞նք բազմակի ինքնություն» հարցը. Փորձեք ստանալ մի քանի ամփոփիչ պատասխաններ: |
| **Հղում(ներ)** | http://answergarden.ch/<br>http://www.tricider.com/ |

# Անձնական կյանքի գաղտնիությունն իմ ամենաթանկ ունեցվածքն է:

## 5.1. Դուք չեք կարող ասել ամեն ինչ ամեն մեկին

| Գործնական աշխատանք | Դուք չեք կարող ասել ամեն ինչ ամեն մեկին |
|---|---|
| **Հեղինակ** | Էվանգելիա Կոնտոպիդի, Հունաստան |
| **Թեմա** | Անձնական կյանքի գաղտնիությունն իմ թանկարժեք ունեցվածքն է: |
| **Կարողություններ** | Հասարակական և քաղաքացիական կարողություններ / հաղորդակցություն մայրենի լեզվով/թվային կարողություններ |
| **Մակարդակ** | ☑ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 13-15 տարեկան |
| **Տևողություն** | 45 րոպե տևողությամբ երկուսից երեք դասաժամ (կախված այն բանից, թե ինչպես են աշակերտները ներկայացնում իրենց արդյունքները): |
| **Դասընթացի նպատակը** | • Կատարելագործել աշակերտների անձնական կյանքի գաղտնիության և տվյալների պաշտպանության ոլորտի իմացությունը:<br>• Օգնել աշակերտներին բացահայտելու ուղիներ, որոնք կպաշտպանեն իրենց անձնական տվյալները և կպահպանեն դրական թվային պատմություն:<br>• Խրախուսել աշակերտներին, որպեսզի համագործակցային հանձնարարության շուրջ աշխատեն միասին:<br>• Օգնել աշակերտներին ստեղծագործաբար ուսումնասիրել ռեսուրսներ, վերլուծել նյութեր և ներկայացնել եզրահանգումներ: |
| **Ներածական.** | Այս դասին աշակերտները *քննության են առնում* հետևյալ եզրույթների իմաստը՝ անձնական կյանքի գաղտնիություն, անձնական տվյալներ, զգայուն անձնական տվյալներ, *դիտում են* տեսանյութ՝ մտածելով համացանցում նրանց տեղադրածի հավանական անդրադարձների և ազդեցության մասին, *ուսումնասիրում* և վերլուծում են նյութեր անձնական կյանքիգաղտնիության ու թվային պատմության վերաբերյալ առաջարկված կայքերից, *մշակում են օգտակար խորհուրդներ* իրենց անձնական կյանքիգաղտնիությունը Լառցանց հեղինակությունը պաշտպանելու համար: |
| **Գործիքներ** | (ա) Համացանցից միացած թվային սարքեր ՝ համակարգիչները, շարժական համակարգիչները, պլանշետները և այլն:<br>(բ) Համացանցային զննիչ<br>(գ) Որոնման համակարգ<br>(դ) Ըստ ցանկության՝ Web 2.0 կիրառական ծրագրեր (Wordle, Scratch, Tricider, Voki, Google Forms կամ SurveyMonkey), ներկայացման ծրագրաշար (Prezi, Microsoft Power- Point և Google Slides)<br>(Google Forms-ի, Google Slides-ի և Prezi-ի համար անհրաժեշտ է գրանցվել): |
| **Դասընթաց** | |
| **Քայլ 1 –** (10 րոպե) | **Հետազոտեք – քննարկեք**<br>Քննարկեք հիմնական եզրույթները՝ անձնական կյանքի գաղտնիություն, անհատական տվյալներ և զգայուն անհատական տվյալներ:<br>Այս բառերը գրեք գրատախտակին:<br>Հանձնարարեք աշակերտներին մտածել այս բառերի սահմանումների/օրինակների շուրջ: Նախապես ստուգեք, արդյոք այս առանցքային եզրույթներին վերաբերող տեղեկություններն առկա են Տվյալների պաշտպանության պետական մարմնի (ՏՊՄ) համացանցային կայքում: Եթե այո, ապա հանձնարարեք աշակերտներին որոնում իրականացնել համապատասխան կայքում (http://goo.gl/eblbFv): |

| | |
|---|---|
| | Մտագրոհ կազմակերպեք վերոհիշյալ հիմնական եզրույթներին վերաբերող բառերի մասին.*անհատական տվյալներ*՝տեղեկություններ, որոնք թույլ են տալիս նույնականացնել անհատներին, օրինակ՝ անունը, հասցեն, էլ. փոստը, հեռախոսահամարը (բջջային կամ քաղաքային), վարկային քարտի համարը, ծննդյան ամսաթիվը, պատկերը կամ ձայնը և այլն.*զգայուն անձնական տվյալներ*՝ քաղաքական հայացքներ, կրոնական համոզմունքներ, ֆիզիկական կամ հոգեկան առողջություն և այլն.*անձնական կյանքի գաղտնիություն*՝ անձնական հարցերն ու հարաբերությունները գաղտնի պահելու մարդու իրավունքը: |
| **Քայլ 2 –** (10 րոպե) | **Դիտեք- Լսեք - Քննարկեք**<br>Առաջարկեք աշակերտներին մտածել այն մասին, թե ինչ կարող է տեղի ունենալ, եթե որևէ մեկը շատ անձնական տվյալներ կիսի ողջ աշխարհի հետ: Օգտվեք հետևյալ տեսանյութից՝ http://youtu.be/T6ulH2bWCnY թեմայի վերաբերյալ հետաքրքրություն առաջացնելու և մտավոր գործընթացը խրախուսելու համար: Ավելին, դուք կարող եք աշակերտներին ներկայացնել երկու փաստ.<br>(ա) Անձանց թվային հետքերը (նկարները, առցանց հրապարակած նյութերը և այլն) լուրջ դեր են խաղում կազմակերպությունների՝ աշխատանքի ընդունման ընթացակարգերում.<br>(բ) Կիբեռհետապնդումներ ավելի հաճախ տեղի են ունենում այն կայքերում, որտեղ հաճախում են մեծ թվով պատանիներ: Անհատական տվյալների պաշտպանությունն օգնում է կանխարգելել կիբեռհետապնդումները: Ավելի մանրամասն տես՝ http://www.e-abc.eu/en/about-bullying/.<br>Պարզել այն պատճառները, թե ինչու պետք է աշակերտները դիտավորյալ սահմանափակեն իրենց անձնական տեղեկությունների մատչելիությունը: |
| **Քայլ 3 –** (25 րոպե) | **Համագործակցել - ուսումնասիրել**<br>Այս կետում աշակերտներն արդեն իսկ պետք է գիտակցեն, որ անձնական կյանքի գաղտնիությունը շատ կարևոր է և այդ պատճառով այս դասը խիստ կարևոր է նրանց համար.<br>(ա) Նրանք պետք է պատասխանատու կերպով օգտվեն սոցիալական մեդիաներից,<br>(բ) Նրանք պետք է պաշտպանեն իրենց առցանց հեղինակությունը:<br>Ժամանակն է, որ աշակերտները կենտրոնանան այս երկու նպատակներին հասնելու հատուկ եղանակների ուսումնասիրության վրա:<br>The EU NET ADB ծրագիրը՝ http://goo.gl/TyAJh2 տեղեկացնում է, որ 14-17 տարեկան դեռահասների 92 տոկոսը, ովքեր մասնակցել են ուսումնասիրությանը ( 7 եվրոպական երկրներում), առնվազն մեկ սոցիալական ցանցի կայքում են գրանցված:<br>Յանձնարարեք աշակերտներին աշխատել երկու կամ երեք հոգանոց փոքր խմբերով, օգտվել համացանցից,ուսումնասիրել անձնական կյանքի գաղտնիության քաղաքականությունը և կարգավորումները այնպիսի սոցիալական ցանցերի կայքերում, ինչպիսիք են Ֆեյսբուքը, Google+-ը, YouTube-ը կամ Instagram-ը: Աշակերտները պետք է փնտրեն հետևյալ հարցերի պատասխանները.<br>• Ի՞նչ հատկանիշներ/հուշումներ է տրամադրում ծառայությունը օգնելու համար, որպեսզի նրանք պաշտպանեն իրենց անձնական կյանքի գաղտնիությունը:<br>• Ինչպե՞ս եմ ես թարմացնում իմ անձնական էջը/գաղտնիության կարգավորումները:<br>• Ինչպե՞ս եմ հեռացնում առանց իմ համաձայնության տեղադրված նյութը:<br>• Ինչպե՞ս եմ ընտրում, թե ովքեր կարող են տեսնել իմ տեղադրած նկարները և այլ բաները:<br>• Ինչպե՞ս եմ ջնջում տեղադրածս: |

| | |
|---|---|
| | Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք ուսումնասիրել ռեսուրսների ստորև ներկայացվող զույգերը: Այլընտրանքային կարգով խմբերն իրենք են ընտրություն կատարում՝ ըստ իրենց հետաքրքրությունների և սոցիալական ցանցի գործունեության.<br>• Facebook-ի անձնական կյանքի գաղտնիության հիմունքները https://www.facebook.com/about/basics/<br>• Facebook-ի աջակցության կենտրոն–Անձնական կյանքի գաղտնիություն https://www.facebook.com/help<br>• Google+ Անվտանգության կենտրոն–Թվային հեղինակության կառավարում պատանիների համար https://support.google.com/plus/topic/2404767<br>• Google+ Պատանիների անվտանգության ուղեցույց–ընդհանուր հուշումներ http://goo.gl/6Ml93L<br>• Google+ Անվտանգության կենտրոն–Անձնական կյանքի գաղտնիության ռեսուրսներ http://goo.gl/7WzbQG<br>• YouTube Քաղաքականության կենտրոն–Պաշտպանելով ձեր անձնական կյանքի գաղտնիությունը http://goo.gl/6ajG4U<br>• YouTube անվտանգության կենտրոն–պատանիների անվտանգություն http://goo.gl/H2oxRG<br>• Instagram աջակցության կենտրոն https://help.instagram.com/<br>• Instagram անձնական կյանքի գաղտնիության և անվտանգության հուշումներ http://goo.gl/iBHDeZ<br>• Առցանց հեղինակության գործողությունների ցանկ http://goo.gl/hvnfZM<br>Առաջարկվող կայքերում նյութերն ուսումնասիրելուց հետո թիմերից յուրաքանչյուրը կազմում է զեկույց՝ ներառելով անձնական կյանքի գաղտնիությունը պաշտպանելու կամ առցանց հեղինակությունը կառավարելու հինգ կարևորագույն հուշումներ: |
| **Քայլ 4 –** (45 րոպե) | **Փորձեք – Ստեղծեք - Ներկայացրեք**<br>Յուրաքանչյուր խումբ բարձրաձայն կարդում է իր զեկույցը: Դասարանը պետք է համաձայնության գա հինգ կետի շուրջ, որ նրանք կփոխեին զեկույցը կատարելագործելու նպատակով, ապա հայտարարություն է փակցվում դասարանի պատին կամ տեղադրվում է դպրոցական կայքում: Կարող եք նաև քննարկել այն այլընտրանքային եղանակները, որոնց միջոցով խմբերը կարող են ներկայացնել իրենց արդյունքները և եզրակացությունները: Այս այլընտրանքները թույլ կտան աշակերտներին օգտագործելու իրենց ստեղծագործական ներուժը և վարժելու իրենց թվային հմտությունները:<br>(ա) Օգտվեք Tricider սոցիալական քվեարկության գործիքից և ստեղծեք «tricision» հետևյալ թեմայով. «Տվյալների պաշտպանություն, անձնական կյանքի գաղտնիություն, առցանց հեղինակություն: Կիսեք ձեր մտքերն ու գաղափարները»: Նախապատրաստեք «tricision»-ը (դրա ստեղծման համար պահանջվում է մի քանի րոպե), հղումը տվեք աշակերտներին և հանձնարարեք նրանց գրել իրենց հիմնական ուղերձը թեմայի վերաբերյալ: Այնուհետև աշակերտները քվեարկում են այն երկու գաղափարների օգտին, որոնք նրանց ամենաշատն են դուր եկել (չի թույլատրվում քվեարկել սեփական գաղափարների օգտին): Այն աշակերտը, ում գաղափարն ստանում է ամենաշատ ձայները, հաղթում է: (Նմուշ «tricision»կարելի է գտնել http://goo.gl/XmzeEF.)<br>(բ) Խմբերն ստեղծում են Vokis (խոսացող ավատարներ) և ձայնագրում իրենց օգտակար խորհուրդները: Vokis-ը ներկայացվում է դասարանում և կարող է տեղադրվել նաև դպրոցական կայքում, ապագայում դրան հղում կատարելու համար:<br>(գ) Խմբերն ստեղծում են ցուցապաստառներ՝ օգտվելով այն կիրառական ծրագրից կամ ծրագրաշարից, որին նրանք ծանոթ են: Դրա մի պարզ մոդել կարելի է գտնել հետևյալ հղումով՝ http://goo.gl/pg7DQM (մոդելային ցուցապաստառ ստեղծվել է MS PowerPoint- ի միջոցով: Page Setup Group-ում սլայդի չափն ընտրվել է «A4 paper» և «Portrait» կողմնորոշմամբ: Ի վերջո, աշխատանքը պահպանվել է PDF file- տեսքով): |

| | |
|---|---|
| | (դ) Խմբերն ստեղծում են բառային ամպեր այն տեքստից, որը վերաբերում է նրանց բացահայտումներին և արդյունքներին՝ օգտվելով Web 2.0 կիրառական ծրագրից, ինչպիսիք են Wordle-ը կամ Tagxedo-ն: Պարզ նմուշ բառային ամպի կարելի է գտնելհետևյալ կայքում՝ http://goo.gl/wXJ3nq: Այն ստեղծվել է Wordle-ով՝ օգտվելով հետևյալ տեքստից՝ http://goo.gl/ofc3Jw.<br>(ե) Խմբերը ձևավորում են հարցեր՝ հիմնվելով իրենց բացահայտումների վրա և ստեղծում սեփական «անձնական կյանքի գաղտնիության հարցաշարը» դասընկերների համար: Հարցերը չպետք է լինեն շատ հեշտ կամ շատ բարդ: Խմբերը փոխանակում են հարցարանների թերթիկները և լրացնում թեսթը: Այլընտրանքային կարգով խմբերը կարող են օգտագործել առցանց հարցարան ստեղծող գործիքներ, ինչպիսիք են Google Forms-ը կամ SurveyMonkey-ն: Նաև Scratch-ն է պարունակում ռեսուրսներ հարց ու պատասխանի համակարգի համար: Scratch հարցարանի նմուշ՝ անձնական կյանքի գաղտնիության թեմայով, կարելի է գտնել հետևյալ հղումով՝ http://goo.gl/EGXdyU.<br>Scratch-ի այս վերջին վարժությունը թույլ է տալիս աշակերտներին խորացնելու անձնական կյանքի գաղտնիության թեմայի վերաբերյալ իրենց պատկերացումները՝ իրար հետ Scratch-ի հարցարանները լուծելով: Այդուհանդերձ, գուցե ավելի շատ ժամանակ պահանջվի դրանք իրագործելու համար, այն նախատեսված է աշակերտների համար, ովքեր Scratch-ով ծրագրավորելուորոշակի փորձ ունեն:<br>(Scratch-ը ծրագրավորման լեզու է, որը շատ հեշտ է սովորել և օգտագործել): Հիմնված լինելով Genious ծրագրի վրա (http://www.ingenious-science.eu/web/guest/home)՝ Scratch-ի օգտագործումը դասընթացին կարող է օգնել աշակերտներին զարգացնելու իրենց ստեղծագործական ներուժը, համակարգչային մտածողությունը և ակտիվորեն ներգրավվել դասարանում): |
| **Լրացուցիչ տարբերակներ.** | **Դուրս լողացող պատուհաններ - Գործիքներ - Խորհուրդներ**<br>Դպրոցի կամ տան համար աշակերտներին տվեք առցանց հեղինակության անհրաժեշտ նախապայմանների ցանկ՝ http://goo.gl/hvnfZM և հանձնարարեք նրանց անցնել այն հինգ քայլերով, որոնք կօգնեն կառավարել և պահպանել դրական թվային հետքեր:<br><br>Քննարկեք դասարանում և կազմակերպեք Տվյալների պաշտպանության օր http://goo.gl/3322q4  (հունվարի 28-ը),  դպրոցի և տեղական համայնքի համար աշակերտների հետ կազմակերպեք իրազեկման միջոցառումներ: |
| **Հղում(ներ)** | • Տարածում.Մտածեք նախքան տեղադրելը, տեսանյութ՝ http://goo.gl/FT4OYK<br>• Թվային հետք - տեսանյութ՝ http://goo.gl/QkBR4j<br>• Տվյալների պաշտպանության Իռլանդիայի ռեսուրսն անձնական կյանքի գաղտնիության վերաբերյալ՝ http://goo.gl/uv1vUF<br>• Մտածեք նախքան տարածելը ուղեցույցը (ցուցապաստառի ձևը) http://goo.gl/PcH0yd<br>• «Երիտասարդ քաղաքացիներ» միկրոկայքը, որը վարում է Տվյալների պաշտպանության հունական կայքում (միայն հույն ուսուցիչների համար) http://goo.gl/hRQx<br>• Ճիշտ քաղաքականություն՝ Ֆեյսբուքով անձնական տվյալների վարման համար http://goo.gl/MDmnJr տեսանյութ saferinternet.gr կայքում (միայն հույն ուսուցիչների համար): |

| Գործնական աշխատանք | Անձնական կյանք և տեսնել (PrivaSee...) |
|---|---|
| **Հեղինակ** | Միգելա Ֆեռնանդես, Պորտուգալիա |
| **Թեմա** | Անձնական կյանքի գաղտիությունն իմ ամենաթանկ ունեցվածքն է: |
| **Կարողություններ** | Հասարակական և քաղաքացիական կարողություններ / հաղորդակցություն մայրենի լեզվով/ թվային կարողություններ |
| **Մակարդակ** | ☑ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 13-15 տարեկան |
| **Տևողություն** | 40 րոպե |
| **Դասընթացի նպատակը** | Քննարկել անձնական կյանքի գաղտնիության թեման<br>• Իրազեկել աշակերտներին իրենց կամ իրենց ընկերների վերաբերյալ առցանց տեղեկություններ տեղադրելու հարցերի մասին:<br>• Բացահայտել այն տեղեկությունները, որոնք օգնում են նվազեցնելու առցանց ռիսկերը: |
| **Ներածական.** | Այս վարժության մեջ աշակերտները դիտում են տեսանյութ, որը կօգնի նրանց ավելի լավ հասկանալ անձնական կյանքի գաղտնիություն հասկացությունը և իրենց ու այլոց վերաբերյալ զգայուն տեղեկությունները պաշտպանելու կարևորությունը: Համոզվեք, որ աշակերտները հասկացել են տեսանյութը, տվեք հարցեր և քննարկեք, որպեսզի աշակերտները հասկանան կարևոր փաստերը: Այս վարժության մեջ աշակերտներն աշխատում են երեք-չորս հոգանոց թիմերով՝ անձնական կյանքի գաղտնիության վերաբերյալ ելույթներ կազմելու համար:: |
| **Գործիքներ** | (Ա) YouTube տեսանյութ<br>(Բ) Google Drive ելույթ<br>(Գ) Դասախոսական ելույթը ներկայացնելու նպատակով:<br>. |
| **Դասընթաց** | |
| **Քայլ 1 –** (3 րոպե) | Դիտեք տեսանյութը՝ http://youtu.be/7_VsxBLce8g |
| **Քայլ 2 –** (5 րոպե) | Համոզվեք, որ աշակերտները հասկացել են տեսանյութը, եթե չեն հասկացել, ապա առաջարկեք աշակերտներին հայտնել իրենց կասկածները և պարզաբանեք դրանք:<br>Քննարկում սկսելը խրախուսելու նպատակով աշակերտներին տվեք մի քանի բաց հարց, օրինակ՝<br>• արդյոք հասկացե՞լ եք տեսանյութը:<br>• Երբևէ մտածե՞լ եք անձնական կյանքի գաղտնիության մասին, ձեր թվային եռքերի մասին:<br>• Քանի՞ կայքում և սոցիալական ցանցերում եք ստեղծել հաշվեներ:<br>• Երբևէ կարդացե՞լ եք անձնական կյանքի գաղտնիության մասին տեղեկությունները, երբ գրանցվել եք կայքում/սոցիալական ցանցում: |

| | |
|---|---|
| **Քայլ 3 –** (5 րոպե) | Ներկայացնել թեմաները, որոնց վրա պետք է աշխատեն աշակերտները,(Բ) թեմաները կարող են ներառել հետևյալը.<br>• Ի՞նչ է անձնական կյանքի գաղտնիությունը ձեզ համար:<br>• Ի՞նչ է մասնավոր բնույթի տեղեկություն:<br>• Որտե՞ղ եմ ես առցանց:<br>Կազմեք աշակերտների երեք-չորս հոգանոց խմբեր |
| **Քայլ 4 –** (5 րոպե) | Թիմերը քննարկում են թեմաները հինգ րոպեում՝ նշելով գաղափարներ ներկայացման համար:<br>Մի աշակերտ պատասխանատու կլինի ելույթ (Բ)-ն արտատպելու և այն համագործակցային գործընթացում ուսուցչի ու համադասարանցիների հետ կիսելու համար:<br>Եթե աշակերտները կասկածներ ունեն  արտատպելու և ելույթը տարածելու վերաբերյալ, կարող են օգտվել Գ դասախոսականից: |
| **Քայլ 5 –** (22 րոպե) | Թիմային աշխատանքի ներկայացում (5 րոպե յուրաքանչյուր թիմի համար):<br>Թիմերից յուրաքանչյուրն իր աշխատանքը ներկայացնում է դասարանին:<br>Կազմակերպեք դասարանային քննարկում այն մասին, թե ինչը կարող է և չի կարող լինել «անձնական կյանքի գաղտնիք»՝ աշակերտներին իրազեկելով, որ նրանք ստեղծում են իրենց առցանց հեղինակությունը, երբ համացանցում են և պետք է զգույշ լինեն տեղեկություններ տարածելիս (կոնտակտային տվյալներ, լուսանկարներ, տեսանյութեր և այլն): Նրանք պետք է հարգեն այլոց անձնական կյանքի գաղտնիությունը՝ չհրապարակելով մասնավոր բնույթի տեղեկություններ կամ լուսանկարներ առանց թույլտվությանև առցանց գործեն այնպես, ինչպես կգործեին իրական կյանքում: Նրանք նաև պետք է տեղեկացված լինեն հեղինակային իրավունքին վերաբերող խնդիրների մասին:<br>Նրանք պետք է ուշադիր լինեն իրենց թվային հետքերի հարցում, և իրազեկ, որ շատ կազմակերպություններ, նախքան իրենց հավանական աշխատողներին աշխատանք առաջարկելը, «հետևում են» նրանց առցանց գործունեությանը:<br>Նրանք պետք է պատրաստ լինեն չտարածելու ամեն ինչ, երբ առցանց են և իրենց մասին որոշակի տեղեկություններ գաղտնիպահեն առցանց թվային աշխարհում: |
| **Լրացուցիչ տարբերակներ.** | Պարզել,  թե  քանի կայքերում կամ սոցիալական ցանցերում են գրանցված աշակերտները (միջին թիվը):<br>Հանձնարարել նրանց մտածել, թե ինչ տիպի տեղեկություններ կարող են անվտանգ կերպով տարածել աշխարհով մեկ:<br>Google/Facebookի հաշիվ բացելու պատրվակով հանձնարարել աշակերտներին կարդալ Անձնական կյանքի գաղտնիության համաձայնագիրը: Զրուցել աշակերտների հետ թխուցիկների (cookies) մասին (իմաստը): Կարևոր է աշակերտներին զգուշացնել առցանց աշխարհի խուլթերի մասին և օգնել նրանց ստեղծելու«ճիշտ» անձնական էջ: Նրանք իրապես պետք է մտորեն, նախքան ինչ-որ բան տեղադրելը: |
| **Հղում(ներ)** | YouTube տեսանյութ՝ http://youtu.be/7_VsxBLce8g<br>Google Drive-ի ներկայացում՝ http://goo.gl/dI4juf<br>Դասախոսական՝ Google Drive ներկայացումը պատճենել և տարածել՝ http://goo.gl/KGa8Th |

# Անձնական կյանքի գաղտնիությունն իմ ամենաթանկ ունեցվածքն է:

## 5.3.Ես դիտում եմ ձեզ...

| Գործնական աշխատանք | Ես դիտում եմ ձեզ... |
|---|---|
| **Հեղինակ** | Միգելա Ֆեռնանդես, Պորտուգալիա |
| **Թեմա** | Անձնական կյանքի գաղտնիությունն իմ ամենաթանկ ունեցվածքն է: |
| **Կարողություններ** | Հասարակական և քաղաքացիական կարողություններ / հաղորդակցություն մայրենի լեզվով / թվային կարողություններ |
| **Մակարդակ** | ☐ Ցածր ☑ Միջին ☑ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 13-15 տարեկան |
| **Տևողություն** | 40 րոպե կամ ավելի (կախված նրանից, թե որքան ժամանակ է ուսուցիչը ցանկանում ծախսել երաժշտության վերլուծության համար): |
| **Դասընթացի նպատակը** | • Քննարկել անձնական կյանքի գաղտնիություն հասկացությունը<br>• Քննության առնել մի քանի կայքի անձնական կյանքի գաղտնիության քաղաքականությունը:<br>• Սովորել համացանցում անձնական կյանքի գաղտնիության որոշ հասկացություններ:<br>• Կիրառել անձնական կյանքի գաղտնիության նոր կարգավորումները: |
| **Ներածական.** | Այս վարժությունն աշակերտներն սկսում են լսելով մի երգ և ընթերցելով այդ երգի բառերը: Նրանք այնուհետև մտորում են այդ բառերի նշանակության մասին և ներկայացնում օրինակներ, որտեղ բառերը նման են այդ երգի բառերին: Զույգերով աշակերտները լրացնում են առաջադրանքների թերթիկը և պարզում, թե ինչպես կարող է այս երգը համեմատվել մարդկանց առցանց վարքագծի հետ: Այնուհետև որոշ աշակերտների հանձնարարվում է կարդալ իրենց պատասխանները և ստուգել, թե արդյոք հասկացել են իմաստը: Անձնական կյանքի գաղտնիությանն առնչվող նոր հասկացություններ ներկայացնելու նպատակով աշակերտները պատասխանում են հարցարանին, որը նրանց նախազգուշացնում է խնդրահարույց իրավիճակների մասին՝ թույլ չտալով, որպեսզի նրանք առցանց սխալներթույլ տան, նաև ներկայացնելով համացանցի կիրառությանն առնչվող նոր հասկացություններ:<br>Այս հասկացությունները կարևոր են հասկանալու համար, թե ինչպես է համացանցն աշխատում, ինչպես պետք է մարդիկ ավելի անվտանգ գործեն, ինչպես օգնել այլոց և սովորել զննարկիչին վերաբերող որոշ սահմանումներ: |
| **Գործիքներ** | Մայքլ Ջեքսոնի երաժշտությունը.անձնական կյանքի գաղտնիություն. տպած թուղթ՝ երգի բառերով. առաջադրանքների թերթիկ 5.1 – Մայքլ Ջեքսոն«Անձնական կյանքի գաղտնիություն»:<br>Հարցարանիհետևյալ կայքից՝ http://webwewant.eu/ |
| **Դասընթաց** | |
| **Քայլ 1 –** (5 րոպե) | Դասարանում լսեք երգը, մինչ աշակերտները կկարդան ուսուցչի բաժանած բառերը: |
| **Քայլ 2 –** (5 րոպե) | Երգը լսելուց հետո երկու երեք աշակերտնի խնդրեք բարձրաձայն կարդալ բառերը, որպեսզի բոլոր աշակերտները դարձյալ լսեն դրանք:<br>Նախաձեռնեք կարճ ներդասարանային քննարկում, թե ինչի՞ մասին է երաժշտությունը: Կարող են նրանք հիշել իրական կյանքից նման իրավիճակի օրինակներ: |

| | |
|---|---|
| **Քայլ 3 –** (10 րոպե) | Քննարկում ծավալեք, որպեսզի աշակերտները մտորեն առցանց այս իրավիճակի շուրջ: Կա՞ հնարավորություն, որ նման իրավիճակ կարող էր ծագել առցանց: Զույգերով աշակերտները լրացնում են 5.1. առաջադրանքների թերթիկն՝ ավելի խորը մտորելու համար այս հարցի շուրջ: |
| **Քայլ 4 –** (10 րոպե) | Հանձնարարեք մի քանի աշակերտի ընթերցել իրենց պատասխանները և համեմատել դրանք՝ տեսնելու, արդյոք նրանք իրապես հասկացե՞լ են իմաստը, արդյոք դասարանը համամիտ է իր դասընկերների կարծիքներին:<br>Հրավիրեք աշակերտների ուշադրությունը առցանց խնդիրներից խուսափելու հնարավոր ուղիներին՝ ավելացնելով նրանց իրազեկությունն անձնական կյանքի գաղտնիության ավելի խիստ կարգավորումների մասին: Հիշեցրեք աշակերտներին, որ այն, ինչ տեղադրվում, տարածվում կամ ցուցադրվում է համացանցում, մնում է այնտեղ: |
| **Քայլ 5** – (5 րոպե) | Վերջնական քայլով աշակերտներին հանձնարարում եք լրացնել հարցարանը (տեղադրված webwewant.eu-ում, ինչը միաժամանակ կուսուցանի աշակերտներին նոր հասկացություններ, անձնական կյանքի գաղտնիության հասկացությունները և կօգնի նրանց առցանց ավելի զգուշավոր վարքագիծ դրսևորել: |
| **Օժանդակ տարբերակներ.** | Հանձնարարեք աշակերտներին պարբերաբար վերլուծել իրենց այցելած կայքի անձնական կյանքի գաղտնիության քաղաքականությունը: Ցուցադրեք աշակերտներին, թե որտեղ փոփոխել թխոցիկների թույլտվությունները:<br>Բացատրեք որոշ հասկացություններ, ինչպիսիք են HTTP/HTTPS-ն, IP հասցեն, Pixel դրոշմը և զգայուն տեղեկությունները: |
| **Հղում(ներ)** | Որոնեք Մայքլ Ջեքսոնի «Փրայվիսի» երգի օրինական տարբերակը:<br>• Երգի բառերը պարունակող տպած թուղթ http://goo.gl/YJJM2S<br>• Առաջադրանքի թերթիկ 5.1 Մայքլ Ջեքսոն «Փրայվիսի»:<br>• Հարցարանը կարելի է գտնել webwewant.eu կայքում: |

| Գործնական աշխատանք | Պաշտպանելով այն, ինչ մերն է |
|---|---|
| **Հեղինակ** | Դրու Բադի, Միացյալ Թագավորություն |
| **Թեմա** | Արվեստագետը ձեր մեջ |
| **Կարողություններ** | Սովորում ենք սովորել / սոցիալական և քաղաքացիական կարողություններ / հաղորդակցություն մայրենի լեզվով / թվային կարողություններ/քննադատական մտածողություն |
| **Մակարդակ** | ☐ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 14-15 տարեկան |
| **Տևողություն** | 2 դաս, յուրաքանչյուրը՝ 45 - 60 րոպե |
| **Դասընթացի նպատակը** | • Քննության առնել մտավոր սեփականությանը (IP) վերաբերող խնդիրները,<br>• Ստորել և քննարկում ծավալել ՄՍ-ին և հեղինակային իրավունքին վերաբերող ներկայիս և ծագող խնդիրները տարբեր դիտանկյուններից:<br>• Հետազոտել Creative Commons-ի տարբերակները և կիրառությունները: |
| **Ներածական.** | Երբ ստեղծում ենք բովանդակություն, ապա դառնում ենք այդ բովանդակության սեփականատերը: Ի՞նչ է իրականում սա նշանակում: Հե՞շտ է, արդյոք, մեզ համար տալ սա երրորդ կողմին, երբ օգտագործում ենք նրանց կայքը: |
| **Գործիքներ** | Համացանց, «Մեր երազած համացանցը» ձեռնարկը պատանիների համար, կապույտ և կարմիր գրիչներ՝«Մեր երազած համացանց»-ի վարժությունները կատարելու համար: |
| | Ընթերցեք աշակերտների ցուցումների էջն արվեստագետ լինելու մասին: Հանձնարարեք նրանց գրել, թե ինչպիսի արվեստագետ նրանք կուզենային լինել, քննարկել նրանց ընտրությունն իրենց հարևանի հետ: Փնտրեք նման հետաքրքրություններ ունեցող այլ արվեստագետների: |
| **Դասընթաց** | |
| **Քայլ 1 –** (10 րոպե) | Ի՞նչ է նշանակում մտավոր սեփականություն եզրույթը:<br>Կազմել աշակերտների փոքր խմբեր (2-4 հոգանոց) և հանձնարարել նրանց ուսումնասիրել «Մեր երազած համացանցը» հրապարակման 1.2-րդ բաժինը: Այնուհետև հանձնարարեք նրանց այցելել իրենց նախընտրելի կայքերից մեկը և քննարկել հետևյալ հարցերի պատասխանները.<br>Որտե՞ղ կարելի է գտնել կայքի պայմանների ու նորմերի հայտարարագիրը: Ինչո՞ւ եք կարծում, որ դա հենց այդ փաստաթուղթն է: Արդյոք պայմանների ու նորմերի տեղակայումը կոնկրետ այդ տեղում ունի՞ պատճառ: Ի՞նչ պատճառով են մարդիկ համաձայնում հրաժարվել իրենց մտավոր սեփականության իրավունքից:: |
| **Քայլ 2 –** (20 րոպե) | Այժմ հանձնարարեք, որպեսզի աշակերտները ինքնուրույն կարդան հետևյալ հոդվածը՝<br>http://goo.gl/Ut6kQp (Huffington Post Tech)<br>Վարեք ներդասարանային կամ փոքր խմբով քննարկում.հանձնարարեք աշակերտներին իրենց բառերով նկարագրել, թե ինչի՞ մասին է պատմությունը և նշել, թե ի՞նչ պատճառով են փոփոխություններ կատարվել պայմաններում և նորմերում: Ինչո՞վ էր այս արդյունքը կարևոր: Հանձնարարեք նրանց ինքնուրույն կարդալ երկրորդ հոդվածը, որի հեղինակը Հիդեն Էլիոգն էր. http://goo.gl/LGk8jU |

| | |
|---|---|
| | **Քննարկում.** Ինչո՞ւ եք կարծում, որ Թվիթերի նման գործիքները շատ օգտակար են Հիդեմ Էլոիզի նման գործերում: Հանձնարարեք աշակերտներին պատկերացնել, որ իրենք Հիդեն Էլոիզն են: Նրանց խնդիրն է գրել շնորհակալական նամակ իրենց աջակիցներին՝ թեմայի վերաբերյալ իրազեկության բարձրացման արշավ իրականացնելու համար: |
| **Քայլ 3 –** (10 րոպե) | Ներդասարանային կամ խմբային քննարկում: Ի՞նչ է հեղինակային իրավունքը, ի՞նչ առնչություն ունի այն մտավոր սեփականության հետ: Հանձնարարեք աշակերտներին բացել Գլուխ 6-ը՝ *Արվեստագետը քո մեջ* և կարդալ Creative Commons-ի մասին տեղեկությունները: Creative Commons-ի արտոնագրերը նպատակ ունեն օժանդակելու այնպիսի բովանդակության թողարկմանը, որոնց համար մենք չենք ցանկանում հեղինակային իրավունք պահպանել: Ինչո՞ւ են մարդիկ ընտրում Creative Commons-ը: Որո՞նք են առավելությունները և թերությունները: |
| **Քայլ 4 –** (10 րոպե) | hանձնարարեք աշակերտներին խմբերով համեմատել հետևյալի կիրառությունը՝ որպես պատկերներ գտնելու մեթոդ, որ նրանք ցանկանում են օգտագործել իրենց փաստաթղթերում.<br>Google Images - images.google.com<br>Flickr.com - www.flickr.com<br>Taggalaxy.com - www.taggalaxy.com<br>Compfight.com - www.compfight.com<br>Բացատրեք, թե դրանցից որոնք են լավագույնը Creative Commons-ի արտոնագիր ունեցող պատկերներ գտնելու տեսանկյունից:<br>Քննարկել Creative Commons-ի արտոնագիր ունեցող պատկերների օգտագործման հետևանքները: |
| **Քայլ 5 -** (10 րոպե) | Հանձնարարեք յուրաքանչյուր խմբին որոշել, թե Creative Commons- ի վեց արտոնագրերից որը նրանք կկիրառեին իրենց ստեղծած բովանդակության համար: Ինչո՞ւ: Գտեք խումբ, որի պատասխանը տարբեր է և բաց քննարկման միջոցով, փաստաթղթավորեք տարբեր ընտրության հիմնավորումները: |
| **Լրացուցիչ տարբերակներ.** | Կարդացեք Ալբերտո Կորդայի Չե Գևարայի հայտնի պատկերի մասին և քննարկեք, թե ՄՍ-ի ինչ հարցեր են բարձրանում այն առնչությամբ, թե ինչպես է այդ պատկերն օգտագործվում ողջ աշխարհում:<br>http://en.wikipedia.org/wiki/Guerrillero_Heroico (Wikipedia)<br>Ինչպե՞ս կարող էր Creative Commons արտոնագրումը փոփոխություն մտցնել այդ իրավիճակում: |
| **Հղում(ներ)** | http://goo.gl/qJLDHH (Huffington Post)<br>http://goo.gl/2tQD3X<br>www.creativecommons.org<br>www.flickr.com<br>www.taggalaxy.com<br>www.compfight.com<br>http://en.wikipedia.org/wiki/Guerrillero_Heroico |

| Գործնական աշխատանք | «Ռեպավորիր դրան» |
|---|---|
| **Հեղինակ** | Անգելա Լյուչիա Կապեզուտո, Իտալիա |
| **Թեմա** | Արվեստագետը քո մեջ |
| **Կարողություններ** | Մշակութային իրազեկում և արտահայտում / հաղորդակցություն մայրենի լեզվով/ թվային կարողություններ |
| **Մակարդակ** | ☐ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 13-15 տարեկան |
| **Տևողություն** | 3x40 րոպե տևողությամբ կամ 2x1 ժամանոց դասեր |
| **Դասընթացի նպատակը** | Յուրաքանչյուր աշակերտի ներսում գլուխ է բարձրացնում արվեստագետը և խորանում է նրանց իրազեկությունը գործընկեր եվրոպական երկրների վերաբերյալ այն տեղեկություններով, թե ինչպես խուսափել հեղինակային իրավունքին առնչվող խնդիրներից: |
| **Ներածական.** | Աշակերտները պատրաստում են կարճ երաժշտական գովազդ՝ օգտվելով բաց և հոնարար չպահանջող նյութերից՝ տեղադրված Creative Commons (C.C.) կայքում: Այս գործնական փորձառությունը նրանց թույլ կտա հասկանալ, թե որքան աշխատանք են կատարում արվեստագետները մի բան ստեղծելիս և թե ինչպես նրանց վրա անձնապես կարող է անդրադառնալ հեղինակային իրավունքի խախտումը: Այս փորձնական ընթացակարգը նաև նրանց ցույց կտա, թե իրականում ինչ են նշանակում տարբեր CC հապավումները՝ իրազեկելով նրանց, թե ինչպես խուսափել խախտումներից և առավել լավ օգտվել համացանցային ռեսուրսներից:<br>Տեսանյութի թեման «ռեպավորված» գովազդ է, որը գրավում է զբոսաշրջիկներին դեպի իրենց ընտրած եվրոպական երկիրը: Ստեղծման գործընթացի մի մասը կապված կլինի այնպիսի ածականների և գոյականների կիրառության հետ, որոնք արտացոլում են աշակերտների ընտրած երկրի անունը: Ակնկալվումէ եվրոպական որոշ գործընկեր երկրների վերաբերյալ մշակութային գիտելիքների խորացում: Մի շարք կիրառական ծրագրերի օգտագործմամբ՝ PowerPoint, Video tools, ստեղծեք հաշիվներ վերբեռնման կայքերում (YouTube, կամ տեսանյութերի վերբեռնման այլ կայքերում), վերբեռնելով տեսանյութեր: Համակարգչային բազային գործընթացները թույլ են տալիս աշակերտներին մեծացնել իրենց թվային կարողությունները: |
| **Գործիքներ** | 1. **Համացանցի մատչելիություն.** Սմարթֆոն, շարժական համակարգիչ/ նոութբուք, կամ տեղ համակարգչային լաբորատորիայում:<br>2. **Տեսախցիկ** կամ սմարթֆոնի լավ տեսախցիկ:<br>3. **Կիրառական ծրագրեր՝ տեսանյութ ստեղծելու համար.**Windows Moviemaker կամ այլ անվճար կիրառական ծրագիր կամ ձայնային տեսագովազդի դեպքում PowerPoint կամ աղբյուրին համարժեք կիրառական ծրագրեր, ինչպիսիք են Open Office 4 Presentation (անվճար է) և բարձրախոս: |

1. Որպեսզի աշակերտներն իրենց երգի համար հանգավորվող բառեր գտնեն կարող են օգտվել հետևյալ կայքից՝ http://www.rhymezone.com
1. Իրապես գեղեցիկ և համապատասխան ռեպ երգի և երկրի պատկերների համար կարող եք օգտվել  խճանկարային տեքստ ստեղծող Textaizer Pro անվճար կիրառական ծրագրից, որը կարող եք ներբեռնել հետևյալ հղումով՝ http://mosaizer.com/Textaizer/index.htm, իրապես ցնցող և հեշտ կիրառելի... Տեսեք, թե ինչ պատկերներ են ստացվում, երբ օգտագործեք այս բառերը.

«Awesome Unique Strange Terrific Rare Ancient Landscape Ideal Aborigine»

ա. մի լավ երկլեզվանի բառարան, որպեսզի կարողանաք ածականներ և գոյականներ գտնել, որոնք կնկարագրեն թիրախ երկիրը և կդառնան անունների հապավումներ կամ այնպիսի առցանց բառարանները, ինչպիսին է www.wordreference.com







Textaizer Mosaic Text app

**Դասընթաց**

**Քայլ 1** – (15 րոպե)

**ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

Կախված դասարանի մեծությունից, աշակերտներին պետք է բաժանել ոչ ավելի քան երեք հոգանոց խմբերի (պատճառը՝ յուրաքանչյուրը պետք է հանդես գա որպես խմբի ակտիվ անդամ):

**Օգտակար հուշումներ ձայնագրման համար.**

• Օգտվեք եռոտանուց կամ հարթ մակերեսից, հակառակ դեպքում տեսախցիկը կշարժվի:

• Համոզվեք, որ բավականաչափ լույս կա, և ֆոնը մաքուր է, մութ չէ:

• Համոզվեք, որ լիակատար լռություն է տիրում և աղմուկ ստեղծող սարքեր չկան սենյակում:

• Շատ մի մոտեցեք բարձրախոսին:

• Դատարկ սենյակներն արձագանքում են, լավ կլինի, եթե սենյակում կահույք լինի:

• Որքան շատ եք փորձում, այնքան ավելի կատարյալ է ստացվում, ելույթ ունեցողը պետք է խոսի դանդաղ և հստակ:

Տեսանյութի ներբեռնում

**Հաշվի բացում**

1. • Երբ ձեր աշակերտները կավարտեն իրենց տեսանյութերը, նրանք պետք է ներբեռնեն դրանք, որպեսզի բոլորը կարողանան դիտել: Դրա համար հարկ է ունենալ YouTube-ի հաշիվ (http://www.youtube.com/): Հետևեք կայքի ցուցումներին՝ հաշիվ բացելու համար:

**Ներբեռնում**

Օրինակ՝ YouTube-ում

• Ձեր հաշվի էջում կա ***Upload*** կոճակ: Սեղմեք այն և հետևեք ցուցումներին:




(Ստուգեք YouTube-ի մատչելիությունը ձեր երկրում):

**Տեսանյութի անվանումը**

• Տեսանյութի վերնագիրն սկսեք հետևյալ կերպ՝ *Ռեպավորված այցելություն,* որից հետո տեսանյութի անունը, օրինակ՝ *Ռեպավորված այցելություն Ավստրալիա, գովազդ, կամ Ռեպավորված այցելություն Ֆինլանդիա:*

Սա մեծապես կհեշտացնի այս ծրագրի շրջանակներում այլ աշակերտների ստեղծած տեսանյութերի որոնումը:

ՏՀՏ հմտություններ

• Վերապատրաստում այնպիսի կիրառական ծրագրերի օգտագործման հարցում, ինչպիսիք են Textaizer Pro-ն գովազդային նյութերը, կամ այլ ծրագրեր, որոնք կարելի է օգտագործել ձայնագրության համար:

**Քայլ 2 –** (25 րոպե)

Ներկայացրեք թեման

ա. Ուսուցիչը պետք է խոսի աշակերտների հետ ստեղծագործելու և հեղինակային իրավունքի շուրջ (այս տեղեկությունները կարելի է նախապատրաստել ավելի վաղ՝ այցելելով www.webwewant.eu).

բ. Հանձնարարեք աշակերտներին պատասխանել հեղինակային իրավունքին վերաբերող հարցերին իրենց առաջադրանքների թերթիկում (Մաս 1), այնուհետև ստուգեք նրանց պատասխանները հետևյալ կայքում՝ www.webwewant.eu (պատասխանները՝ էջ 43):

գ. Երբ նրանք պատկերացում կկազմեն հեղինակային իրավունքների խախտումների հետևանքների մասին, նրանց պետք է հարցնել, թե ինչ տիպի նյութեր են վերբեռնում համացանցում:

դ. Հանձնարարեք, որ նրանք դա գրի առնեն առաջադրանքների իրենց թերթիկներում (Մաս 2)՝մատնանշելով, թե ինչ կարող են անել իրենց անձնական ստեղծագործությունների հետ: Նրանք պետք է գրի առնեն իրենց զգացողությունները առաջադրանքների թերթիկում՝ համեմատելու այն այլ խմբերի հետ:

ե. Աշակերտներն այնուհետև այցելում են Creative Commons (C.C.)-ի կայք՝ http://goo.gl/acxxzl, որպեսզի պատասխանեն առաջադրանքների թերթիկի հարցերին (Մաս 3)՝առկա արտոնագրերի տարբեր տիպերի վերաբերյալ: Ասացեք նրանց, որ նրանք կարող են օգտագործել այդ տեղեկություններն ավելի ուշ, երբ կընտրեն իրենց ստեղծագործությանն առավել համապատասխան արտոնագիր:

Նրանք այնուհետև պետք է կատարեն այս վարժությունը այցելելով հետևյալ կայքը՝ http://goo.gl/2Qyi ուսումնասիրելուայն հնարավորությունները, որոնք առաջարկում են տարբեր կայքեր ներբեռնելու C.C. նյութերը, սկսած երաժշտությունից, պատկերներից, տեսանյութերից և այլն:

f. CC0 արտոնագիր ունեցող երաժշտության համար նրանք պետք է այցելեն հետևյալ կայքը (դպրոցում դասերն ավարտվելուց հետո) http://freemusicarchive.org, և նախքանռեպ երգի համար համապատասխան երաժշտություն որոնելը, պետք է լսեն մի օգտակար վեբինար այն մասին, թե ինչպես օգտագործել երաժշտությունը և ստանալ CC արտոնագիր իրենց ստեղծագործության համար՝ http://youtu.be/Il6Z6uJ1E2E.

**Քայլ 3 –** (40 րոպե)+
(40 րոպե ձայնագրման ժամանակ)

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ (Մաս 4 առաջադրանքի թերթիկ 6.1)

Նախապատրաստումից և մտագրոհից հետո ուսուցիչը պետք է բացատրի հանձնարարությունը.

«Ձեր քաղաքապետը խնդրում է ձեր գովազդային գործակալությանը բարձրացնել ազգային երիտասարդ զբոսաշրջիկներին հոսքը, կազմելով գովազդային տեսանյութ, որը ցույց կտրվի հեռուստատեսությամբ, Զբոսաշրջության ազգային խորհրդի կայքում և կինոթատրոնում»: Աշակերտները պետք է ձևացնեն, թե իրենք այլ եվրոպական պետությունից են և պետք է խմբերով.

ա. Ընտրեն իրենց պետությունը հետևյալ ցանկից.

| **5 տառ** | **6 տառ** |
|---|---|
| Իտալիա | Կիպրոս |
| Իսպանիա | Ֆրանսիա |
| Մալթա | Հունաստան |
| | Լատվիա |
| | Լեհաստան |
| | Շվեդիա |

| | |
|---|---|
| | բ. Կախված այն բանից, թե համացանցն իրենց մատչելի է, թե՝ ոչ, գտնել գոյականներ կամ ածականներ, որոնք նկարագրում են իրենց երկիրը և մասն են կազմում այն տառերի, որոնցից կազմված է վերջինիս անունը (տես Ավստալիայի օրինակը գործիքների բաժնում) իրենց առցանց կամ թղթային բառարաններում: Պետք է բավարար լինի երկրի անվան յուրաքանչյուր տառի համար, որպեսզի հնարավոր լինի գրել ռեպ երգ այդ բառերի շարքից: Այնուհետև.<br>գ. Գրեք բանաստեղծություն, բայց պարտադիր չէ կազմված լինի նախադասություններից, սակայն պետք է ներառի բոլոր բառերը, որ նրանք կգտնեն քայլ բ-ում և որը նրանք այնուհետև կօգտագործեն ռեպ երգի ստեղծման համար՝ ուղեկցելու համար այն սլայդները կամ պոստերներն այն պատկերներով, որ նրանք կգտնեն C.C. կայքից (օրինակ՝ Flickr ից): Այնուհետև.<br>դ. Ընտրեք.<br>• Աշակերտ(ներ), որը/որոնք կնկարահանվեն երգի տեսանյութի մեջ և կցուցադրեն այն պոստերները/քարտեզները/գովազդային նյութերը, որոնք կստեղծվեն (տես Textaizer Pro): ԿԱՄ<br>• Ձայնային ներկայացում (PowerPoint կամ Open Office Presentation), երբ փոնում ձայնը երգում է ռեպ՝ սլայդների ցուցադրությանը զուգահեռ: *Այս դեպքում աշակերտները պետք է կանխավ պատրաստեն* ելույթը, իսկ դասին միայն ձայնագրեն:<br>Երկու դեպքում էլ տեսանյութի տևողությունը չպետք է գերազացի 1 րոպեն (սակայն պետք է բացատրել, որ տեղավորվեն 30 վայրկյանում...հիշեք, որ դա գովազդ է):<br>ե. Ընտրեք C.C. արտոնագրի տեսակ համապատասխան կայքից՝ at the following link http://creativecommons.org/choose/ (ընտրեք ձեր լեզուն էջի ներքևի վանդակից) և գովազդի համար տրամադրված կոդը պատճենեք կայքում՝ վերբեռնելու համար: |
| **Լրացուցիչ տարբերակներ.** | Վերբեռնված տեսանյութերը կարող են դիտել նաև դպրոցի այլ աշակերտներ, եթե դպրոցն ունի կայք, կարելի է վերբեռնել այնտեղ, կամ աշխարհի բոլոր աշակերտները, եթե նրանց հաղորդվի Google-ի կամ YouTube-ի URL հասցեն: Վարժությունը կարող է դառնալ խիստ մրցակցային և մասնագիտական, եթե ոգևորությունը պահպանի աշակերտներից կազմված դատավորների կազմը, որն ընտրում է հաղթող գովազդը և շնորհում մրցանակ: |
| **Հղում(ներ)** | **Դասապլան**՝ հիմնված առավել անվտանգ համացանցի վերաբերյալ բուկլետի վրա:<br>***«Մեր երազած համացանցը – Երիտասարդ և առցանց – Վարժություններ երիտասարդների կողմից երիտասարդների համար»,*** որը կարելի է ներբեռնել հետևյալ կայքից՝ www.webwewant.eu<br>Հեղինակային իրավունքի խախտումների վերաբերյալ՝<br>Nominet (2012), Արդյոք դուք պատահակա՞ն օրինախախտ եք.(առցանց), http://accidentaloutlaw.knowthenet.org.uk/question1<br>Creative Commonsարտոնագրեր հետևյալ կայքից՝ http://creativecommons.org<br>Համապատասխանեցվող պատկերներ՝ www.flickr.com<br>Խճանկարային տեքստային պատկերներ՝ արված Textaizer Pro-ով, որը կարելի է ներբեռնել հետևյալ կայքից՝ http://mosaizer.com/Textaizer/index.htm |

| Գործնական աշխատանք | Արվեստագետը ձեր մեջ |
|---|---|
| **Հեղինակ** | Ֆրանս Նյուվենհույզեն, Նիդերլանդներ |
| **Թեմա** | Արվեստագետը Ձեր մեջ |
| **Կարողություններ** | Մշակութային իրազեկվածություն և արտահայտություն / հաղորդակցություն մայրենի լեզվով / թվային կարողություններ |
| **Մակարդակ** | ☐ Ցածր ☑ Միջին ☐ Բարձր |
| **Տարիքային խումբ** | 13-15 տարեկան |
| **Տևողություն** | Երկու դասաժամ, յուրաքանչյուրը՝ մոտ 40 րոպե: |
| **Դասընթացի նպատակը** | • Ցուցադրել, որ յուրաքանչյուր աշակերտ արվեստագետ է և ստեղծագործող:<br>• Բացատրել, որ կան կանոններ (օրենքներ), որոնք պաշտպանում են ստեղծագործություններն ու արվեստագետներին: |
| **Ներածական.** | Այս դասը ձեր միջի արվեստագետի վերհանման մասին է: Առաջին հերթին ուսուցիչները պետք է սկսեն դասը՝ ներկայացնելով արվեստագետի տիպական սահմանումները. «Մարդն արվեստի բնագավառում»: Այնուհետև դիտեն կամ հանձնարարեն աշակերտներին դիտել YouTube-ով ֆիլմ արվեստագետներից մեկի մասին: Շատ լավ օրինակ է Ջեյքոբ Քոլիերը, երաժիշտ, ով նվագում է մի քանի երաժշտական գործիքներ, գործիքավորում և գրում երաժշտություն՝ https://www.youtube.com/user/jacobcolliermusic<br>Եթե ցանկանում եք, օրինակ՝ այնպիսի մեկի մասին ֆիլմ, ով փոքր տարիքում շատ լավ է նվագել, ապա դիտեք Ավերի Մոլեքի մասին նյութը՝ http://youtu.be/9uyDGEjv-vg (Գրանցում չի պահանջվում, ստուգեք YouTube-ի մատչելիությունը ձեր երկրում, նախքան տեսանյութը միացնելը): Հանձնարարեք աշակերտներին մի փոքր կոլաժ անել այն արվեստագետի մասին, ով նրանց դուր է գալիս: Իրենց նախընտրած արվեստագետներին դիտելուց և քննարկելուց հետո, ուղղորդեք նրանց գտնելու ավելի մեծ արվեստագետի:<br>Արվեստագետն արժեքներ ստեղծող մարդն է: Համացանցում կարելի է գտնել բազում ստեղծագործություններ, այդ թվում՝ երաժշտություն և ֆիլմեր: Դասի ընթացքում նրանք կսովորեն հեղինակային և սեփականության իրավունքների մասին: Վերջապես, աշակերտները կարող են ներկայացնել իրենց որպես արվեստագետ «Սելֆի-ֆիլմի» կամ ելույթի միջոցով: |
| **Գործիքներ** | Մատիտ/թուղթ<br>Համացանցի մատչելիությունը<br>Սմարթֆոն |
| **Քայլ 1 –** (20 րոպե) | Կարդացեք աշակերտների ցուցումների էջը՝ արվեստագետ լինելու մասին: Հանձնարարեք նրանց գրի առնել, թե ինչպիսի արվեստագետ նրանք կուզենային լինել և քննարկել նրանց ընտրությունն իրենց հարևանի հետ: Փնտրեք նման հետաքրքրություններով այլ արվեստագետների: |

| | |
|---|---|
| **Քայլ 2 –** (20 րոպե) | Աշխատանք զույգերով.«Ո՞վ է ձեր ամենասիրելի արվեստագետը»: Հանձնարարեք աշակերտներին համացանցում տեղեկություններ փնտրել իրենց նախընտրած արվեստագետի մասին և պատրաստել կոլաժ նրա մասին, օգտվելով՝<br><br>**app Pic Collage.-ից**<br><br>• APP store http://goo.gl/YZHq10<br>• Google play http://goo.gl/pTWsrF.<br>Թիմերը ներկայացնում են իրենց կոլաժները մյուս խմբին և պարզաբանում, թե ինչու են ընտրել այդ անձին: |
| **Քայլ 3 –** (20 րոպե) | Մտորումներ արվեստագետ բառի վերաբերյալ: Աշակերտները կազմում են նախադասություններ արվեստագետ լինելու մասին: Նրանք պետք է ներկայացնեն դրանք փոքր խմբերում: Նրանք սովորում են, թե նչ է պետք մարդուն արվեստագետ դառնալու համար: Որոշակիորեն միայն տաղանդը չէ, որ պետք է: Աշակերտները քննության են առնում «հեղինակային իրավունք» և «սեփականության իրավունք» հասկացությունները: Նրանք օգտվում են պատանիների համար նախատեսված ձեռնարկից և պատասխանում կայքի ու 6.2-րդ առաջադրանքի թերթիկի հարցերին: Նրանք սովորում են, որ ստեղծարարությունը նաև սեփականության իրավունքի և դրա կանոնների մասին է: |
| **Քայլ 4 –** (20 րոպե) | Նրանք ստեղծում են ֆիլմ կամ ելույթ իրենց մասին՝ որպես արվեստագետի: |
| **Լրացուցիչ տարբերակներ.** | Փնտրեք այլ դպրոցների այն աշակերտներին, ովքեր օգտվել են նույն դասապլանից: |
| **Հղում(ներ)** | http://youtu.be/9uyDGEjv-vg<br>https://www.youtube.com/user/jacobcolliermusic |

# ԱՌԱՋԴՐԱՆՔՆԵՐ

1.1 Եթե կարողանայի անել այն ամենն, ինչ կցանկանայի
1.2 Երկու կողմ, մեկ մետաղադրամ I
1.3 Երկու կողմ, մեկ մետաղադրամ II

2.1 Գործիքներ և տեխնոլոգիաներ վերապատրաստողների համար

3.1 Համացանցային գործիքներ մաթեմատիկական վարժությունների համար
3.2 Կայուն գաղտնաբառի ձևավորում
3.3 Բլոգները/վիկիները մաթեմատիկայում
3.4 Ֆեյսբուքը և մաթեմատիկական վարժությունները

4.1. Որտե՞ղ է ճշմարտությունը:

5.1 Մայքլ Ջեքսոն «Փրայվիսի»

6.1 Ռեպավորենք այն
6.2 Ձեր միջի բոլոր արվեստագետները

# Եթե կարողանայի անել այն ամենն, ինչ ցանկանում եմ

Գլուխ 1. **Իմ առցանց իրավունքներն ու պարտականությունները**

Դասպլան. **Համացանցի հիմնական իրավունքը** **

Հեղինակ. ***Կարստեն Գրյոնե, Գերմանիա***

**Առաջադրանք.** Եթե առհասարակ չլինեին օրենքներ և սահմանափակումներ և դուք կարողանայիք անել ինչ ցանկանում եք, ապա ի՞նչ կանեիք: Գրեք առնվազն 4 բան.

**Առաջադրանք.** Այժմ մտածեք, թե ձեր գործողություններն կարող են բացասական հետևանքներ ունենալ այլ մարդկանց, կամ ձեր ընկերների համար: :

Վարժություն 1. **Հայացք Հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիային**

ԵՄ կարևորագույն իրավական փաստաթղթերից մեկը Հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիան է՝ (http://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf): Ուսումնասիրեք դրա 1-ին գլուխը՝ «Արժանապատվությունը» և մատնանշեք այն իրավունքները, որոնք ձեր կարծիքով ամենակարևորն են համացանցից օգտվելիս:

Վարժություն 2: **Առաջին հայացք համացանցին վերաբերող գրքույկին**

Առաջադրանք. Կիրառեք «կարևոր տեղեկությունների համար արագ ընթերցելու (scan)» մեթոդը՝ (http://www.aacc.edu/tutoring/file/skimming.pdf) արագ աչքի անցկացնելու համար «Մեր երազած համացանցը» գիրքը և մատնանշեք այն գլուխներն ու էջերը, որոնք առնչվում են ԵՄ խարտիայի հետևյալ իրավունքներին: Մի իրավունքը կարող է ձեզ հանդիպել մի քանի էջում կամ գլխում.

| **Իրավունք** | **գլուխ** | **էջ** |
|---|---|---|
| Հոդված 1 «Մարդու արժանապատվությունը» | | |
| Հոդված 7 «Անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը» | | |
| Հոդված 11 «Արտահատվելու ազատությունը» | | |

# Երկու կողմ, մեկ մետաղադրամ I

**Գլուխ 1.** առցանց իրավունքներն ու պարտականությունները
**Դասապլան.** Երկու կողմ, մեկ մետաղադրամ I **
**Հեղինակ.** Կարստեն Գրյունե, Գերմանիա

**Վարժություն 1.** **Իրավունքներ և պարտականություններ. Նույն մետաղադրամի երկու կողմերը:**
Առաջադրանք. Հաճախ տարբեր իրավունքներ համընկնում են պարտականության հետ կամ նույնիսկ բախվում են երկու իրավունքներ:
Ուսումնասիրելով Հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիան՝ (ավելացրեք հղումը), համացանցային ո՞ր իրավունքները կարող են երբեմն բախվել: Արդյոք դրանք համընկնո՞ւմ են որոշակի պարտականության հետ:
Մի իրավունքը կարող է պատահել մի քանի գործերով :

| Իրավունք | բախումը հոդված #/ դրանից բխող պարտականությունը |
|---|---|
| Հոդված 1 «Մարդու արժանապատվությունը» | |
| Հոդված 7 «Անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը» | |
| Հոդված 11 «Արտահատվելու ազատությունը» | |
| Հոդված 13 «Արվեստների ազատությունը» | |

**Վարժություն 2.** **Հիմնական իրավունքների հավանական խախտումների դեպքեր**

**Առաջադրանք.** Ձեր որոնման արդյունքների վրա հիմնվելով ստեղծեք երեք գործ՝ համաձայն ձեր երկրի օրենսդրության, որտեղ ձեր իրավունքները հավանաբար խախտվել են: Այդ գործերը պետք է ներառեն առնվազն մեկ ճիշտ և մեկ սխալ օրինակ:

**Գործ 1**

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Գործ 2**

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Գործ 3**

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

# Երկու կողմ, մեկ մետաղադրամ II

Գլուխ 1. Իմ առցանց իրավունքներն ու պարտականությունները

Դասապլան. Երկու կողմ, մեկ մետաղադրամ (II) ***

Հեղինակ. ***Կարստեն Գրյոնե, Գերմանիա***

**Վարժություն 1:** **Իմ իրավունքներն ու պարտականությունները՝ համաձայն ներպետական օրենսդրության**

**ԵՄ խարտիայի՝ ուսումնասիրության ենթակա իրավունքը_________________________ իրավունք (Հոդված # )**

**Առաջադրանք.** ԵՄ հիմնարար իրավունքների խարտիայում ամրագրված իրավունքները մասնավորեցված են ներպետական օրենսդրությամբ:

Ուսումնասիրեք ներպետական օրենսդրության հետևյալ ակտերը՝

- ձեր սահմանադրությունը, հատկապես՝ հիմնարար իրավունքների բաժինը,
- քրեական օրենսդրությունը,
- հեղինակային իրավունքի մասին օրենսդրությունը,
- տվյալների պաշտպանության մասին օրենսդրությունը:

Գտեք այն պարբերությունները, որոնք վերաբերում են ԵՄ խարտիայում ընդգրկված հիմնարար իրավունքի դրական կամ սահմանափակող եղանակով հոդվածներին:

| Իրավունքներ | | | Պարտականություններ | | |
|---|---|---|---|---|---|
| Ինձ թույլատրվում է | օրենք | պարբերություն (օրենքից) | Ես պարտավոր եմ / Ես չպետք է | օրենք | պարբերություն (օրենքից) |
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| 4 | | | | | |

**Գլուխ 2.** **«Տեղեկությունը գիտելիք չէ», Ալբերտ Էյնշտեյն**
**Դասապլան.** **Մտիր, ստեղծիր և տարածիր *****
**Հեղինակ.** ***Ֆեռնանդո Կամպոս, Պորտուգալիա***

Սպառիչ չլինելով՝ այս աղյուսակն առաջարկում է գործիքների և տեխնոլոգիաների լայն շրջանակ, որոնք կարող են օգտագործել աշակերտներն ու ուսուցիչները ուսուցման և ուսումնառության գործընթացներն ավելի ինտերակտիվ դարձնելու նպատակով:

| Առաջադրանք | Նպատակներ | Բաց աղբյուր կամ առկա է սահմանված պայմաններում | Օժանդակ շարժական սարքեր | FC Գործիքակազմի անվանում |
|---|---|---|---|---|
| 1. Մտքի քարտեզների կառուցում | Մտքի քարտեզներ՝ տարածելով և համագործակցելով կամ՝ առանց | 1. Popplet<br>2. CMap Tools<br>3. Mindomo<br>4. FreeMind | 1. Այո<br>2. Ոչ<br>3. Այո<br>4. Ոչ | Քարտեզ |
| 2. Հարցարան | Բազմակի հարցարանների ստեղծում | 1. Kahoot<br>2. HotPotatoes<br>3. Socrative<br>Quizwriter (առևտրային)<br>5. Edmodo | 1. Այո<br>2. Ոչ<br>3. Այո<br>4. Այո<br>5. Այո | Ստեղծեք |
| 3. Տեսահաղորդակցություն, Հաղորդակցություն և տեսաձայնագրում | Ստեղծեք տեսահաղորդակցության տեսանյութեր | Google Hangout | Այո | Հաղորդակցվեք<br>Համագործակցեք |
| 4. Տեսանյութերի պահպանում | Տեսանյութերի պահպանում և տարածում | Youtube | Այո | ցուցադրում |
| 5. Համագործակցային գրավոր | Տեքստեր գրել բազմաթիվ օգտատերերի կողմից միևնույն ժամանակ | TitanPad<br>Google docs | 1. Այո<br>2. Այո | Համագործակցել |
| 6. Ձայնագրում և խորհրդածում | Ձայնագրություն՝ ներառելով խմբերի բաժանված աշակերտներին | 1. Voice thread (առևտրային)<br>2. TeamUp | 1. Այո<br>2. Ոչ | Երազեք<br>Հարցրեք<br>Մտորեք<br>Ուսումնասիրեք |

| Առաջադրանք | Նպատակներ | Բաց աղբյուր կամ առկա է սահմանված պայմաններում | Օժանդակ շարժական սարքեր | Օժանդակ շարժական սարքեր |
|---|---|---|---|---|
| 7. QR Codes | Օգտվել QR կոդերից ուսուցողական նպատակներով | http://goo.gl/AF7pPh (Անհրաժեշտ է գրանցվել)<br>http://goo.gl/Ua9txH (Անհրաժեշտ է գրանցվել) | Այո | Ստեղծել<br>Ուսումնասիրել |
| 8. Wiki | քննարկում և տարածել համագործակցային եղանակով | 1. Google docs<br>2. pbworks | 1. Այո<br>2. Այո | Համագործակցել |
| 9. Կայքեր | Աշակերտների խմբերի կամ դասարանների համար (groups or classes) ստեղծել կայքեր՝անձնական և հանրային օգտագործման համար | 1. Google sites<br>2. Weebly | 1. Ոչ<br>2. Այո | Ցուցադրել |
| 10. Բլոգ | Բլոգի ստեղծում | 1. Blogger<br>2. WordPress | 1. Այո<br>2. Այո | Համագործակցել<br>Ցուցադրել |
| 11. Արտադրողական գործիքներ | Գործիքներ. Տեքստի խմբագրում, ներկայացում, spreadsheet | 1. Libre Office<br>2. Polaris Office<br>3. Google Docs | 1. Ոչ<br>2. Այո<br>3. Ոչ | Ստեղծել<br>Ցուցադրել |
| 12. Ձայնագրություն | Ձայնագրել և մոնտաժել ձայնագրությունը | Համարձակություն | Ոչ | Ստեղծել<br>Ցուցադրել |
| 13. Պատկերներ | Պատկերների խմբագրում | 1. Gimp<br>2. Inscape<br>3. Photoscape | 1. Ոչ<br>2. Ոչ<br>3. Այո | Ստեղծել<br>Ցուցադրել |
| 14. Տեսանյութ | Մոնտաժ և փիղեոպլեյեր | 1. VSDC Free Video Editor<br>2. VLC | 1. Ոչ<br>2. Այո | Ստեղծել<br>Ցուցադրել |
| 15. Ուռճացված իրականություն | Տեղեկություններ Առարկաների և վայրերի ստեղծում QR կոդերով | 1. Aurasma<br>2. Google Goggles | 1. Այո<br>2. Այո | Ստեղծել<br>Ցուցադրել |

# Համացանցային գործիքներ մաթեմատիկական վարժությունների համար

**Գլուխ 3.** **Մասնակցություն համացանցում**
**Դասապլան.** **Սովորում ենք Math 2.0 *-****
**Հեղինակ.** ***Իրինա Վասիլեսկու, Ռումինիա***

## Քայլ 1: Համացանցային գործիքներ մաթեմատիկական վարժությունների համար

1.Հետևյալ գործիքներից որո՞նք կարող են օգտակար լինել, ըստ ձեզ, մաթեմատիկական վարժությունների համար (այո/ոչ):

Բլոգներ Վիկիներ ___________ Խաղեր ___________ Թվիթեր ___________

Էլ. փոստ ___________ Ֆեյսբուք ___________ Զրուցարան կամ նման կիրառական

ծրագրեր ___________ Որոնման համակարգեր ___________Google Drive ___________

2. Կարո՞ղ եք մտածել, թե ինչ առավելություններ ունի այս գործիքների կիրառումը մաթեմատիկական վարժությունների պարագայում՝ համեմատած դեմ առ դեմ համագործակցության հետ: Օրինակ, մի ամաչկոտ աշակերտ կարող է ավելի հեշտորեն արտահայտել իր կարծիքը համացանցում, քան դասարանում:.

___________________________________________

___________________________________________

___________________________________________

3. Հետևյալ հատկանիշներից որո՞նք են առավելություններ (Ա)/թերություններ (Թ) մաթեմատիկայի դասերի և վարժությունների ժամանակ:

- տեղեկությունների ակնթարթային մատչելիությունը________
- հեռահար հաղորդակցությունները________
- վիրուսների/փոստաղբի ռիսկերը________
- կեղծ օգտատերերի անձնական էջերը________
- մեծաքանակ կրթական ռեսուրսները________
- ուսուցչի հետ ավելի սերտ հաղորդակցությունը________
- գովազդը________
- առցանց թարգմանչական գործիքները________
- ներսում շատ ժամանակ անցկացնելը________
- ժամանակի ինքնուրույն տնօրինումը________
- առավել մեծ տեսանելիությունը________
- իմաստի/բովանդակության ընկալումը________

**4. Հաշվեք յուրաքանչյուր դասը և հաշվարկեք Ա/Թ համամասնությունը: Արդյոք այն 1-ից մե՞ծ է, թե՞ փոքր: Ինչպե՞ս եք մեկնաբանում դա:**

___________________________________________

___________________________________________

___________________________________________

# Ուժեղ գաղտնաբառի ձևավորում

**Գլուխ 3.** **Մասնակցություն Համացանցում**

**Դասապլան.** **Սովորում ենք Math 2.0 *-****

**Հեղինակ.** ***Իրինա Վասիլեսկու, Ռումինիա***

- **Ուժեղ գաղտնաբառը պետք է.**
- ունենա առնվազն 8 նիշ
- չներառի ձեր իրական անունը
- չներառի ամբողջական բառ
- էականորեն տարբերվի ձեր այլ գաղտնաբառերից
- ներառի առնվազն մեկ մեծատառ, մեկ փոքրատառ, մեկ թիվ և ստեղնաշարի մեկ խորհրդանիշ:

**Վարժություն.** Վերցրեք մի բառ և փոխարինեք տառերից մի քանիսը թվերով կամ նշաններով, ինչպես օրինակ՝ «p1n@pp!E»-ում ( «pineapple»բառից)

**Հարցեր.**

Քանի՞ տարբեր գաղտնաբառեր կարող եք ստեղծել միևնույն 8 նիշից

**Քայլ 2.** Խաղերը մաթեմատիկայում

Ստեղծեք գծապատկեր հետևյալ պարբերությունից.«Ուսումնառուները հիշում են իրենց կարդացածի միայն 10 և լսածի միայն 20 տոկոսը:Եթե կան պատկերներ, որոնք ուղեկցում են բանավոր ներկայացմանը, ապա հիշում են 30 տոկոսը, իսկ երբ դիտարկում են, որ ինչ-որ մեկն ինչ որ բան բացատրելիս նաև կատարում է տեղում, ապա հիշում են լսածի 50 տոկոսը: Սակայն ուսումնառուներն ամեն ինչ 90 տոկոսով են հիշում,«եթե գործն ինքնուրույն են անում, նույնիսկ եթե դա բեմականացում է»:

Արդյոք բազմախաղընկերային առցանց խաղերը (MMO կամ MO խաղերը) ևս ռիսկե՞ր են պարունակում: Եթե այո, բերեք օրինակներ:

Ո՞րն է եղել ձեր համացանցային խաղերի ամենավատ և ոչ անվտանգ վարքագծի փորձառությունը: Ի՞նչ կարող էիք անել՝ խուսափելու համար նման փորձից:

Եթե առցանց խաղընկերը խնդրում է ձեզ հանդիպել իր հետ իրական կյանքում կամ պահանջում ձեզնից անձնական բնույթի տեղեկություններ, ապա ի՞նչ կանեիք:

# Բլոգները/վիկիները մաթեմատիկայում

Գլուխ 3. **Մասնակցություն Համացանցում**
Դասապլան. **Սովորում ենք Math 2.0 *-****
Հեղինակ. ***Իրինա Վասիլեսկու, Ռումինիա***

1) Վարժություն 1. 10 բալանոց սանդղակով գնահատեք բլոգի օգտագործումը մաթեմատիկական վարժություններում, 1-ը օգտակար չէ, 10-ը ամենաօգտակարն է.

- ☐ հասկացության բացատրություն / մասնագիտական եզրերի բառարան
- ☐ դասարանային նշումների տեղադրում
- ☐ սլայդների և դասարանային այլ ռեսուրսների տեղադրում
- ☐ հայտարարություններ
- ☐ խնդիր պրակտիկա
- ☐ աշխատանք դասընկերների կամ այլ դպրոցների հետ
- ☐ դեպքերի ուսումնասիրություն
- ☐ իրական կյանքի մաթեմատիկա
- ☐ «շաբաթվա խնդիր»
- ☐ վերանայում

**Որոշ կանոններ բլոգներից օգտվելու համար.**

- Երբեք ձեր բլոգումև ձեր անձնական էջին անձնական տվյալներ կամ նկարներ մի տեղադրեք.
- Երբեք մի մոռացեք հեղինակային կանոնների մասին.
- Հիշեք, որ այն, ինչ տեղադրում եք, հանրային է, տեսանելի ուսուցիչների և ծնողների համար և կարող է տարածվել.
- Ընտրեք մեկնաբանությունների այնպիսի կարգավորումներ, որոնց համար կպահանջվի ձեր մոդեռացիան, նախքան դրանց հրապարակումը.
- Մտածեք նախքան տեղադրելըբլոգում կամ որպես մեկնաբանություն.
- Իմացեք, թե ինչպես հաղորդում  ներկայացնել և արգելափակել անցանկալի օգտատերերին.
- Ձեր որակավորումների մասին տեղեկություններ մի տարածեք.
- Եթե հրավիրեք ձեր բլոգում այլ գրառումներ կատարողների, նրանց վերապահեք իրենց  դերին համապատասխան իրավունքներ.
- Պատասխան արձագանք ներկայացնելիս եղեք նույնքան քաղաքավարի, որքան դասարանում: Այդ արձագանքը դարձրեք օգտակար և արդարացի.
- Եթե տեսնում եք մի բան, որ չպետք է տեսնեիք ձեր էկրանին, անմիջապես հայտնեք այդ մասին ձեր ուսուցչին կամ ծնողներին:

2) Վարժություն. **Աշխատեք զույգերով, որպեսզի ստեղծեք ավելի շատ կանոններ և գրեք դրանք ֆլիփչարթի վրա: Այնուհետև ընտրեք 10 ամենաօգտակար կանոնները և ստեղծեք «Բլոգների տասը պատվիրանները»:**

# Ֆեյսբուքը և մաթեմատիկական վարժությունները

**Գլուխ 3.** **Մասնակցություն Համացանցում**
**Դասապլան.** **Սովորում ենք Math 2.0 *-****
**Հեղինակ.** ***Իրինա Վասիլեսկու, Ռումինիա***

**Վարժություն 1.** Համաձայն վիճակագրության Ֆեյսբուքի օգտատերերի տարիքային բաշխումը հետևյալն է: Ստեղծեք կարկանդակաձև գծապատկեր պատկերելու այն:

| Տարիքը | Տոկոսը |
|---|---|
| 13-17 | 14.8% |
| 18-24 | 32.3% |
| 25-34 | 26.6% |
| 35-44 | 13.2% |
| 44-54 | 7.2% |
| 55-64 | 3.5% |
| 64+ | 2.4% |

**Վարժություն 2.** **Պատասխանեք հետևյալ հարցերին.**
Ի՞նչ հաճախականությամբ եք ստուգում ձեր Ֆեյսբուքի լրատուն:

Ի՞նչ նպատակով եք օգտագործում Ֆեյսբուքը: Առաջարկություններ. զրուցելու, լուսանկարներ տեղադրելու, ընկերներիս հետ կապ պահելու, մեր կյանքի կարևորագույն իրադարձությունների մասին նյութեր տեղադրելու, լուսանկարներ վերբեռնելու, խաղեր խաղալու և այլն:.

Մտանանշեք ձեր մասին 5 տեղեկություն, որ չպետք է տեղադրեք ձեր անձնական էջում:

Արդյոք երբևէ օգտվե՞լ եք Ֆեյսբուքից դպրոցական վարժություններ կատարելու համար:

Կարծում եք, որ այն կարելի՞ է օգտագործել դրա համար: Ինչպե՞ս:

Սույն ցանկից ընտրեք 3 լավագույն գաղափարները Ֆեյսբուքը մաթեմատիկայում կիրառելու համար.

- դասարանային խումբ՝ կիսելու տեղեկությունները և տալու հանձնարարություններ
- պլանավորելու իրադարձություններ
- աշխատելու խմբերով
- տեղադրելու նշումներ այն աշակերտների համար, ովքեր բացակայել են դասերից
- տարածելու մուլտիմեդիա ռեսուրսներ
- ներգրավելու առավել փակ, լուռ աշակերտներին
- հիշեցումներ, հայտարարություններ, մոտալուտ վերջնաժամկետներ
- ուսուցողական կիրառական ծրագրեր
- օգնելու աշակերտներին առավել սերտ կապեր հաստատելու
- համագործակցելու այլ դպրոցների հետ
- անցկացնելու հարցումներ

Արդյոք ձեզ հայտնի՞ են մաթեմատիկային վերաբերող Ֆեյսբուքյան էջեր:

Աշխատելով չորս հոգանոց խմբերով՝ ստեղծեք էթիկետի և անվտանգության հինգ կանոն մաթեմատիկայի Ֆեյսբուքյան խմբի համար:.

# Որտե՞ղ է ճշմարտությունը

**Գլուխ 4. Ձևավորեք ձեր ինքնությունը**

**Դասապլան. Իմ (իրական) ինքնությունը****

**Հեղինակ.** *Մարտինա Կուպիլիկովա, Չեխիայի Հանրապետություն*

Ձեր ինքնության մասին ավելի լավ պատկերացում կազմելու նպատակով աշխատեք ինքնուրույն լրացնել ստորև աղյուսակները.

| Ո՞վ եմ ես (համացանցից դուրս): | | Ո՞վ եմ ես (համացանցից դուրս): | | Ո՞վ եմ ես (համացանցից դուրս): | |
|---|---|---|---|---|---|
| Սիրալիր | | Սիրալիր | | Սիրալիր | |
| Բարի | | Բարի | | Բարի | |
| Պարկեշտ | | Պարկեշտ | | Պարկեշտ | |
| Համարձակ | | Համարձակ | | Համարձակ | |
| Չար | | Չար | | Չար | |
| Թունոտ | | Թունոտ | | Թունոտ | |
| Բարեխիղճ | | Բարեխիղճ | | Բարեխիղճ | |

Հաջորդ աղյուսակում գրի առեք ձեր հատկանիշներից հինգը: .

| Ո՞վ եմ ես (համացանցից դուրս) | | Ո՞վ եմ ես (համացանցից դուրս) | | Ո՞վ եմ ես (համացանցից դուրս) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

Այժմ աշխատեք մեկ կամ երկու այլ աշակերտների հետ՝ քննարկել ձեր պատասխանները: Արդյոք գիտե՞ք իրար այնքան լավ, որքան կարծում եք: Ավելի մոտ եք անձին, երբ համացանցու՞մ եք, թե՞ երբ համացանցում չեք:

# Մայքլ Ջեքսոն «Փրայվիսի»

**Գլուխ 5.** **Անձնական կյանքի գաղտնիությունն իմ ամենաթանկ ունեցվածքն է:**
**Դասապլան.** **Մաքլ Ջեքսոն «Փրայվիսի»**
**Հեղինակ.** *Միգելա Ֆեռնանդես, Պորտուգալիա*

**Ո՞րն է այս երգի իմաստը:**

**Բացատրեք, թե ի՞նչ կապ ունի երգի իմաստը համացանցի հետ:**

**Բերեք երգում նկարագրված իրավիճակների և իրական կյանքի համարժեքները:**
*«Այժմ նա չունի երկրորդ շանս, նա ուղղակի ծաղրում էր ու հետապնդում*
*Ասեք ինձ, խնդրեմ, ինչու,*
*Չկա և ոչ մի դաս քաղելու համար, հարգանքը չի տրվում, հարգանքին արժանանում են*
*Դադարեցրեք չարամտորեն հարձակվել իմ ազնվության վրա»:*

Գլուխ 6. **Արվեստագետը ձեր մեջ**
Դասապլան. **Ռեպավորեք այն****
Հեղինակ. *Անգելա Կապեզուտո, Իտալիա*

Խորհուրդ. Աշակերտները պետք է աշխատեն խմբերով, սակայն նրանցից յուրաքանչյուրը պետք է լրացնի սույն առաջադրանքների թերթիկը, որպեսզի դրական գնահատական ստանա ուսուցչից:

| | |
|---|---|
| **Մաս 1.** Արդյոք դուք տեսահե՞ն եք: Հեղինակային իրավունքի ոտնահարում/ խախտում | Միշտ չէ, որ հեշտ է հասկանալ, թե երբ է ինչ-որ մի բան պաշտպանվում հեղինակային իրավունքով և թե ինչպես կարող են հեղինակային իրավունքով պաշտպանվող առարկաները օրինական ձևով օգտագործվել:<br><br>Ստուգեք ձեր գիտելիքները հետևյալի մասին. արդյոք դրանք հեղինակային իրավունքի խախտո՞ւմ են: |
| ☐ Այո ☐ Ոչ | Հեղինակային իրավունքի իրավատերերի հետ համաձայնագրեր ունեցող առցանց ծառայություններից երգեր քաշելը (օրինակ Spotify-ից): |
| ☐ Այո ☐ Ոչ | Հեղինակային իրավունքով պաշտպանվող պատկերը վերբեռնելը (հիշատակելով սեփականատիրոջը կամ առանց դրա) |
| ☐ Այո ☐ Ոչ | iTunes-ից ներբեռնելը: |
| ☐ Այո ☐ Ոչ | Մի տեսանյութ վերբեռնելը, որը դուք արել եք համերգի ժամանակ այն դեպքում, երբ տոմսի վրա նշված է եղել, որ տեսագրությունն արգելվում է: |
| ☐ Այո ☐ Ոչ | Հրապարակել մի հատված այլ անձի բլոգից և տեղադրել հղումն այդ բլոգին, սակայն չհարցնել թույլտվություն նրանից: |
| ☐ Այո ☐ Ոչ | Դիտել տեսանյութ, որ մեկ ուրիշն է տեսագրել մի երաժշտի կենդանի կատարումից, երբ նշված է եղել, որ տեսագրումն արգելվում է: |
| ☐ Այո ☐ Ոչ | Վերբեռնել համերգի ընթացքում Ձեր արած լուսանկարը, երբ տոմսի վրա գրված էր, որ տեսագրումն արգելված է: |
| ☐ Այո ☐ Ոչ | Վերբեռնել մի ժամանակակից փոփ երգի բառերը / կիթառի նոտաները անհատական կայք կամ սոցիալական ցանց: |
| ☐ Այո ☐ Ոչ | Վերբեռնել հանրահայտ անձի լուսանկարը, որ ինքներդ եք նկարել հանրային վայրում: |
| ☐ Այո ☐ Ոչ | Նորից տեղադրել մի ողջ հոդված՝ ճանաչելով հեղինակին և ներառելով հղումը (առանց թույլտվության): |
| | Ավարտելուց հետո ստուգեք պատասխանները հետևյալ կայքում՝ www.webwewant.eu (էջ 43): Հայտնեք ձեր արդյունքները դասարանին: Ի՞նչ նշանակություն ունի այդ արդյունքը ձեզ համար:<br>____________________<br>____________________ |

**Մաս 2.**

Արդյոք այլ անձինք կարո՞ղ են իրենց ուզածն անել ձեր ստեղծագործու-թյունների հետ:
Վերբեռնեն ձեր նյութերը:
.

Ի՞նչ տիպի նյութեր եք դուք վերբեռնում համացանց, և ի՞նչ եք զգում, որ ուրիշները կարող են ինչ ուզել անել ձեր ստեղծագործության հետ:

Վերբեռնված նյութ.

________________________________________

Ի՞նչն է ձեզ անհանգստացնում:

________________________________________

________________________________________

**Մաս 3.**

Ինչպե՞ս և որքա՞ն կարող եք պաշտպանել ձեր նյութերը:

The Creative Commons կայքը

Այցելեք Creative Commons կայքը հետևյալ հղումով՝ http://creativecommons.org/licences և պատասխանեք այն հարցերին, թե ինչ են նշանակում լոգոները, ինչ է թույլատրվում անել նյութի հետ:

Ի՞նչ է թույլատրվում անել հետևյալ լոգոներով հրապարակված նյութի հետ

(օգտագործեք ձեր սեփական բառերը, copy- paste մի արեք):

CC BY

________________________________________

CC BY ND

________________________________________

CC BY NC SA

________________________________________

CC BY NC SA

________________________________________

CC BY NC

________________________________________

CC BY NC ND

________________________________________

Հեղինակային իրավունքով չպաշտպանված ի՞նչ կայքեր է /նյութով հանդերձ/ առաջարկում Creative Commons կայքի կողմից ձեզ օգտագործման համար:

________________________________________

________________________________________

________________________________________

| **Մաս 4.** Առաջադրանքը (էջ 1) | Լսեք ձեր ուսուցչի բացատրությունն այն իրավիճակի վերաբերյալ, որի համար պետք է նյութ տրամադրեք (նա բացատրում է այն իրավիճակը, որում հայտնվել եք):<br>Ձեր գործընկերների հետ որոշեք.<br>ա. թե որ երկիրն եք ընտրում (ընտրեք ուսուցչի տրամադրած ցանկից):<br>__________<br>__________<br>բ. այժմ սկսելով առաջին տառից և առաջանալով աստիճանաբար դեպի ձեր ընտրած երկրի անվան վերջին տառը, գրի առեք այն գոյականներն ու բայերը, որը ձեր կարծիքով նկարագրում է այդ երկիրը և սկսվում այն տառով, որի վրա կանգնել եք. |
|---|---|

| 1-ին տառ | 2-րդ տառ | 3-րդ տառ | 4-րդ տառ | 5-րդ տառ | 6-րդ տառ |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

Ձեր աղբյուրը կարող է լինել www.wordreference.com-ը, եթե համացանցը մատչելի է կամ որևէ երկլեզվանի թղթային բառարան, ի վերջո հարկ չկա, որ դուք ընտրեք բարդ կամ անհասկանալի բառեր:

գ. (ա) – ի համար աշակերտ ռեպերները ղեկավարում են

ԿԱՄ անում ձայնային շնորհանդես

Գրի առեք ձեր ընտրությունը.

__________

__________

դ. Գրի առեք այն բանաստեղծությունը, որ ստեղծել եք միասին բ-ում առկա աղյուսակից և ով է ռեպ երգում, իսկ ով՝ ձայնագրում:

__________

__________

__________

__________

__________

| | |
|---|---|
| | ԿԱՄ<br>Գրի առեք այն բանաստեղծությունը, որը ռեպի տեսքով ուղեկցելու է սլայդները /ձայնային ուղեկցության դեպքում/, ով է ստեղծում և ով ներկայացնում յուրաքանչյուր սլայդը:<br>Ճանաչեք, թե որտեղից են ձեր պատկերները/երաժշտությունը/ այլ համացանցային ռեսուրսները վերցված:<br>__________<br>__________<br>__________<br>__________<br>__________<br><br>Ճանաչեք, թե որտեղից են ձեր պատկերները/երաժշտությունը/ այլ համացանցային ռեսուրսները վերցված:<br>__________<br>__________<br>__________<br>__________<br><br>ե. C.C. այն արտոնագիրը, որը լավագույնս է համապատասխանում ձեր գովազդին: Գրի առեք ձեր հիմնավորումները այդ արտոնագիրն ընտրելու համար:<br>__________<br>__________<br>__________<br>__________<br>__________<br>__________ |

# Ձեր միջի բոլոր արվեստագետները

**Գլուխ 6. Ձեր միջի արվեստագետը**

**Դասապլան. Ձեր միջի արվեստագետը! ****

**Հեղինակ.** *Ֆրանս Նյուվենհույզեն, Նիդերլանդներ*

«Անցած շաբաթ ես որոշ տեսանյութեր էի նայում Youtube-ում, երբ պատահաբար գտա մի հրաշալի երիտասարդ արվեստագետի: Նա անհավատալի ձևով թմբուկ էր խփում: Դուք պետք է դիտեք սա: Ստուգեք նրա անունը. Ավերի Մոլեկ: Նա իրականում իմ ճանաչած լավագույն արվեստագետն է»:

Սա մի տիպական խոսակցություն է, որ կարող էիք ունեցած լինել անցած շաբաթ կամ նույնիսկ այս առավոտ: Գուցե դուք հենց նոր ստուգեցիք ձեր հեռախոսը կամ համակարգիչը, թե արդյոք դա իրականություն է (ստուգեք): Արդյոք հաճա՞խ եք խոսում արվեստագետների մասին: Արդյոք ճանաչո՞ւմ եք արվեստագետի: Գրի առեք մի քանի արվեստագետի անուն, ում ճանաչում եք և թե ինչ արվեստագետներ են նրանք:

| **Անունը.** | **Ինչ արվեստագետ է** |
| --- | --- |
| | |
| | |
| | |

Գուցե այն արվեստագետների անունները, որ գրի առաք, հայտնի են ողջ աշխարհում: Արդյոք կա՞ն տեղական արվեստագետներ, ում ճանաչում եք: Գրի առեք նրանց անունները: Ի՞նչ արվեստագետներ են նրանք:

| **Անունը.** | **Ինչ արվեստագետ է** |
| --- | --- |
| | |
| | |
| | |

Միշտ հաճելի է դիտել արվեստագետներին: Բայց ինչո՞ւ է այդպես:

Ձեր ճանաչած շատ արվեստագետներ շատ յուրահատուկ են: Նրանք ունեն յուրահատուկ տաղանդ կամ շնորհ: Արդյոք դուք երբևէ երազե՞լ եք նման շնորհի ունենալու մասին: Ի՞նչ արվեստագետ կուզենայիք լինել:

Համացանցում կարող եք շատ տեղեկություններ գտնել ձեր սիրած արվեստագետի մասին: Զույգերով կոլաժ ստեղծեք ձեր սիրած արվեստագետի մասին: Կարող եք օգտվել ձեր սմարթֆոնից կամ համակարգչից:

Եթե օգտվում եք սմարթֆոնից, կարող եք օգտվել հետևյալ կիրառական ծրագրից՝

**Pic Collage.** (http://pic-collage.com/)

Եթե օգտվում եք համակարգչից, կարող եք օգտվել PowerPoint-ից, Google Presentation-ից, Prezi-ից կամ Animoto-ից: Դրանք փնտրեք համացանցում: Կոլաժներն ավարտելուց հետո ներկայացրեք դրանք մեկ այլ թիմի:

Մի պահ մտածեք «արվեստագետ» բառի մասին: Շատ բան եք արդեն գրի առել արվեստագետների մասին: Այստեղ կարող եք շատ բան գտնել «արվեստագետների» մասին: Կազմեք մեկ կամ երկու նախադասություն այստեղ գտած բառերից.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ստեղծել | եղանակ | խաղալ | բախտ | կատարել |
| աշխատել | սովորել | տաղանդ | հմտություններ | |
| սիրած զբաղմունք | | | | |

Որոնեք «Ինչպես դառնալ արվեստագետ» համացանցում: Գրի առեք առնվազն չորս բան, որ սովորեցիք «արվեստագետ դառնալու» մասին:.

______________________________

______________________________

______________________________

______________________________

**Տեղեկություններ**

Երբ օգտվում եք նկարներից, ֆիլմերից կամ ձայներից, համոզվեք, որ այդ բովանդակության աղբյուրն օրինական է և որ կարող եք օգտագործել այն ձեր կոլաժում: Երբ պատկերներ եք որոնում Google-ում, օգտվեք որոնման գործիքներից և օգտվեք «usage tools» տարբերակից: Ընտրեք համապատասխան բնութագրիչը մենյուից: Այժմ գիտեք, որ ձեր տեղեկություններն օրինական են:

**Ի՞նչ է արվեստագետը:**

**Արվեստագետը մարդ է, ով ինչ-ոչ բան է ստեղծում: Հետևաբար անպայման չէ, որ դաշնամուր նվագեք, որպեսզի լինեք արվեստագետ: Ինչպե՞ս կարող է հրուշակագործն արվեստագետ լինել, կամ այգեգործը, կամ խաղեր ծրագրավորողը:**

Հրուշակագործը______________________________

Այգեգործը.______________________________

Խաղեր ծրագրավորողը.: ______________________________

Գուցե կարող եք մտածել ևս մեկ կամ երկու զբաղմունքի մասին,
որով ևս կարելի է արվեստագետ լինել: Ներկայացրեք գաղափարներ:

______________________________

______________________________

______________________________

Երբ ձեզ դուր է գալիս երաժշտություն ստեղծագործելը, տեսանյութեր կամ լուսանկարներ ստեղծելը, շատ հեշտ է տարածել ձեր ստեղծագործությունները: Երբ ստեղծում եք ինչ-որ բան, ապա այդ բանի սեփականատերն եք: Համացանցում շատ հեշտ է տարածել բաներ, որ դուք չեք ստեղծել: Մի պահ լավ կլինի մտածեք այդ մասին: Մտեք Մեր երազած համացանցը կայքը և ներբեռնեք ձեռնարկը: Բացեք 6-րդ գլուխը, կարդացեք տեքստերը և կատարեք բոլոր վարժությունները:

Այժմ երբ գիտեք ամեն ինչ հեղինակային իրավունքի և սեփականության իրավունքի մասին, կարող եք պատասխանել հետևյալ հարցերին.

1. Ո՞րն է անօրինական:

- ☐ ա. քաշել երգեր առցանց այն ծառայություններից, որոնք ունեն պայմանագիր հեղինակային իրավունքի իրավատերերի հետ:
- ☐ բ. ներբեռնել iTunes-ից
- ☐ գ. դիտել տեսագրություն, որ մեկ ուրիշն է արել կենդանի կատարմամբ մի համերգից այն դեպքում, երբ նշված էր, որ ձայնագրություն չի թույլատրվում:
- ☐ դ. երգեր քաշել կամ ներբեռնել ծառայություններից, որոնք պայմանագրեր չունեն հեղինակային իարվունքի իրավատերերի հետ:

2. Արդյոք օրինակա՞ն է վերստին տեղադրել մի ամբողջ հոդված, թե հիշատակում եք հեղինակին և ներառում հղումը բնագրին առանց հեղինակի թույլտվության:

☐ ☐

**Արդյոք դուք նույնպե՞ս արվեստագետ եք:**

Ո՞րն է ձեր միջի արվեստագետը: Դուք շատ բան սովորեցիք արվեստագետների մասին:
Այժմ պետք է պարզաբանեք, թե ինչ արվեստագետ եք դուք: Արդյոք դուք երաժի՞շտ եք,
պարո՞ղ, թե՞ դերասան: Թե՞ սիրում եք լուսանկարել, նկարել կամ քանդակել: Թե՞ վարպետորեն
ձիավարում եք, խոհարար կամ ծրագրավորող եք: Գրի առեք ձեր տաղանդներից
մի քանիսը: Կարիք չկա, որ լինեք լավագույնը: Այս ամենը ձեր մասին է և միայն ձեր:

________________________________________

________________________________________

________________________________________

**Նկարեք «սելֆի ֆիլմ» կամ ելույթ այն մասին, թե ձեր «արվեստագիտությունն» ինչն է:**

Սելֆի ֆիլմի համար կարող եք օգտվել ձեր հեռախոսից (եթե ունեք) կամ տեսախցիկից: Կարճ տեսահոլովակ պատրաստեք ձեր մասին որպես արվեստագետի: Հիշեք. կարիք չկա, որ դուք դաշնամուր նվագեք: Եթե դուք արվեստագետ եք սպորտում, դա ևս հոյակապ է: Նկարեք ձեզ գործողության պահին: Ներբեռնեք ձեր հոլովակը YouTube և անվանեք այն «արվեստագետն իմ մեջ»: Օգտվեք YouTube-ձայնային ուղեկցումերից՝ ձեր ֆիլմին երաժշտություն ավելացնելու համար: Ելույթի համար կարող եք օգտվել վերը նշված որևէծրագրից:

Նկարների և url-ների ցանկ.

https://openclipart.org/image/300px/svg_to_png/3989/JPortugall_icon_microphone.png *(Գրանցում անհրաժեշտ չէ)*

https://openclipart.org/detail/25595/Brush-by-Andy *(Գրանցում անհրաժեշտ չէ)*

http://pixabay.com/nl/youtube-multimedia-media-buis-344105/ *(Գրանցում անհրաժեշտ չէ)*

## Փնտրո՞ւմ եք տեղեկություններ կամ խորհրդատվություն: Կապվեք Insafe-ի հետ ձեր երկրում:

**Ավստրիա** www.saferinternet.at
**Բելգիա** www.clicksafe.be
**Բուլղարիա** www.safenet.bg
**Կիպրոս** www.cyberethics.info
**Չեխիայի հանրապետություն** www.saferinternet.cz
**Էստոնիա** www.targaltinternetis.ee
**Դանիա** www.medieraadet.dk
**Ֆինլանդիա** www.meku.fi/fisic
**Ֆրանսիա** www.internetsanscrainte.fr
**Գերմանիա** www.klicksafe.de
**Հունաստան** www.saferinternet.gr
**Հունգարիա** www.saferinternet.hu
**Հայաստան** www.safe.am
**Իսլանդիա** www.saft.is
**Իռլանդիա** www.webwise.ie
**Իտալիա** www.saferinternet.it
**Լատվիա** www.drossinternets.lv
**Լիտվա** www.draugiskasinternetas.lt
**Լյուքսեմբուրգ** www.bee-secure.lu
**Մալթա** www.besmartonline.org.mt
**Նիդեռլանդներ** www.digibewust.nl
**Նորվեգիա** www.medietilsynet.no
**Լեհաստան** www.saferinternet.pl
**Պորտուգալիա** www.internetsegura.pt
**Ռումինիա** www.sigur.info
**Ռուսաստան** www.nedopusti.ru
**Սլովակիա** www.zodpovedne.sk
**Սլովենիա** www.safe.si
**Շվեդիա** www.medieradet.se
**Միացյալ Թագավորություն** www.saferinternet.org.uk

## Credits

**Ստեղծված՝**

Դպրոցների եվրոպական ցանցի հրապարակում Insafe ցանցի հետ համագործակցությամբ, Google-ին Liberty Global - ի աջակցությամբ
Ստեղծված է 2015թ

**Ձևավորումը՝** Iddifix

## Հեղինակային իրավունք

**Անուն. Մեր երազած համացանցը. Ձեռնարկ ուսուցիչների համար**

**ISBN-NUMMER :** 9789491440878

**EAN :** 9789491440878

**Հեղինակային իրավունք. Հեղինակային իրավունք. այս աշխատանքն ունի արտոնագիր՝ Creative Commons Attribution 4.0**

International (CC BY 4.0)

Works 3.0 Unported License. Նույն արտոնագրի օրինակի համար այցելեք՝
https://creativecommons.org/licenses/by/4.0/

European Schoolnet

ins@fe

Safe.am

Google

LIBERTY GLOBAL